Շաբաթօրյա դպրոցի Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ
2013 թվականի երկրորդ եռամսյակ

ՄԵԾԱՄԵԾ ԴԱՍԵՐ ՓՈՔՐ ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻՑ

«ՏԻՐՈՋԸ ՈՐՈՆԵՑԵՔ, ԵՎ ԿԵՆԴԱՆԻ ԿԼԻՆԵՔ»

Զդրավկո Ստեֆանովիչ

Բովանդակություն

Դաս 1. 30.03-05.04 Հոգևոր շնություն (Օվսե մարգարեի գիրքը)..... 4
Դաս 2. 06.04-12.04 Սեր և դատ. Աստծո երկընտրանքը (Օվսե մարգարեի գիրքը)..... 13
Դաս 3. 13.04-19.04 Սուրբ և արդար Աստված (Հովել մարգարեի գիրքը).. 22
Դաս 4. 20.04-26.04 Բոլոր ժողովուրդների Տերը (Ամովս մարգարեի գիրքը)..... 31
Դաս 5. 27.04-03.05 Տիրոջը փնտրեցեք և կենդանի կլինեք (Ամովս մարգարեի գիրքը)..... 40
Դաս 6. 04.05-10.05 Ներելու ձգտողը (Հովնան մարգարեի գիրքը)..... 49
Դաս 7. 11.05-17.05 Աստծո առանձնահատուկ ժողովուրդը (Միքիա մարգարեի գիրքը)..... 58
Դաս 8. 18.05-24.05 Ապավինելով Աստծո ողորմածությանը (Ամբակում մարգարեի գիրքը)..... 66
Դաս 9. 25.05-31.05 Տիրոջ օրը (Սոփոնիա մարգարեի գիրքը)..... 74
Դաս 10. 01.06-07.06 Առաջնահերթը՝ առաջին տեղում (Անգե մարգարեի գիրքը)..... 83
Դաս 11. 08.06-14.06 Հուսո տեսիլքներ (Զաքարիա մարգարեի գիրքը)..... 92
Դաս 12. 15.06-21.06 Երկնքի լավագույն պարգևը (Զաքարիա մարգարեի գիրքը)..... 101
Դաս 13. 22.06-28.06 Զմոռանա՛նք (Մաղաքիա մարգարեի գիրքը)..... 110

ԵՐԵՎԱՆ
2013

ԱՆԲՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ

Ինչ-որ մեկն ասել է, որ գիտակցությունը երբեք չի բավարարվում: Պատճառն այն է, որ նա բախվում է մի դաժան պարադոքսի. գիտակցությունը, որը կարող է հայեցողությամբ ընկալել հավիտենականը, բաղկացած է մահկանացու նյութից, բայց ամենավատն այն է, որ գիտակցությունը «գիտի», որ ինքը հավիտենական չէ: Մենք կմեռնենք մտածողությունից զուրկ արարածների նման: Տարբերությունն այն է, որ ոչ բանական արարածները չգիտեն այդ մասին: Սակայն մենք գիտենք դա, և դրա գիտակցումը քիչ տառապանքներ ու տանջանք չի պատճառում:

Ինչպե՞ս ենք մենք ընկել այդպիսի դժբախտության մեջ: Պատասխանն, իհարկե, մեկ բառի մեջ է՝ մեղք: Մարդիկ մեղանչում են, և այդ պատճառով մեռնում են: Սրանից ավելի պարզ պատասխան չկա:

«Սրա համար, ինչպես մեկ մարդու միջոցով մեղքը մտավ աշխարհը, և այն մեղքով էլ՝ մահը, և այսպես մահը ամեն մարդկանց վրա տարածվեց, *ըստ որում,* ամենքը մեղանչեցին» (Հռոմեացիս 5.12):

Այո՛, մարդիկ մեռնում են: Բայց խնդիրն այն է, որ մենք դրա համար չենք ստեղծված: Ի սկզբանե մարդը ստեղծվել էր հավիտյան ապրելու համար: Հետևաբար, մահն անկոչ հյուր է, դա ամենահակաբնական երևույթն է: Մենք այնպես ենք վարժվել դրան, որ մահն ընկալում ենք որպես ինքնին ենթադրվող մի բան՝ այն համարելով կյանքի մի մասը:

Մահը կյանքի մի մա՞սն է: Եթե սա հնչում է որպես անհեթեթություն և պարադոքս, ապա այն պատճառով, որ այդպես էլ կա: Մահը կյանքի դադարն է, ոչ թե նրա բաղադրիչը:

Վերն ասվածի համատեքստում էլ մենք դիտարկում ենք այս եռամսյակի դասերը: Հավանաբար, դասերի իմաստը կարելի է արտահայտել Է. Ուայթի այն հանրահայտ մեջբերմամբ, որ Աստվածաշնչի մեծագույն թեման «Աստծո աշխատանքն է, որն ամփոփվում է նրանում, որ փոշիացնի մարդկային փառքը և մարդու համար անի այն, ինչ նա ի վիճակի չէ ինքն իր համար անել» (Հավատը, որով ես ապրում եմ, 109):

Ի՞նչ է մեզ համար անում Աստված, ինչ մենք ինքներս չենք կարող անել: Իհարկե, Նա փրկում է մեզ ամենահակաբնական երևույթից՝ մահից, հավիտենական մահից, որից անհնար է խուսափել, եթե չլինի փրկության ծրագրի մեջ հայտնված Աստծո շնորհը: Այլ խոսքերով՝ մեզանից յուրաքանչյուրին առանձին և ողջ եկեղեցուն է ուղղված կոչը՝ «Տիրոջը որոնեցե՛ք, և կապրեք. որ Նա չհարձակվի կրակի պես Հովսեփի տան վրա, և այն լափի, և Բեթելը հանգցնող չունենա» (Ամոս 5.6):

Սա այն թեման է, որը մենք ուսումնասիրելու ենք. այս նյութն այն մասին է, թե ինչ է անում Աստված, ինչ մենք ինքներս չենք կարող անել մեզ համար՝ կյանքի պարգևի, Հիսուսում հավիտենական կյանքի պարգևի մասին: Սակայն մենք այդ թեման ուսումնասիրելու ենք Աստվածաշնչի այն մասի հիման վրա, որին սակավ ենք դիմում՝ Փոքր մարգարեներ, տասներկու համառոտ գրքեր, որոնցով ավարտվում է Հին կտակարանը: Այդ մարգարեները փոքր են կոչվում ոչ այն պատճառով, որ նրանք մեծ մարգարեներից պակաս կարևոր են, այլ որ նրանց գրքերը Հին կտակարանի մյուս մարգարեների գրքերի համեմատ փոքրածավալ են:

Իսկապես, ինչ էլ մենք ուսումնասիրենք՝ Օվսեի ամուսնությունը անհավատարիմ կնոջ հետ, կամ Աստծուց և իր մարգարեական կոչումից փախչելու Հովնանի փորձը, կամ թե Հեսուի և հրեշտակի մասին Զաքարիայի զարմանալի տեսիլքը, Փոքր մարգարեները հզոր լուր են հաղորդում, որը կրկին ու կրկին հաստատվում է: Դա լուր է Աստծո շնորհի մասին անարժան մեղավորների հանդեպ, լուր՝ այն մասին, որ Աստված ցանկանում է փրկել մեզ մեղքերից, փրկել այն կործանումից, որ բերում է իր հետ մեղքը, ապստամբությունն ու անհնազանդությունը: Այս գրքերում կրկին ու կրկին մենք տեսնում ենք, թե ինչպես է Տերը աղաչում Իր ժողովրդին՝ ապաշխարել, թողնել մեղքերը, դիմել Իրեն և գտնել կյանքը, ոչ թե մահը, փրկություն գտնել և ոչ թե դատապարտություն, հույս, ոչ թե հուսահատություն:

Այս թեմայի մեջ «փոքր» ոչինչ չկա: Սա ճշմարտություն է ներկա ժամանակի համար, Աստծո լուրը, որն այսօր դիմում է մեզ այնպես, ինչպես դիմում էր մարդկանց, ովքեր ապրում էին այն տասներկու գրողների ժամանակներում, ովքեր, թեև վաղուց հրաժեշտ են տվել կյանքին, սակայն դեռևս խոսում են:

Ականջալուր կլինե՞նք մենք այդ լուրին: Անկասկած, որովհետև դա կյանքի ու մահու հարց է:

Զդրավկո Ստեֆանովիչը եբրայերեն և Հին կտակարան է դասավանդում Walla Walla համալսարանում: Նրա կինը՝ Բոգանան, մաթեմատիկայի ուսուցիչ է, նրանք երկու որդի ունեն: Ընտանիքը ջերմությամբ է հիշում Արևելյան Ասիայում տասներկուամյա ծառայության օրերը:

ՀՈԳԵՎՈՐ ՇՆՈՒԹՅՈՒՆ

(ՕՎՍԵ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԸ)

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՞ք.

Օվսե 1.1-3, Եզեկիել 4.1-6, Օվսե 2.12-18, 4.1-3, Հակոբոս 5.1-7, Հայտնություն 14.6-12:

Հիշելու համարը.

«Եվ նրան պիտի սերմանեմ ինձ համար երկրի վրա և պիտի ողորմեմ չողորմյալին, և կասեմ նրան, որ իմ ժողովուրդը չէ. դու իմ ժողովուրդն ես, և նա կասի՝ Ո՛վ իմ Աստված» (Օվսե 2.23):

Հիմնական միտքը.

Անգամ չնայած հոգևոր շնությանն ու աստվածային դատաստանին՝ Իր ժողովրդի հանդեպ Աստծո սերը մնում է անփոփոխ:

Օվսե մարգարեն ապրել է Իսրայելի թագավորության պատմության ամենամռայլ ժամանակաշրջանում՝ ՔԱ 722 թվականին Ասորեստանի կողմից ժողովրդի գերեվարության նախօրեին: Այս շրջանում Աստծո ընտրյալ ժողովուրդը երկրպագում էր արդեն ոչ միայն Աստծուն, այլև ծառայում էր Բահաղին՝ քանանական աստվածությանը:

Գտնվելով Փոքր մարգարեների շարքի սկզբում՝ Օվսե մարգարեի գիրքը առաջ է քաշում այդ ուրացման ժամանակում մարգարեական լուրի կենտրոնական հարցը՝ շարունակո՞ւմ է Աստված առաջվա նման սիրել հրեա ժողովրդին՝ չնայած նրա հոգևոր շնությանը: Նա ծրագրեր ունի՞ այդ ժողովրդի վերաբերյալ՝ չնայած նրա գործած մեղքերին և գալիք դատաստանին:

Օվսեի անձնական պատմությունը և մարգարեական լուրը անխզելիորեն միահյուսված են նրա գրքում: Ճիշտ այնպես, ինչպես մարգարեն ներեց իր անհավատարիմ կնոջը և ցանկանում էր հետ ընդունել նրան, այնպես էլ Աստված է ցանկանում վարվել Իր ժողովրդի հետ:

Մենք ի՞նչ կարող ենք սովորել Օվսեի փորձառությունից և անհավատարիմ Իսրայելի հանդեպ Տիրոջ վերաբերմունքից:

Տարօրինակ հրաման

«Սկզբում Տերը Օվսեի հետ խոսելով՝ ասաց Օվսեին. Գնա՛ քեզ համար մի պոռնկության կին և պոռնկության որդիներ առ. որովհետև երկիրը բոլորովին պոռնկացել է Տիրոջ հետևից խոտորելով: Եվ նա գնաց և առավ Գաբելայիմի աղջիկ Գոմերին. և նա հղիացավ և նրա համար մի որդի ծնեց» (Օվսե 1.2,3):

Մի քանի դար շարունակ Աստվածաշնչի ուսումնասիրողները վիճում են այս հրամանի բնույթի վերաբերյալ՝ հարցնելով՝ Գոմերը պոռնի՞կ էր, թե՞ պարզապես անհավատարիմ կին: Նա շնանո՞ւմ էր մինչ Օվսեի հետ ամուսնանալը, թե՞ հետո սկսեց անհավատարիմ լինել:

Մենք ստույգ չգիտենք այդ մասին, սակայն անկասկած է մի բան. երբ Տերը խոսեց Օվսեի հետ և նրա միջոցով, Նա ցանկանում էր Օվսեի պատմության միջոցով արտահայտել Իսրայելի հանդեպ Իր սերը: Քանի որ Գոմերը իսրայելուհի էր, մարգարեի հետ նրա ամուսնության պատմությունը միանշանակ միահյուսվում է Իսրայելի հետ Աստծո ուխտի պատմությանը:

Օվսեի պատմության և հրեա ժողովրդի հետ Աստծո փոխհարաբերությունների փոխառության միջև կարևոր զուգահեռներ կան: Գոմերը մարմնով էր դավաճանում Օվսեին. Իսրայելը Աստծուն անհավատարիմ էր հոգևոր առումով: Ինչպես Գոմերի անհավատարմությունն էր խոցում նրա ամուսնու սիրտը, այնպես էլ իսրայելացիների կռապաշտությունն էր վիրավորում Տիրոջ սիրտը: Օվսեն պետք է զգար, թե ինչ է փշրված սիրտը: Նա պետք է անցներ հասարակական դժգոհության և ստորացման միջով: Բայց որքան ավելի շատ էր բախվում Գոմերի անհավատարմությանը, այնքան ավելի խորն էր հասկանում Աստծո ցավը և Նրա տառապանքը՝ այն չիրականացած այն հույսերի պատճառով, որ կապել էր Իսրայելի հետ:

Աստված Իր մարգարեներին հաճախ խնդրում էր, բացի քարոզելուց, կատարել որոշակի գործողություններ: Կարդացե՛ք առաջարկված տեքստերը և բացատրե՛ք, թե ինչպես էին մարգարեների գործողությունները ներկայացնում Իր ժողովրդի հետ Աստծո փոխհարաբերությունները (Եսայիա 20.1-6, Երեմիա 27.1-7, Եզեկիել 4.1-6): _____

_____

_____

Տիրոջ մասին ի՞նչ վկայություն են կրում ոչ միայն ձեր խոսքերը, այլ նաև արարքները: Ձեր կյանքում ի՞նչն է խոսում այն մասին, որ դուք ոչ միայն պարզապես լավ մարդ եք, այլև Հիսուսի հետևորդ:

Երկուշաբթի *ապրիլի 1*

Հոգևոր շնություն

Երբ Գոմերը դավաճանեց Օվսեին, նա վերապրեց դավաճանության, ստորացման և ամոթի տառապագին ցավը: Իր տառապանքները տեսնող հարևաններին ու բարեկամներին Օվսեն իր խոսքերով և արարքներով տանում էր աստվածային լուրն այն մասին, որ Իսրայելը՝ Աստծո կինը, Գոմերին է նման: Ընտրյալ ժողովուրդը հոգևոր շնություն էր գործում:

Երեմիա մարգարեն Աստծո անհավատարիմ ժողովրդին համեմատում էր բազմաթիվ սիրեցյալների հետ կենակցող պոռնիկի հետ, ով ում համար նշանակություն չուներ, թե իր համար ինչ էր անում Աստված (Երեմիա 3.1): Նույն կերպ Եզեկիել մարգարեն կուռքերին երկրպագող իսրայելացիներին անվանում էր ամուսնուն թողած շնացող կին (Եզեկիել 16.32): Այդ պատճառով Աստվածաշնչում կռապաշտությունը դիտվում է որպես *հոգևոր շնություն*:

Կարդացե՛ք Օվսե 2.8-13-ը: Ի՞նչ նախազգուշացում է այստեղ տրված: Ինչպե՞ս մենք՝ Յոթերորդ օրվա ադվենտիստներս, կարող ենք հայտնվել նման վտանգի առջև: _____

_____

_____

_____

«Հաց, և գինի, և յուղ» արտահայտությունը հանդիպում է նաև Երկրորդ օրինաց գրքում (Երկրորդ օրինաց 7.12-14), երբ նկարագրվում են Իսրայելում արտադրվող այն հիմնական մթերքները, որոնք մարդիկ վայելում էին առատությամբ՝ համաձայն Աստծո խոստման, որ տրվել էր Մովսեսի միջոցով: Օվսեի ժամանակներում մարդիկ այնքան անշնորհակալ գտնվեցին, այնքան էին կլանված շրջապատող աշխարհով, որ Աստծո շնորհած այդ պարգևները մատուցում էին իրենց կեղծ աստվածներին: Սա պետք է որպես նախազգուշացում ծառայի բոլորիս համար, որ այն ամենը, ինչ Աստված պարգևել է, պետք է օգտագործվի Նրան ծառայելու մեջ իր նշանակությանը համապատասխան, և ոչ այլ կերպ (Մատթեոս 6.24):

«Աստված ինչպե՞ս է գնահատում մեր երախտամոռությունը և այն, որ մենք թերագնահատում ենք Նրա օրհնությունները: Երբ մենք տեսնում ենք, որ ինչ-որ մեկը թեթևամտորեն կամ սխալ է վերաբերվում մեր պարգևներին, մեր սրտերն ու ձեռքերը փակվում են այդպիսի մարդու առաջ: Սակայն նրանք, ովքեր օրեցօր ու տարեցտարի ստանում են Աստծո ողորմած պարգևները, սխալ են տնօրինում Նրա առատաձեռնությունը և անտեսում այն հոգիներին, ում համար Քրիստոն Իր կյանքն է տվել: Միջոցները, որոնք Նա զիջել է նրանց, որպեսզի առաջընթաց ապրի Իր գործը և մոտենա Իր արքայությունը, վատնվում են տների և հողամասերի վրա՝ խրախուսելով հպարտությունն ու տուրք տալով քմահաճույքներին, այն դեպքում, երբ Տվողը մնում է մոռացված» (Է. Ուայթ, Advent Review and Sabbath Herald, դեկտեմբերի 7, 1886 թ.):

Մտորե՛ք այն մասին, թե որքա՞ն հեշտ է՝ վերցնել Աստծո կողմից ձեզ պարգևվածը և այդ պարգևներն օգտագործել եսասիրաբար, կամ էլ անգամ՝ կռապաշտների նման: Գործնականում ինչպե՞ս կարելի է մեր կյանքում կանխել այդ մեղքը:

Երեքշաբթի ***ապրիլի 2***

Վերականգնման խոսքում

Կարդացե՛ք Օվսե 2-ը: Այստեղ Աստված ի՞նչ է ասում Իր ժողովրդին: Այս գլխում ինչպե՞ս է բացահայտվում Ավետարանը:

_____

_____

_____

_____

Օվսեի լուրը պատմում է անարժան ժողովրդի հանդեպ Աստծո անփոփոխ սիրո մասին: Օվսե 2-ում գրի է առնված Տիրոջ խոսքը, որը վերաբերում է Իսրայելի ուրացմանը, որը հետո հակադրվում է Իր ժողովրդի հանդեպ Տիրոջ անփոփոխ սիրուն: Պատժից հետո ամուսինը կնոջը կտանի անապատ (հմ. 14), որտեղ նրանք կնորոգեն իրենց ամուսնությունը (հմ. 19, 20):

Այսպիսով, գլուխն ավարտվում է ապագա ժամանակի պատկերով, երբ դատաստանից հետո Աստված կամուսնանա Իսրայելի հետ, որը առաջվա նման կսիրի Նրան (Օվսե 2.12-15,19): Դաշտի վայրի գազաններն արդեն չեն ամայացնելու կնոջ խաղողի ու թզենու այգիները, այլ դառնալու են նոր միության մասնակիցները (Օվսե 2.18): Ավելին, բոլոր

երեխաները պետք է վերանվանվեն՝ կրկին հայտնելով Իր ժողովրդի անցյալ մեղքերը բժշկելու և ներելու Աստծո ցանկությունը:

Աստված անհատույց առաջարկում է մեզ մեղքերի թողություն: Աստված ի՞նչ գին է վճարել, որպեսզի ների մեզ: Տրված դասի համար ի՞նչ գին ստիպված եղավ վճարել Օվսեն: Օվսե 3.1,1: _____

_____

_____

_____

_____

Արու զավակ ծնված լինելով Իսրայելում՝ Օվսեն պետք է վայելեր այդ նահապետական հասարակության մեջ իր կարգավիճակի բոլոր արտոնությունները: Բայց այդ արտոնությունն իր հետ բերում էր նաև մեծ պատասխանատվություն: Տղամարդը հին Իսրայելում պետք է անհավատալի ջանքեր գործադրեր՝ ընդունելու անհավատարիմ կնոջը, էլ չխոսենք այն երեխաներին որպես սեփականը ընդունելու մասին, ովքեր կարող էին ծնված չլինել այլ տղամարդուց: Աջակցելը իր կնոջը և նրա երեխաներին և, հետևաբար, հանրության կողմից մերժված լինելն իր վրա ընդունելը կարող էր լինել ամենաբարդ փորձություններից մեկը:

Եվ, այնուամենայնիվ, Օվսեն *փրկագնեց* նրան: Որոշակի իմաստով Աստված նույնն արեց մարդկության համար, բայց գինը դարձավ խաչի վրա Հիսուսի մահը: Այդ պատճառով միայն խաչին նայելով է, որ մենք կարող ենք հասկանալ, թե Աստծո համար ինչ է արժեցել կործանումից մեր *փրկագնումը*, որի պատճառը մեղքն է (տե՛ս Ա Պետրոս 1.18,19):

Չորեքշաբթի ***ապրիլի 3***

Իսրայելի դեմ գործը

Օվսե 4.1-3-ը ներկայացնում է Աստծուն որպես Իսրայելի դեմ մեղադրանք ներկայացնող և նրա հետ իրավական վեճ վարող (եբրայերեն «ռիբ»): Ընտրյալ ժողովուրդը իբրև մեղավոր կանգնած է իր Աստծո առջև, քանի որ չի կատարել ուխտի պայմանները: Ճշմարտությունը, գթասրտությունն ու աստվածաճանաչությունը պետք է հատկանշական լինեին Աստծո հետ Իսրայելի եզակի փոխհարաբերություններին: Համաձայն Օվսե 2.18-20-ի՝ սրանք այն պարգևներն են, որոնք Աստված ուղարկում է Իր ժողովրդին ուխտի նորոգման ժամանակ:

Սակայն մեղքի պատճառով հրեա ժողովուրդը զրկվել էր շնորհի այս պարգևներից: Օվսեի թվարկած հանցագործությունները ժողովրդ-

դին հասցրել էին անիշխանության: Կրոնական առաջնորդները, քահանաներն ու մարգարեները պատասխանատու էին ժողովրդի կյանքում տեղի ունեցող ամեն բանի համար: Դա ծանր պատասխանատվություն էր: Երբ նրանք չէին դիմակայում մեղքերին և չէին դատապարտում անօրենությունը, իրենք էին կրում Աստծո պատիժը:

Հին կտակարանում կուռքերին երկրպագելը համարվում էր ամենալուրջ մեղքը, քանի որ դրանով իսկ հերքվում էր ողջ ժողովրդի և յուրաքանչյուր առանձին մարդու կյանքում Աստծո դերը: Չոր կլիմայի պատճառով անձրևները Իսրայել երկրում կենաց ու մահու հարց էին: Իսրայելացիներն սկսեցին հավատալ, որ իրենց օրհնությունները, օրինակ՝ անձրևը, որը անհրաժեշտ է կյանքի համար, բխում էին Բահաղից: Այդ պատճառով նրանք տաճար կառուցեցին հեթանոսական աստվածների համար և սկսեցին անբարոյականությունը խառնել կուռքերին երկրպագելու հետ:

Միևնույն ժամանակ նրանց երկրում լայնորեն տարածվեց սոցիալական անարդարությունը: Իսրայելի հարուստ դասակարգերը շահագործում էին հողագործներին՝ Ասորեստանի հարկը վճարելու համար: Շատերը խարդախություն էին անում և դիմում էին մեքենայություններին (Օվսե 12.7,8): Այդ պատճառով խաղաղության և բարգավաճման ժամանակահատվածը փոխարինվեց քաղաքական և սոցիալական հուզումների ժամանակներով: Երկիրը գտնվում էր կատարյալ քաոսի սահմանագծին:

«Դժբախտ հարուստները, ովքեր համարում են, թե ծառայում են Աստծուն, արժանի են կարեկցանքի: Պնդելով, թե ճանաչում են Աստծուն, նրանք ուրանում են Նրան իրենց գործերով: Ի՜նչ սոսկալի խավարի մեջ են այդ մարդիկ: Նրանք հայտարարում են ճշմարտության հանդեպ իրենց հավատի մասին, բայց նրանց գործերը դա չեն հաստատում: Հարստության սերը մարդուն դարձնում է եսասեր, պահանջկոտ և իշխանատենչ: Հարստությունը իշխանություն է, և հաճախ դրա հանդեպ սերը արատավորում է հոգին և կաթվածահար անում այն ամեն ազնիվն ու աստվածայինը, ինչ կա մարդու մեջ» (Է. Ուայթ, Վկայություններ եկեղեցու համար, հտ. 2, 682):

Կարդացե՛ք Հակոբոս 5.1-7-ը: Այս բառերն ինչպե՞ս են համապատասխանում ներկա ժամանակի ճշմարտությանը, որն արտահայտված է երեք հրեշտակների պատգամի մեջ (Հայտնություն 14.6-12): Անկախ մեր նյութական դրությունից՝ մենք ինչպե՞ս կարող ենք մեզ պաշտպանել այն վտանգից, որ միշտ ներկայացնում է փողը Քրիստոսի հետևորդների համար:

Ապաշխարության կոչ

«Եվ սա է հավիտենական կյանքը, որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստված, և նրան, որ ուղարկեցիր՝ Հիսուս Քրիստոսին» (Հովհաննես 17.3):

Օվսե անունը հին եբրայերենում նշանակում է «Յահվեն փրկեց» և համահունչ է այնպիսի անունների, ինչպես Հեսուն և Եսայիան: Մարգարեն ժողովրդին կոչ է անում երես դարձնել մեղքից և ապաստան գտնել Տեր Աստծո՝ իրենց Արարչի ու Փրկչի մեջ: Աստվածային դատաստանի նպատակն էր հիշեցնել մեղավորներին, որ իրենց կյանքն ու զորությունը բխում են Նրանից, ում իրենք պետք է դիմեն: Այսպիսով, անգամ բոլոր նախազգուշացումների ու դատաստանների համատեքստում Օվսեի գիրքը նաև ներկայացնում է մարդկային ապաշխարության և աստվածային ներման թեման:

Մարգարեն դրդում է «գիտություն չլինելու համար բնաջնջվող» ժողովրդին (Օվսե 4.6)՝ շտապել ավելի լավ ճանաչել Աստծուն և ապրել Նրա հավերժական սկզբունքներին ներդաշնակ: Հենց Աստծո գիտության անբավարարությունն է, որ ժողովրդին հասցրել էր Տիրոջը ուրանալուն և վերջին հաշվով ավարտվեց դատաստանով:

Ի տարբերություն սրա՝ հավատն ու հնազանդությունը կարող էին նրանց բերել Տիրոջ ճանաչմանը: Այդ գիտությունը կարող է շատ սերտ ու անձնական լինել: Հենց այդ պատճառով է, որ ամուսնությունն այդքան հաճախ է ծառայում իբրև խորհրդանիշ այն փոխհարաբերությունների, որոնք Տերը ցանկանում է կառուցել մեզ հետ:

Այդ նույն պատճառով քրիստոնեական կյանքը առաջին հերթին փոխհարաբերություն է կենդանի Աստծո հետ: Տերը մարդկանց կոչ է անում ճանաչել Իրեն և իրենց կյանքում հետևել Իր կամքին:

Մեղքը բաժանում մտցրեց Աստծո և մարդկության միջև: Բայց խաչի վրա Հիսուսի մահվան շնորհիվ մեզանից յուրաքանչյուրին հնարավորություն է տրված սերտ փոխհարաբերություններ ունենալ Տիրոջ հետ: Մենք իսկապես կարող ենք անձամբ ճանաչել Նրան:

Ո՞րն է Աստծո մասին իմանալու և Աստծուն ճանաչելու տարբերությունը: Այդ տարբերությունն ինչպե՞ս է արտացոլվում մեր առօրյա կյանքում: Դուք ի՞նչ կպատասխանեիք, եթե ինչ-որ մեկը հարցներ ձեզ՝ ինչպե՞ս կարող եմ հասնել Աստծո ճանաչությանը:

Ստորև բերված հատվածներն ի՞նչ են ասում Տիրոջը ճանաչելու կարևորության մասին:

Ելից 33.12,13 _____

Երեմիա 9.23,24 _____

Դանիել 11.32 _____

Ա Հովհաննես 2.4 _____

Ուրբաթ ***ապրիլի 5***

Հետագա ուսումնասիրության համար

«Օվսեն ժամանակի ընթացքում սկսեց գիտակցել այն փաստը, որ իր անձնական ճակատագիրը Աստծո տառապանքի հայելին էր, Նրա ցավի արձագանքը: Իր մարդկային տանջանքի մեջ կարեկցելով Աստծո տառապանքին՝ մարգարեն, հնարավոր է, տեսավ աստվածային ցուցումով կնքած ամուսնության իմաստը…

Միայն սեփական կյանքում վերապրելով այն, ինչ զգում էր Իսրայելի աստվածային Ամուսինը, մարգարեն ընդունակ կլիներ կարեկցել այն իրավիճակին, որում գտնվում էր Աստված: Այդ ամուսնությունը ավելի շուտ դաս էր, լուսաբանում, քան խորհրդանիշ կամ խորհուրդ» (Abraham J. Heschel, The Prophets (Mass.: Prince Press, 2001), 56):

«Խորհրդանշական լեզվով Օվսեն տասը ցեղերի առջև շարադրում է յուրաքանչյուր դարձի եկած հոգու վերականգնման աստվածային ծրագիրը, ով կմիանա Իր եկեղեցուն երկրի վրա՝ հիշեցնելով այն օրհնությունների մասին, որոնք տրվել էին Իսրայելին՝ ավետյաց երկրում Աստծուն իրենց հավատարիմ ծառայության օրերին: Մատնացույց անելով Իսրայելին՝ որպես նա, ում հանդեպ Նա այնպե՜ս ծարավի էր հայտնել Իր գթասրտությունը, Տերն ասում է. «Սրա համար ահա Ես նրան կհամոզեմ, և նրան կտանեմ անապատը, և կխոսեմ նրա սրտի հետ: Եվ Ես կտամ նրան իր այգիները այնտեղից, և Աքովրի ձորը իբրև հույսի դուռ, և նա կպատասխանի այնտեղ իր մանկության օրերի պես և իր՝ Եգիպտոսի երկրից դուրս գալու օրվա նման» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 298):

Հարցեր քննարկման համար

1. Մենք հակված ենք մտածելու կռապաշտության մասին,՝ որպես երկրորդագություն ինչ-որ արձանի: Ի՞նչ ձևով կարող է կռապաշտությունն առավել նուրբ ու խաբուսիկ մի բան լինել:

2. Ավելի շատ խոսեք Աստծուն ճանաչելու մասին: Դուք ի՞նչ նկատի ունեք, երբ ասում եք, թե ճանաչում եք Աստծուն: Ինչպե՞ս է ձեռք բերվում այդ ճանաչումը:
3. Որոշ հին աստվածաբաններ պնդում էին, թե Աստված անզգացմունքփ է, այսինքն՝ որ Նա ցավ կամ ուրախություն չի զգում այլ արարածների, օրինակ՝ մարդկանց արարքների պատճառով: Ի՞նչն էր այդպիսի դիրքորոշման պատճառը: Մենք ինչո՞ւ չենք կարող համաձայնել դրան:
4. Եվս մեկ անգամ խորհեցե՛ք մեր փրկագնման մասին: Դա մեզ ի՞նչ է ասում այն մասին, թե որքան արժեքավոր ենք մենք Աստծո համար:

ՍԵՐ ԵՎ ԴԱՏ. ԱՍՏԾՈ ԵՐԿԸՆՏՐԱՆՔԸ

(ՕՎՍԵ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԸ)

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Օվսե 7.11,12, 10.11-13, Մատթեոս 11.28-30, Հռոմեացիս 5.8, Ա Պետրոս 2.24, Օվսե 14:

Հիշելու համարը.

«Եվ դու քո Աստծուն դարձիր, ողորմություն և իրավունք պահիր, և քո Աստծուն հուսա միշտ» (Օվսե 12.7):

Հիմնական միտքը.

Օվսեն շարունակում է Աստծո սերը բացահայտել իր ժողովրդին:

Խոսելով սիրո փոխհարաբերությունների մասին, որոնք Աստված ցանկանում է ունենալ Իր ժողովրդի հետ, աստվածաշնչյան հեղինակները սովորաբար դիմում էին այլաբանությունների: Այլաբանությունն առավել ամբողջությամբ արտահայտում այն, ինչ մինչև վերջ հասկանալի չէ՝ օգտագործելով ինչ-որ հանրահայտ կամ հանրածանոթ բան: Այլաբանությունը պատկերավոր արտահայտություն կամ հասկացություն է, որն օգտագործվում է փոխաբերական իմաստով:

Աստծո և Նրա ժողովրդի միջև փոխհարաբերությունների հետ կապված երկու ամենատարածված աստվածաշնչյան այլաբանությունները *ամուսին - կին* և *ծնող - զավակ* այլաբանություններն են: Անցյալ շաբաթ մենք ուսումնասիրեցինք *ամուսին - կին* այլաբանությունը: Այս շաբաթ մենք կտեսնենք Օվսեի որոշ այլ այլաբանություններ, որոնց մեջ գերակշռող է, իհարկե, *հայր - զավակ* այլաբանությունը:

Օվսեն այլաբանությունների դիմում էր այն նույն պատճառով, ինչ և Հիսուսը, ով սովորեցնում էր առակներով. նախ՝ որպեսզի Աստծո մասին ճշմարտությունները բացատրի բոլորին ծանոթ առարկաների միջոցով, երկրորդը՝ որպեսզի մարդկանց գիտակցության մեջ տպավորի կարևոր հոգևոր սկզբունքները, որոնք հարկավոր է կիրառել առօրյա կյանքում:

Հեշտությամբ խաբվածներն ու անմիտները

«Եվ Եփրեմը եղել է մի միամիտ աղավնու պես՝ անխելք. եգիպտացիներին են կանչել, Ասորեստան են գնում: Հենց որ նրանք գնացին, ես իմ վարմը պիտի տարածեմ նրանց վրա, նրանց պիտի իջեցնեմ երկնքի թռչունի պես, և նրանց պիտի պատժեմ՝ ինչպես որ լուր է տրվել նրանց ժողովքին» (Օվսե 7.11,12): Այս համարները կարդացե՛ք դրանց մոտակա համատեքստում: Ի՞նչ նախազգուշացում է այստեղ տրված: Մենք այս համարներից ի՞նչ սկզբունք կարող ենք քաղել մեզ համար: _____

_____

_____

Եփրեմը Հովսեփի՝ Հակոբի սիրելի որդու կրտսեր որդին էր: Քանի որ Եփրեմի ցեղը գլխավորն էր Հյուսիսային թագավորության մեջ՝ Իսրայելում, այդ անվամբ սկսեցին անվանել ողջ Հյուսիսային թագավորությունը, ճիշտ այնպես, ինչպես Հարավային թագավորությունն սկսեցին անվանել Հուդայի անունով: Վերը բերված համարներում Իսրայելը համեմատվում է անմիտ աղավնու հետ (*հմմտ. Երեմիա 5.21*), որը հեշտ որս է դառնում թռչնորսի ցանցերում: Տվյալ համատեքստում մյուս ազգերին հուսալը դիտվում է որպես ապստամբություն Աստծո դեմ:

Ինչո՞ւ: Որովհետև մեծազոր Ասորական կայսրության կամ հավակնոտ Եգիպտոսի հետ միությունը ենթադրում էր, որ իսրայելացիները կընդունեն այն աստվածների առավելությունը, որոնց երկրպագում էին այդ երկու խոշոր պետությունները (*տե՛ս Եսայիա 52.4, Երեմիայի ողբ 5.1-6*): Նրանց մոտ գնալը նշանակում էր երես թեքել Տիրոջից: Իսկ Իսրայելին պետք էր, հակառակը, *վերադառնալ* Տիրոջը, ապաշխարել, ենթարկվել Նրա պատվիրաններին և թողնել իրենց սուտ աստվածներին: Հենց սա էր նրա *միակ* հույսը, և ոչ թե հեթանոսների հետ քաղաքական միությունը:

«Պաղեստինի աշխարհագրական դիրքն ինքնին այն խոցելի էր դարձնում այդ երկու հին կայսրությունների զինված ներխուժման դեմ… Հատկապես ցանկալի թիրախ, որի համար պայքարում էին, մի ճանապարհ, որը միացնում էր Նեղոսի ու Եփրատի հարուստ ավազանները: Իսրայելի և Հուդայի թագավորությունները դարձել էին այդ միջազգային պայքարի պատանդները՝ սեղմված լինելով երկու հակառակորդների միջև: Հուսահատված, հոգևորապես չհուսալով իր Աստծուն՝ Իսրայելն

անմտությամբ դիմում էր սկզբում մեկ, ապա նաև մյուս թագավորությանը՝ որոնելով աջակցություն, որը կարող էր, սակայն, թակարդ դառնալ իր իսկ ազգային բարեկեցության համար» (Է. Ուայթ, ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հտ. 4, 908):

Անհամեմատ ավելի հեշտ է խնդիրների լուծման մեջ մարդկային օգնություն որոնելը՝ Տիրոջը փնտրելու փոխարեն, այնպես չէ՞: Իհարկե, Տերը կարող է օգտագործել մարդկանց՝ պատասխանելով մեր աղոթքներին: Մենք ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ հուսահատ իրադրության և կարիքի մեջ չենք կրկնի այն նույն սխալը, ինչ և Իսրայելը: Ինչպե՞ս դիմել մարդու օգնությանը՝ միևնույն ժամանակ երես չդարձնելով Տիրոջից:

Երկուշաբթի ***ապրիլի 8***

Վարժեցված երինջը

Կարդացե՛ք Օվսե 10.11-13-ը: Այստեղ Տերն ի՞նչ լուր է հռչակում Իր ժողովրդին: Մենք ինչպե՞ս ենք հասկանում «մինչև որ ինքը գա և արդարություն տեղա ձեզ վրա» դարձվածքը: _____

_____

_____

_____

Օվսե 10-ում Աստծո զավակ Եփրեմը համեմատվում է վարժեցված երինջի հետ, որը սիրում է ցորեն կալսել, որովհետև կարող է կալսելու ժամանակ ուտել: Այդպիսով, արդյունավետ լինելու փոխարեն Իսրայելը դարձել էր եսակենտրոն: Երբ Աստված «լուծ» դնի Իսրայելի վրա, որպեսզի նա աշխատի նոր դաշտերում, ինչը և հասնում է այդ ժողովրդին, այդ ժամանակ կմեծանան արդարությունն ու ողորմությունը:

Աստվածաշնչյան ժամանակներում լուծն աշխատանքի գործիք էր: Երիտասարդ կենդանիները, որոնք կարող էին բեռ քաշել, սկզբում վարժեցվում էին՝ ամբարներում աշխատելու համար (*Երեմիա 50.11*)*: Լծված լինելով՝ նրանք պարզապես տրորում էին ցորենը: Վարժեցնելու հաջորդ փուլում նրանք կալսիչը քաշում էին ցորենի վրայով (Ա Մնացորդաց 21.20): Այդպիսի աշխատանքը նրանց նախապատրաստում էր հողը հերկելու առավել բարդ խնդրին (Գ Թագավորաց 19.19, Երեմիա 4.3): Աստված Իսրայելին վարժեցնելու համանման ծրագիր ուներ: Նա լուծ

* Այլ թարգմանության մեջ՝ «կալսող երինջ»:

կդնի Եփրեմի ճարպոտ պարանոցին, որպեսզի նա ծանր աշխատանք կատարի՝ վարելով և հերկելով հողը:

Օվսե 10.12-ում մարգարեն ցույց է տալիս, թե Տերն ինչպիսին է ցանկանում տեսնել Իսրայելը՝ Իր Խոսքին ունկնդրելու շնորհիվ: Արդարությունն ու ուժեղ սերը այն պարգևներն են, որոնք Աստված խոստանում է Իր կնոջը՝ ուխտի նորոգման դեպքում (Օվսե 2.19): Եթե մարդիկ արդարություն են սերմում, արդյունքում ողորմություն կհնձեն: Իսրայելը կարող է ազատվել վերահաս պատժից միայն Տիրոջը և Նրա կամքը որոնելով: Շնորհի դուռը դեռևս բաց է Աստծո ընտրյալ ժողովրդի հնարավոր ապաշխարության համար:

Արդարություն ցանելու խորհուրդը վերաբերում է մարդկանց միջև փոխհարաբերություններին, Աստծուն որոնելու խորհուրդը՝ Աստծո և Իր ժողովրդի միջև փոխհարաբերություններին: Հողը հերկելն իրենից ներկայացնում է հոգևոր ու սոցիալական բարենորոգումն ու վերածնունդը: Տերն ու Իր ժողովուրդը աշխատելու են միասին՝ երկրին վերադարձնելու համար օրհնությունը: Իսկ արդյունքը կլինի փառավոր արշալույսը, որն իրենով կլցնի ողջ երկիրը (Օվսե 14.5-7):

Կարդացե՛ք Քրիստոսի հրավերը՝ առնել Իր լուծը (Մատթեոս 11.28-30): Մենք ինչպե՞ս կարող ենք Քրիստոսից սովորել խոնարհություն և հեզություն, և ինչպե՞ս դա կօգնի մեզ՝ հանգիստ գտնել մեր հոգիների համար:

Երեքշաբթի ***ապրիլի 9***

Որդին, ում սովորեցնում են քայլել

«Երբ մանուկ էր Իսրայելը, ես սիրում էի նրան, և Եգիպտոսից կանչեցի իմ որդուն:... Բայց ես քայլեցրի Եփրեմին, նրանց բռնում էի իրենց բազուկներից, սակայն չիմացան, որ ես եմ բժշկում նրանց» (Օվսե 11.1,3):

Այս համարներում Օվսեն ասում է, որ Տերը Իսրայելը շրջապատել է երիտասարդ ծնողի քնքուշ հոգատարությամբ: Ինչպես ծնողը քնքշանքով ու համբերությամբ երեխային քայլել է սովորեցնում, այդպես էլ Տերն ի սկզբանե հոգում էր Իսրայելի համար: Սիրող և ներող Աստված գտնվում է Օվսեի լուրի կենտրոնում: Անգամ պատժելով՝ Նա խորապես կարեկցում է: Նրա ցասումը կարող է սոսկալի լինել, բայց Նրա սերն անընմբռնելի է:

Կարդացե՛ք երկրորդ օրինաց 8.5-ը, Առակաց 13.24-ը, Եբրա-

յեցիս 12.6-ը և Հայտնություն 3.19-ը: Ընդհանուր ի՞նչ կա այս համարների միջև: Մենք ի՞նչ մխիթարություն կարող ենք գտնել դրանցում: _____

_____

_____

Մովսեսի միջոցով Աստված եգիպտական թագավորին հայտնեց այն մասին, որ Իսրայելը Իր առանձնահատուկ զավակն է (*Ելից 4.22, 23*): Թեև երկրի բոլոր ազգերը, ներառյալ եգիպտացիները, Աստծո որդիներն ու դուստրերն էին, հրեա ժողովուրդն ընտրվել էր՝ դառնալու Աստծո առաջնեկ որդին և ուներ հատուկ արտոնություններ: Բայց արտոնությունների հետ մեկտեղ այդ ժողովրդի վրա նաև պատասխանատվություն էր դրված: Անապատում Տերը տանում էր Իր ժողովրդին այնպես, «ինչպես մի մարդ իր որդուն տանում է» (Երկրորդ օրինաց 1.31): Ժամանակ առ ժամանակ Նա նրանց սովորեցնում էր ճիշտ այնպես, «ինչպես մի մարդ կխրատի իր որդուն» (Երկրորդ օրինաց 8.5):

«Ամեն մարդ, ով հավատարմորեն ծառայում է Աստծուն կամ մարդուն, պատրաստվում է տառապանքների դպրոցում: Որքան ավելի մեծ է վստահությունը, և որքան ավելի պատասխանատու է ծառայությունը, այնքան ավելի դժվարին է փորձությունը, և այնքան ավելի խիստ է դաստիարակությունը» (Է. Ուայթ, Դաստիարակություն, 151):

Հասկանալի է, որ իր զավակներին սիրող ցանկացած ծնող կդաստիարակի նրանց՝ նրանց իսկ բարօրության համար: Եթե դա անում են վատաբարո և ընկած մարդիկ, ապա որքա՜ն ավելի մենք պետք է վստահենք մեր հանդեպ ունեցած Աստծո սիրուն՝ անգամ փորձությունների ժամանակ:

Մեզանից շատերի համար խնդիրը ոչ թե Աստծո դաստիարակությանը վստահելն է, այլ այն, թե ինչպես բացատրել մեր ճանապարհին հանդիպող փորձությունները: Մենք ինչպե՞ս իմանանք, թե այն, ինչի միջով անցնում ենք, Աստծո դաստիարակությո՞ւնն է «տառապանքի դպրոցում», թե՞ ինչ-որ այլ բան: Ձեր պատասխաններով կիսվե՛ք շաբաթ օրը:

Չորեքշաբթի ***ապրիլի 10***

Կարեկցանքը ցասումից զորեղ է

«Ես քեզ ինչպե՞ս թողնեմ, ո՛վ Եփրեմ, և քեզ հանձնե՞մ, ո՛վ Իսրայել: Ես քեզ ինչպե՞ս Ադմայի պես անեմ, Սեբոյիմի պես շինե՞մ.

գալարվում է սիրտս ինձանում, միանգամայն քրքրվել է կարեկցությունս: Ես չեմ գործադրել իմ բորբոքված բարկությունը, կրկին չեմ ավերել Եփրեմին, որովհետև ես Աստված եմ և ոչ թե մարդ. քո մեջ Սուրբ եմ, ես չեմ գա գրգռմունքով» (Օվսե 11.8,9): ___

Այս հատվածը նման է լուսամուտի, որի միջոցով կարելի է տեսնել Աստծո սրտի խորքը. արդյոք թույլ կտա՞ Իր անհնազանդ որդուն քարկոծելով մահապատժի ենթարկեն՝ քարկոծելով, ինչպես դա պահանջում է օրենքը (*Երկրորդ օրինաց 21.18-21, տե՛ս նաև Ծննդոց 19.17-23*): Ինչպիսի՜ զարմանալի ներթափանցում ինչպես մարդկային մեղքի պատճառով Աստծո տառապանքների, այնպես էլ մեզ փրկելու Նրա ցանկության էության մեջ:

Չնայելով այն բանին, որ մեղավոր Իսրայելը արժանի էր կատարյալ բնաջնջման, Տերն Իր մեծ ողորմությամբ շարունակում է սիրել Իր ժողովրդին և ջանում նրան բերել ապաշխարության:

Աբրահամի ժամանակներում Հորդանանի հովտում՝ Մեռյալ ծովից դեպի հարավ-արևելք, հինգ քաղաք կար (Ծննդոց 14.8): Դրանք էին Սոդոմը, Գոմորը, Ադաման, Սեբոյիմը և Սեգորը, որոնք հայտնի էին որպես «դաշտի քաղաքներ»: Դրանցից չբնաջնջվեց միայն Սեգորը: Մյուս չորս քաղաքները դարձան հասարակ անուններ և ցույց էին տալիս այն կատարյալ ոչնչացումը, որ վրա հասավ նրանց՝ ամբարշտության և ապաշխարել չցանկանալու պատճառով (Երկրորդ օրինաց 29.23): Վերը բերված համարներում Օվսեն նույնպես հղում է ուղարկում այդ քաղաքներից մի քանիսին:

Օվսեի 11-րդ գլուխը սովորեցնում է, որ Աստծո ճանապարհները գերազանցում են մեղավոր մարդու ճանապարհներին: Նա թույլ չի տա, որ ցավն ու տառապանքն ազդեն Իր կողմից ընդունվող որոշումների վրա: Աստծո սերը ձգտում է Իր ժողովրդին պարգևել ապաքինում, առողջություն և վերականգնում: Աստվածային պատժի նպատակն է՝ ուղղել, կատարելագործել և հաշտեցնել, այլ ոչ թե բնաջնջել և վրեժ լուծել: Անգամ քրիստոնյաների մեջ շատ մարդիկ չեն ըմբռնում աստվածության այս տեսակետը: Աստծուն նրանք տեսնում են վրեժխնդիր և չար, որ սխալներ է որոնում պատժելու համար: Սակայն այստեղ ներկայացված է մեկ այլ Աստված:

Կարդացե՛ք Հռոմեացիս 5.8-ը, Ա Պետրոս 2.24-ը և Գաղատացիս 3.13-ը: Ինչպե՞ս են այս համարները, առավել լիակատարությամբ,

քան մենք կարդացել ենք Օվսեի գրքում, բացահայտում մարդու հանդեպ Աստծո սիրո անսահմանությունը: _____

_____

_____

Հինգշաբթի *ապրիլի 11*

Բժշկվածները, սիրվածները և սնվողները

Որոշ հին ուսումնասիրողներ Հին կտակարանում ներկայացված Տիրոջը համարում էին դաժան ու անողոք՝ ի տարբերություն Նոր կտակարանում ներկայացված Հիսուսի: Ինչո՞ւ է այդպիսի եզրակացությունը սխալ: Ինչպե՞ս է Օվսե մարգարեի գրքի 14-րդ գլխի լուրն օգնում տեսնել, թե որքանով է թյուր նման եզրակացությունը: Այս գլուխն ի՞նչ է վկայում Աստծո բնավորության և Իր ժողովրդի հանդեպ Նրա սիրո մասին: _____

_____

_____

_____

Օվսե մարգարեի գրքի վերջին գլուխն իրենից ներկայացնում է հռչակվող լուրի գագաթնակետը: Այն կրկին հաստատում է խոստումը, որ Աստծո փրկությունը կհաղթանակի: Գլուխն սկսվում է անօրենությունը թողնելու ևս մեկ կոչով: Մարդկանց առաջարկելով վերադառնալ Աստծուն՝ մարգարեն բերում է այն խոսքերը, որոնք նրանք պետք է ասեն աղոթքի մեջ: Նրանք պետք է Աստծուն խնդրեն հեռացնել իրենց անօրենությունը, որը հանգեցրել է իրենց անկմանը: Նրանք նաև պետք է դադարեն հուսալ այլ ազգերի և լիովին մերժեն կռապաշտությունը: Աստվածաշնչյան ժամանակներում ոչ մի մարդ չպետք է Աստծո մոտ գար դատարկ ձեռքով (Ելից 23.15): Բացի կենդանիներ զոհաբերելուց՝ ժողովրդից ակնկալվում էր ճշմարիտ ապաշխարություն՝ որպես շնորհակալական ընծա:

Ի պատասխան ժողովրդի ապաշխարության՝ հետո Աստված տալիս է մի շարք խոստումներ: Ամենից առաջ աստվածային Բժիշկը կապաքինի ժողովրդի հիվանդությունները: Իսրայելի հետ Աստծո նորոգված փոխհարաբերությունները համեմատվում են ցողի՝ Պաղեստինում երկարատև, երաշտային ամառվա ընթացքում ծաղիկներն ու ծառերը ոռոգող միակ խոնավության հետ: Նրանք համեմատվում են նաև ձիթենու հետ, որը հատկապես արժեքավոր է և համարվում՝ պտղատու ծառերի

«արքան»: Նրա սաղարթը ստվեր ու զովություն է տալիս, իսկ յուղն օգտագործվում է սննդի մեջ, դրանով փափկեցնում են մաշկը և լցնում ճրագները: Լիբանանյան վսեմաշուք մայրիները աստվածաշնչյան ժամանակներում Մերձավոր Արևելքում մեծ ծառերի մեջ համարվում էին ամենաօգտակարը: Դրանց թանկարժեք փայտն օգտագործվում էր տաճարների և թագավորական պալատների կառուցման համար (Գ Թագավորաց 6.9,10): Աստծո տնկած արմատներից երիտասարդ ծառերն այնպիսի առատությամբ կաճեն, որ Իսրայելը օրհնության այգի կդառնա ողջ աշխարհի համար:

Կարդացե՛ք 14-րդ գլխի վերջին համարը: Ի՞նչ պայմաններ է պետք կատարել այդ բոլոր խոստումների իրականացման համար: Ինչո՞ւ է դա այդքան արդիական այսօր և մեզ՝ Յոթերորդ օրվա ադվենտիստներիս համար:

Ուրբաթ ***ապրիլի 12***

Հետագա ուսումնասիրության համար

Համեմատե՛ք ստորև բերված մեջբերումները Օվսե 7-14-ում ներկայացված լուրերի հետ:

«Տերը մարդկանց էր դիմում բնության միջոցով, կերպարների ու խորհրդանիշների, նահապետների ու մարգարեների միջոցով: Ճշմարտությունը պետք է մարդկությանը հռչակվի նրան հասկանալի լեզվով… Աստվածային կառավարման սկզբունքները և փրկության ծրագիրը պետք է հստակորեն շարադրվեն, իսկ Հին կտակարանի դասերը՝ լիովին բացահայտվեն մարդկանց» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 34):

«Այն երկար մռայլ դարերի ընթացքում, երբ մեկը մյուսին փոխարինող թագավորները շարունակում էին համառորեն չենթարկվել Երկնքին և ավելի ու ավելի ներգրավել Իսրայելը կռապաշտության մեջ, Աստված լուրը լուրի հետևից էր ուղարկում հավատից հեռացած ժողովրդին: Իր մարգարեների միջոցով Նա ոչ սակավ հնարավորություններ էր տալիս՝ կանգնեցնել ուրացության հոսքը և վերադառնալ Իրեն… Իսրայելի թագավորության մեջ երբեք չէին վերանում ազնիվ այն մարդիկ, ովքեր վկայում էին, թե ինչպես էր Աստծո հզոր ուժը փրկում մեղքից: Անգամ ամենամռայլ ժամանակներում իշխող կռապաշտության մեջ գտնվում էին մարդիկ, ովքեր հավատարիմ էին իրենց աստվածային Իշխանին և անարատ էին սուրբ Աստծո առջև: Այդ մարդիկ պատկանում էին ընտրյալ մնացորդին, որի միջոցով պետք է իրականացվեր

Եհովայի հավիտենական մտադրությունը» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 108):

Հարցեր քննարկման համար

1. Ինչ-որ մեկն ասել է, որ Օվսեի կյանքի ու ծառայության շնորհիվ Իսրայելին ուղղված Աստծո խոսքը որոշակի իմաստով «մարմին առավ»: Այդ գաղափարն ինչպե՞ս կարող է լինել Հիսուսի մարդկային բնույթի վերաբերյալ մեծ ճշմարտության արտացոլումը:
2. Հին Իսրայելը մի ակնթարթում չէր հեռացել Աստծուց: Նրանց ուրացումը աստիճանական գործընթաց էր: Նախապատրաստվե՛ք դասարանի հետ կիսվել որոշ գաղափարներով այն մասին, թե ինչպես մարդը կարող է անընդհատ փոփոխվող աշխարհում հավատարիմ մնալ Աստծո հավերժական սկզբունքներին:
3. Որոշ մարդիկ համարում են, որ փրկության և Աստծո մեծ սիրո մասին ավետարանչական լուրը հստակորեն ներկայացված է միայն Նոր կտակարանում, բայց ոչ Հնում: Ինչո՞վ է սխալ այդ գաղափարը:
4. Դասարանի հետ միասին վերադարձե՛ք երեքշաբթի օրվա դասի վերջին հարցին:
5. Հին կտակարանն այն Աստվածաշունչն էր, որ կարդում էին Հիսուս Քրիստոսն ու Պողոս առաքյալը: Օվսե մարգարեի գրքից նորկտակարանյան մեջբերումներ գտեք Մատթեոս 9.13-ում և Հռոմեացիս 9.25,26-ում: Հիսուսն ու Պողոսն ինչպե՞ս էին օգտագործում Օվսեի գրքի լուրը՝ ճշմարտությունը մեզ հասցնելու համար:

ՍՈՒՐԲ ԵՎ ԱՐԴԱՐ ԱՍՏՎԱԾ

(ՀՈՎԵԼ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԸ)

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հովել 1, 2.28,29-ը, Գործք առաքելոց 2.31,32-ը, Հռոմեացիս 10.13-ը, Մատթեոս 10.28-31-ը:

Հիշելու համարը.

«Եվ Տերը պիտի տա իր ձայնը իր զորքերի առաջ, որ շատ մեծ է Նրա բանակը, որովհետև զորավոր է իր խոսքը կատարողը: Որովհետև մեծ է Տիրոջ օրը և շատ ահեղ, և ո՞վ կարող է դիմանալ նրան» (Հովել 2.11):

Հիմնական միտքը.

Աստված կարող է օգտագործել ճգնաժամային իրավիճակները, որպեսզի օգնի Իր ժողովրդին՝ գիտակցելու կախվածությունը Նրանից և հոգևոր վերածննդի ու բարեկարգման կարիքը:

Անհամար մորեխների գրոհի և Հարավային թագավորությունը՝ Հուդան ամայացնող խիստ երաշտի մեջ Հովել մարգարեն՝ Ամովսի և Օվսեի ժամանակակիցը, տեսնում էր մեծ և ահեղ դատաստանի օրվա նախանշանները (Հովել 2.31): Բախվելով այդպիսի ծանր ճգնաժամի՝ նա Հուդայի բոլոր բնակիչներին կոչ է անում թողնել մեղքը և վերադառնալ Աստծուն: Նա մորեխը նկարագրում է որպես Տիրոջ բանակը և նրա գրոհի մեջ Աստծո պատիժն է տեսնում անհավատարիմ Իսրայելի նկատմամբ:

Հովելը պատմում է, որ Աստծո գալիք դատաստաններն անգամ համեմատելի չեն մորեխի հետ: Բայց այդ նույն դատաստանն անհամեմատելի օրհնություններ կբերի նրանց, ովքեր հավատարիմ են Տիրոջը և հնազանդ՝ Նրա ուսմունքին: Այլ խոսքերով՝ որքան էլ խիստ լինի դատաստանը, այն կարող է հանգեցնել այն մարդկանց փրկությանն ու փրկագնմանը, ում սրտերը բաց են Տիրոջ առաջնորդության համար:

Ազգային աղետ

Կարդացե՛ք Հովել 1.1-12-ը: Ի՞նչ է կատարվում Հուդայի երկրի հետ: _____

_____

Գյուղատնտեսական երկրում ապրող մարգարեն դիմում է հողագործներին և նրանց կոչ է անում տագնապել ցորենի ու պտուղների կորստից: Բնապահպանական ճգնաժամը կարող էր երկար տարիներով կաթվածահար անել ազգային տնտեսությունը: Ի լրումն սննդի, ծառերի և նրանց տված ստվերի կորստի, առկա էր նաև հողի վերին շերտի քայքայման վտանգ: Պաղեստինում պահանջվում է ավելի քան քսան տարի, որպեսզի որոշ պտղատու ծառեր սկսեն պտղաբերել: Փաստորեն գյուղատնտեսության սնանկացումը և անտառների ոչնչացումը բնորոշ մարտավարությունն էր հաղթողների, ովքեր ձգտում էին պատժել պարտվածներին՝ նրանցից խլելով արագ վերականգնվելու ամեն հույս:

Կարդացե՛ք Երկրորդ օրինաց 28.38-ը: Այս համարն ինչպե՞ս է օգնում մեզ հասկանալ, թե ինչ է տեղի ունենում Հուդայի հետ: ___

_____

_____

Հովելը վնասատուների չորս տարբեր տեսակներ է թվարկում (Հովել 1.4)՝ նկարագրելով ամայացման ուժն ու համընդհանուր բնույթը: Դրանց հասցրած վնասն է՛լ ավելի էր խորանում երաշտի պատճառով: Ողջ բերքը, որ հողագործները հույս ունեին հավաքել, չորացել էր, և ժողովուրդը հուսահատության մեջ էր, որովհետև նրանք ուտելու և վաճառելու ոչինչ չունեին: Նրանք անգամ սերմեր չունեին՝ հողը կրկին ցանելու համար: Այդպիսի մեծամասշտաբ աղետներ նախկինում տեղի չէին ունենում, և դրանց մասին պատմելու են հետագա սերունդներին: Այն փաստը, որ նախկինում ոչ մի նման բան տեղի չէր ունենում, մեծացնում է իրավիճակի կարևորությունը:

Մարգարեն նաև խոսում է տվյալ տարածաշրջանի հիմնական մթերքների՝ խաղողի, հացահատիկի և ձեթի ոչնչացման մասին (Երկրորդ օրինաց 14.23, 18.4): Ցորենն ու գարին գլխավոր հացատիկային մշակաբույսերն էին Պաղեստինում: Խաղողի որթն ու թզենին Աստվածաշնչում խորհրդանշում են Աստծո օրհնություններով լի ավետյաց երկրի խաղաղ կյանքը (Գ Թագավորաց 4.25, Միքիա 4.4, Զաքարիա 3.10): Խաղաղության և բարգավաճման հովվերգական պատկերը

սեփական խաղողի որթի ու թզենու տակ նստելու հնարավորությունն է: Այժմ այդ ամենին սպառնում են Աստծո դատաստանները, որ թափվել են ժողովրդի վրա նրանց անօրենության պատճառով:

Բերքահավաքի շրջանը ուրախության և ցնծության ժամանակ էր (Սաղմոս 4.7, Եսայիա 9.3): Թեև Իսրայելի հողը պարգև էր Տիրոջից, այն առաջվա նման պատկանում էր Տիրոջը: Սպասվում էր, որ Իսրայելը երկրի հավատարիմ կառավարիչ կդառնա: Ամենից շատ ակնկալվում էր, որ ժողովուրդը կերկրպագի Տիրոջը և հնազանդ կլինի Նրան, որովհետև հենց Աստված էր նրանց պարգևել այդ հողը:

Երկուշաբթի ***ապրիլի 15***

Փող փչեք

Տարերային աղետները միշտ շատ հարցեր են առաջ բերում. «Ինչո՞ւ Աստված թույլ տվեց դա», «Ինչո՞ւ մեկը կենդանի մնաց, իսկ մյուսը մահացավ», «Ի՞նչ դաս մենք պետք է քաղենք սրանից»: Հովելը չէր էլ կասկածում, որ մորեխի հետ կապված աղետը կարող է հանգեցնել Աստծո համապարփակ ծրագրի առավել խորը ըմբռնման: Առաջին գլխում, գտնվելով աստվածային ներշնչման ազդեցության տակ, մարգարեն ազգային ճգնաժամը կապում է սեփական երկրի հոգևոր իրադրության հետ: Մորեխը չէր թողել ոչինչ, ինչ կարելի էր զոհաբերել Տիրոջը: Հացի ընծան և գինու հեղումը տաճարում ամենօրյա ընծաների մի մասն էին՝ համաձայն Ելից 29.40-ում և Թվոց 28.5-8-ում գրի առնված ցուցումների: Զոհաբերությունների դադարեցումը ծանր ապրում էր, սակայն այն պետք է մարդկանց համար ծառայեր որպես նախազգուշացում իրենց սպասվող վիճակի մասին: Զոհաբերություններ կատարելու հնարավորության կորուստը խորհրդանշում էր Աստծո և Իսրայելի միջև ուխտի խզում: Բայց, ի տարբերություն շատ այլ մարգարեների, Հովելը շատ ժամանակ չի հատկացրել ժողովրդի մեղքերի վերլուծությանը: Նրան շատ ավելի հետաքրքրում էր Իսրայելի աստվածային Բժշկի նշանակած ապաքինումը:

Կարդացե՛ք Հովել 1.13-20-ը: Մարդկանց ի՞նչ է ասում Հովելը: Որքան էլ եզակի լինեին հանգամանքները, այստեղ ներկայացված կոչն ի՞նչ ձևով է բազմիցս հանդիպում ինչպես Հին, այնպես էլ Նոր կտակարանում: _____

_____

_____

Մարգարեն հոգևոր առաջնորդներին համոզում է կազմակերպել աղոթքի և ծոմի համազգային օր, որպեսզի մարդիկ կարողանան մանրակրկիտորեն քննել սեփական սրտերը, թողնել մեղքերը և վերադառնալ Աստծուն: Այդպիսով կարող է վերածնվել Աստծո սիրո և արդարության նրանց հույսը: Վերջին հաշվով, այդ աղետը կարող է հավատացյալներին բերել իրենց Տիրոջ հետ է՛լ ավելի խորը փոխհարաբերությունների:

Սուրբ Գրքում Աստված ներկայացված է որպես բնության Տերը, որպես Մեկը, ով արարել է, պահպանում է, ինչպես նաև Իր աստվածային նպատակներով օգտագործում է այն: Այս *բնական* աղետի մեջ հագուստը պատռելու փոխարեն Հովել մարգարեն մարդկանց խորհուրդ է տալիս խոնարհեցնել իրենց սրտերը և դրանք բացել Աստծո շնորհի և կարեկցանքի համար:

Աղետները կարող են մեզ վրա թափվել տարբեր ձևերով: Երբ դա տեղի է ունենում, անկախ այդ աղետների և դրանց պատճառների մեր ըմբռնումից, աստվածաշնչյան ո՞ր խոստումների վրա մենք կարող ենք հիմնվել՝ հույս և ուժ ստանալով դիմանալու ամեն իրժվարության: Ո՞ր խոստումներն են հատկապես նշանակալի ձեզ համար:

Երեքշաբթի ***ապրիլի 16***

Ասպծո Հոգու պարգևը

Կարդացե՛ք Հովել 2.28,29-ը, ինչպես նաև Գործք առաքելոց 2.1-21-ը: Պետրոսն ինչպե՞ս է մեկնաբանում Հովելի մարգարեությունը: _____

_____

_____

Պենտեկոստեի օրը Պետրոս առաքյալը հայտարարեց, որ Տերը կատարեց Հովել մարգարեի միջոցով տրված Սուրբ Հոգին հեղելու մասին խոստումը: Հոգին հեղելու հետ մեկտեղ Աստված արտասովոր երևույթներ առաջ կբերի բնության մեջ՝ ինչպես երկրի վրա, այնպես էլ երկնքում՝ որպես մարդկության պատմությանը աստվածային գերբնական միջամտության տեսանելի նշան:

«Տիրոջ մեծ օրվա իրադարձությունների հետ կապված՝ Աստված Հովել մարգարեի միջոցով Սուրբ Հոգու զորության առանձնահատուկ դրսևորում է խոստացել: Այդ մարգարեությունը մասամբ իրականացել է Պենտեկոստեի օրը, բայց ավետարանչական աշխատանքի ավարտին

այն կիրականանա իր ողջ լիության մեջ՝ աստվածային շնորհի հրաշալի դրսևորմամբ» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 9):

Համաձայն Հովել մարգարեի գրքի անմիջական համատեքստի՝ ապաշխարությանը հաջորդում է Աստծո Հոգու մեծ հեղումը: Դա առաջ կբերի զարմանալի վերածնունդ: Կործանման փոխարեն կլինի Աստծո օրհնությունների հեղումը: Տերը հավաստիացնում է Իր ժողովրդին, որ Իր արարչագործությունը կվերականգնվի, իսկ ժողովուրդը կազատագրվի զավթիչներից:

Հոգին Աստծո ժողովրդի վրա հեղվում է յուղի նման, որով օծվում էին Աստծո կողմից հատուկ ծառայության համար ընտրված մարդկանց գլուխները: Հոգին նաև զորության պարգև է, որով օժտվում են ստացողները՝ Աստծո առանձնահատուկ աշխատանքի կատարման համար (Ելից 31.2-5, Դատավորաց 6.34): Միայն այդ ժամանակի համար է կանխատեսված Հոգու դրսևորումը լայն մասշտաբներով: Պատմության այդ մեծ պահին փրկությունը մատչելի կլինի բոլոր Աստծուն որոնողների համար: Աստծո Հոգին կիջնի բոլոր հավատարիմների վրա՝ անկախ տարիքից, սեռից և սոցիալական դրությունից: Դա կլինի Մովսեսի ցանկության *կատարումը*, որ Տիրոջ ժողովրդի բոլոր անդամները դառնան մարգարեներ, և որ Տերը նրանց վրա հեղի Սուրբ Հոգին (Թվող 11.29):

Դուք ի՞նչ կարող եք անել ձեր կյանքում՝ նախապատրաստվելու Սուրբ Հոգու հեղմանը:

Հորեքշաբթի *ապրիլի 17*

Աստծո անունը կանչելով

«Արեգակը պիտի փոխվի խավարի, և լուսինը՝ արյան, Տիրոջ մեծ և ահեղ օրը գալուց առաջ: Եվ պիտի լինի, որ ամեն, ով ոք կանչի Տիրոջ անունը, կփրկվի. որովհետև Սիոն սարի վրա և Երուսաղեմում փրկություն կլինի՝ Տիրոջ ասածի պես, և այն մնացորդների վրա, որ Տերը կկանչի» (Հովել 2.31,32):

Արևի խավարելը և լուսնի՝ արյան վերածվելը պետք չէ հասկանալ որպես տարերային աղետներ, այլ որպես Տիրոջ օրվա մոտենալու գերբնական նշաններ: Աստվածաշնչյան ժամանակներում շատ հեթանոս ազգեր էին երկրպագում երկնային մարմիններին: Աստված Մովսեսի միջոցով ասել է, որ հրեաները երբեք չպետք է այդ անեն (Երկրորդ օրինաց 4.19): Այս իմաստով Հովելի մարգարեությունը կանխասում է, որ ազգերի կուռքերը կսկսեն անհետանալ, երբ Տերը կգա դատաստան

անելու համար: Հովել 3.15-ն ավելացնում է, որ անգամ աստղային զորությունները կկորցնեն իրենց փայլը, որովհետև Տիրոջ փառքի ներկայությունը իրենով կմթագնի ամեն բան:

Այն ժամանակ, երբ Քրիստոսի հայտնությունը սարսափի կմատնի չապաշխարածներին, իրենց Տիրոջն ինչպե՞ս կդիմավորեն արդարները: Ո՞րն է ապշեցուցիչ տարբերությունը: Տե՛ս Եսայիա 25.9, Հովել 2.32, Գործք առաքելոց 2.21, Հռոմեացիս 10.13: _____

_____

_____

_____

Սուրբ Գրքում «Տիրոջ անունը կանչել» չի նշանակում միայն կոչվել Տիրոջ հետևորդ և հուսալ Նրա խոստումներին: Այն նաև կարող է նշանակել հռչակել Տիրոջ անունը, այսինքն՝ շրջապատողներին վկայել Տիրոջ և աշխարհի համար Նրա գործերի մասին: Աբրահամը զոհասեղաններ էր կառուցում Քանանի երկրում և հռչակում Տիրոջ անունը (Ծննդոց 12.8): Մովսեսին Սինա լեռան վրա Աստված հռչակեց Իր բարությունն ու ողորմությունը (Ելից 33.19, 34.5): Սաղմոսերգուն հավատարիմներին կոչ է անում շնորհակալություն հայտնել Աստծուն և Նրա անունը կանչել՝ ազգերի մեջ հռչակելով Նրա գործերը (Սաղմոս 105.1): Այդ նույն բառերը հանդիպում են Եսայիա մարգարեի գրած փրկության երգում (Եսայիա 12.4):

Այսպիսով, Աստծո անունը կանչել՝ նշանակում է լինել ավետաբերը այն ուրախալի լուրի, որ Աստված առաջվա նման կառավարում է երկիրը, ինչպես նաև՝ այս աշխարհի մարդկանց կոչ անել՝ ամեն բան քննարկել Աստծո գործերի և Նրա բնավորության համատեքստում: Դա նաև նշանակում է՝ յուրաքանչյուրին պատմել փրկության շռայլ ծրագրի մասին, որն առաջարկվում է յուրաքանչյուր մարդու:

Ձեզ համար ի՞նչ է նշանակում «կանչել Տիրոջ անունը»: Դուք ինչպե՞ս եք այդ անում, և ի՞նչ է տեղի ունենում արդյունքում:

Հինգշաբթի ***ապրիլի 18***

Ապաստան՝ փառապանքի ժամանակ (Հովել 3)

Աստվածաշնչյան մարգարեները Աստծո դատաստանի մոտեցումը համեմատում են առյուծի մռնչյունի հետ՝ ձայն, որը բոլորին ստիպում է դողալ (Հովել 3.16, Ամոս 1.2, 3.8): («Կորոտա»՝ եբր. շաագ, տառացիորեն նշանակում է մռնչալ, ոռնալ:) Աստվածաշնչում Սիոնը Երուսաղեմում

Աստծո երկրային գահի գտնվելու վայրն է: Այստեղից Աստված կպատժի թշնամուն և միևնույն ժամանակ կարդարացնի Իր ժողովրդին, որ համբերատարությամբ սպասում է Իր Աստծո հաղթանակին: Նրանք կկիսեն Նրա հաղթարշավը, երբ Աստված կնորոգի արարչագործությունը:

Որոշ մարդկանց դժվար է հասկանալ Աստվածաշնչում նկարագրված Աստծո դատաստանը: Լավ կլիներ հիշել, որ չարն ու մեղքը միանգամայն իրական են և համառորեն ջանում են դիմակայել Աստծուն և ոչնչացնել կյանքի ամեն ձև: Աստված չարի թշնամին է: Այդ պատճառով Հովելը կոչ է անում քննել մեր կյանքը՝ համոզվելու համար, որ գտնվում ենք Աստծո կողմում, որպեսզի Տերը դատաստանի օրը մեր պաշտպանությունը լինի:

Կարդացե՛ք Մատթեոս 10.28-31-ը: Այս համարներն ինչպե՞ս են օգնում հասկանալ, հատկապես աղետների ժամանակ, թե ինչ է մեզ պարգևված Հիսուսում: _____

_____

_____

_____

Տերը սատարում է նրանց, ովքեր ամուր կառչած են հավատին: Նա կարող է զարկել երկիրը (Հովել 3.1-15), սակայն Նրա ժողովուրդը չպետք է վախենա Աստծո արդար դատաստաններից, որովհետև Նա խոստացել է պաշտպանել նրանց (համար 16): Աստված նրանց հավաստիացում է տվել: Նրա արդար ու գթառատ գործերը վկայում են, որ Նա հավատարիմ է Իր խոստմանը և թույլ չի տա, որ արդարները անարգվեն (Հովել 2.27):

Հովել մարգարեի գիրքն ավարտվում է վերափոխված աշխարհի տեսիլքով, որտեղ Նոր Երուսաղեմի միջով գետ է հոսում, իսկ ներված ժողովրդի մեջ ներկա է հավիտենական Աստված (Հովել 3.18-21):

Այս մարգարեական լուրը կոչ է անում մեզ քայլել Հոգով, ողջ սրտով ձգտել քրիստոնեական կենսակերպին և հասնել նրանց սրտերին, ովքեր դեռևս չեն կանչում Տիրոջ անունը: Եվ այդ պատճառով մենք ապավինում ենք Սուրբ Հոգու միջոցով Քրիստոսի ներկայության մասին խոստմանը Իրեն հավատարիմ ժողովրդի սրտերում:

«Մենք պետք է իմանանք մեր իրական վիճակը, այլապես չենք զգա Քրիստոսի օգնության մեր կարիքը: Մենք պետք է հասկանանք մեզ սպառնացող վտանգը, այլապես չենք թաքնվի ապաստարանում: Մենք պետք է զգանք մեր վերքերի ցավը, այլապես ապաքինում չենք փնտրի» (է. Ուայթ, Քրիստոսի առակները, 158):

Ինչպե՞ս եք դուք գնահատում ձեր սեփական «իրական վիճակը»: Ի՞նչ ցավ եք դուք զգում: Դուք թաքնվե՞լ եք Քրիստոսում մեզ խոստացված «ապաստարանում»:

Ուրբաթ *ապրիլի 19*

Հետագա ուսումնասիրության համար

«Հովել» անունը աստվածաշնչյան ժամանակներում բավականին տարածված էր: Այն նշանակում է «Տերն է Աստված»: Մարգարեի անունը համապատասխանում է նրա գրքի ընդհանուր թեմային. միայն Աստված է բացարձակապես սուրբ և արդար, Նա երկրի վրա գործում է որպես Գերագույն Իշխան: Նրա ժողովրդի և մյուս ժողովուրդների պատմությունը, ինչպես և յուրաքանչյուր մարդու կյանք Նրա ձեռքում է:

«Հավիտենությունը մեզանից պահանջում է ավելին, քան կարծեցյալ՝ խոսքերի ու ձևերի կրոնները, որտեղ ճշմարտությունը միայն արտաքին փայլ է: Աստված կոչ է անում վերածննդի և վերափոխման: Ամբիոնից պետք է հնչեն միայն և միայն Աստվածաշնչի խոսքերը: Բայց Աստվածաշունչը զրկել են իր զորությունից, և սա առաջացնում է հոգևոր կյանքի ցածր մակարդակ: Շատ ժամանակակից քարոզներում չկա այն աստվածային դրսևորումը, որ արթնացնում է գիտակցությունը և կյանք է բերում հոգուն: Ունկնդիրները չեն կարող ասել. «Չէ՞ որ մեր սրտերը բորբոքվում էին մեզանում, երբ որ ճանապարհին մեզ հետ խոսում էր, և ինչպես գրքերը բացում էր մեզ համար» (Ղուկաս 24.32): Բայց որքա՜ն շատ են նրանք, ովքեր աղաղակում են կենդանի Աստծուն՝ փափագելով աստվածային ներկայությունը: Նրանք, ովքեր լսել են միայն ավանդույթները, մարդկային տեսություններն ու կանոնները, թող ականջալուր լինեն Նրա ձայնին, ով կարող է հոգին վերակենդանացնել հավիտենական կյանքի համար» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 626):

Հարցեր քննարկման համար

1. Ինչո՞ւ Հովել մարգարեի լուրը հատուկ առնչություն ունի մեզ՝ վերջին ժամանակում ապրողներիս համար, երբ մեզ, անկասկած, լուրջ և հուզիչ իրադարձություններ են սպասվում:
2. Միանգամից կարդացե՛ք Հովել մարգարեի ողջ գիրքը և պատասխանե՛ք հետևյալ հարցին. Ի՞նչ չափով էր Հովելի լուրը կիրառելի նրա սերնդի համար, և ի՞նչ չափով այն ապագա կիրառություն ունի:

3. Հովելի գիրքը նկարագրում է տարատեսակ օրհնություններ, որոնք Աստված հեղում է Իր ժողովրդի վրա: Մարգարեության մեջ սահմանազատում նկատվո՞ւմ է արդյոք նյութական և հոգևոր օրհնությունների միջև: Եթե այո, ապա ինչպե՞ս:
4. Մեծ պայքարի ըմբռնումն ինչպե՞ս է օգնում մեզ հասկանալ այն սոսկալի փորձություններն ու աղետները, որ տեղի են ունենում մեր աշխարհում:
5. է. Ուայթի՝ ուրբաթ օրվա դասի մեջբերման մեջ խոսվում է «կարծեցյալ կրոնի» մասին: Դա ի՞նչ կարող է նշանակել: Մենք ինչպե՞ս կարող ենք իմանալ, թե ինչպիսին է մեր կրոնը՝ իրակա՞ն, թե՞ կարծեցյալ:

ԲՈԼՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՏԵՐԸ

(ԱՄՈՎՍ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԸ)

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ամովս 1-2, Եսայիա 58, Ղուկաս 12.47,48, Գ Թագավորաց 8.37-40, Ամովս 4.12,13, Աբդիա:

Հիշելու համարը.

«Առյուծը մռնչում է, ո՞վ չի վախենում. Տեր Եհովան է խոսում, ո՞վ չի մարգարեանա» (Ամովս 3.8):

Հիմնական միտքը.

Դատան, ոչ մարդասիրական արարքները մեղք են Աստծո դեմ. դրանք հարկավոր դատապարտման կարժանանան:

Սուրբ Գրքում առյուծը հաճախ ներկայացվում է որպես կենդանիների թագավոր: Նրա հայտնվելը միշտ զուգակցվում է անհաղթահարելի հզորության և վսեմության հետ, բայց նաև՝ կատաղության և կործանարար ուժի հետ: Անգամ երբ առյուծը չի հետապնդում, նրա մռնչյունը կարելի է լսել շատ մեծ հեռավորությունից:

Հովիվ Ամովսը ուղարկվել էր հրեա ժողովրդի մոտ՝ նրան նախազգուշացնելու, որ ինքը լսել է առյուծի մռնչյունը, և այդ առյուծը ոչ այլ ոք է, քան իրենց Տերը: Սուրբ Հոգուց շարժված՝ Ամովս մարգարեն Աստծո դիմումը շրջակա ժողովուրդներին, ինչպես նաև՝ Իր սեփական ժողովրդին՝ համեմատում էր առյուծի մռնչյունի հետ (տե՛ս Ամովս 1.2):

Ամովսը կանչվել էր մարգարեանալու այն ժողովուրդների համար, որոնք մարդկության դեմ ուղղված հանցագործություններ էին կատարում: Նա նաև ուղարկվել էր մի հասարակության մոտ, որտեղ արտոնյալ և կրոնասեր մարդիկ ապրում էին խաղաղ ու բարգավաճ կյանքով և միևնույն ժամանակ նեղում էին աղքատներին՝ իրականացնելով անազնիվ գործարարություն և կաշառակերություն դատարանում: Այս շաբաթ մենք կլսենք, թե ինչ է ասում Տերն այդ ստոր արարքների մասին:

Մարդկության դեմ ուղղված հանցագործություններ

Կարդացե՛ք Ամովս 1-ը և 2-ը: Ինչո՞ւ է Տերն զգուշացնում պատժի մոտենալու մասին: _____

_____

_____

Ամովս մարգարեի գրքի առաջին երկու գլուխները բովանդակում են յոթ մարգարեություն՝ հարևան ժողովուրդների դեմ, ինչին հետևում է Իսրայելի դեմ ուղղված մարգարեությունը: Շրջակա ազգերը դատապարտվում են ոչ թե այն բանի համար, որ նրանք Իսրայելի թշնամիներն էին, այլ որովհետև ոտնակոխ են արել համամարդկային սկզբունքները: Ամովսի ներկայացրած դատապարտման մեջ առանձնանում են երկու բաղադրիչներ՝ հավատարմության և կարեկցանքի բացակայությունը:

Օրինակ, Տյուրոս քաղաքը Իսրայելից հյուսիս՝ Միջերկրական ծովի ափին գտնվող առաջատար առևտրային կենտրոն էր: Լինելով գրեթե անառիկ ամրոց՝ կղզու վրա գտնվող քաղաքը փառաբանված էր իր պաշտպանվածությամբ: Ավելին, Տյուրոսի ղեկավարները խաղաղության պայմանագիր էին կնքել մի քանի շրջակա ժողովուրդների, այդ թվում՝ փղշտացիների հետ: Քաղաքն Իսրայելի հետ Դավթի և Սողոմոնի (Գ Թագավորաց 5.1,12), և անգամ Աքաաբի (Գ Թագավորաց 16.30, 31) թագավորության ժամանակաշրջանում կապված էր «եղբայրական միությամբ»: Ուստի զարմանալի չէ, որ Գ Թագավորաց 9.13-ում Տյուրոսի Քիրամ թագավորը Սողոմոնին անվանում է «եղբայրս»:

Բայց Տյուրոսի բնակիչները խախտեցին «եղբայրական միությունը»: Տյուրոսը դատապարտվեց ոչ թե նրա համար, որ գերիներ էր վերցրել, այլ որ, որ նրանց հանձնել էր Իսրայելի թշնամիներին՝ եդոմացիներին: Այսպիսով, Տյուրոսի բնակիչները պատասխանատու էին այն բոլոր դաժանությունների համար, որոնց ենթարկվել էին իրենց թշնամիների ձեռքն ընկած գերիները: Աստվածային տեսանկյունից հանցագործությանն աջակցողը և դրան նպաստողը նույնքան մեղավոր է, որքան և կատարողը:

Քանի որ Աստված գոյություն ունեցող ամեն բանի Տիրակալն է, Նա Իր ձեռքում է պահում ողջ աշխարհի ճակատագիրը: Նա ունի նպատակներ և հոգսեր, որոնք Իսրայելի սահմաններից շատ հեռու են տարածվում: Իսրայելի Աստվածը բոլոր ժողովուրդների Տերն է, Նրան

անհանգստացնում է ողջ մարդկության պատմությունը: Նա Արարիչ Աստված է, կյանքի Աղբյուրը, և բոլորը ենթակա են Նրան:

Մեզանից ո՞վ չի սարսափել աշխարհում տիրող աղաղակող անարդարությունից: Եթե Աստված չլիներ, հույս կլինե՞ր, որ արդարությունը մի օր կհաղթանակի: Մեզ համար ի՞նչ նշանակություն ունի Աստվածաշնչում բովանդակվող այն խոստումը, որ Աստված դատաստան կտեսնի և աշխարհում կվերականգնի արդարությունը: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել հիմնվել այդ խոստման վրա ՝ չնայելով մեզ շրջապատող ողջ անարդարությանը:

Երկուշաբթի *ապրիլի 22*

Արդարադատություն հալածվածների համար

Աշխարհի հանդեպ Աստծո դատաստանը Ամովս մարգարեի գրքի առանցքային թեմաներից է: Գրքի սկզբում մարգարեն հայտարարում է Աստծո դատաստանը Իսրայելի հարևանությամբ ապրող որոշ ժողովուրդների համար, քանի որ նրանք մարդկության դեմ ուղղված հանցագործություններ էին կատարում: Սակայն հետո Ամովսը խիզախաբար հայտարարում է, որ Աստված դատելու է նաև Իսրայելին: Տիրոջ ցասումն ուղղված է ոչ միայն այլ ազգերի, այլ նաև՝ Իր ընտրյալ ժողովրդին: Հրեա ժողովուրդը մերժել էր Տիրոջ Խոսքը և չէր հետևում Նրա կարգադրություններին:

Միևնույն ժամանակ Ամովսը շատ ավելի խստորեն մերկացնում էր Իսրայելին, քան Հուդային, որովհետև իսրայելացիները խախտել էին Աստծո ուխտը և բազում մեղքեր էին գործել: Տնտեսական բարգավաճումն ու քաղաքական կայունությունը Իսրայելին տարել էին հոգևոր քայքայման: Այդ հոգևոր անկումն արտահայտվում էր սոցիալական անարդարության մեջ: Իսրայելում հարուստները շահագործում էին աղքատներին, ուժեղները՝ թույլերին: Հարուստները հոգ էին տանում միայն իրենց և սեփական շահի մասին, անգամ երբ դա ձեռք էր բերվում աղքատների տառապանքների գնով: (Այն ժամանակներից շատ բան չի փոխվել, այնպես չէ՞):

Իր քարոզում Ամովսը սովորեցնում էր կենդանի Աստծո մասին, ով հոգ է տանում մարդկանց նկատմամբ վերաբերմունքի մասին: Արդարությունը ոչ թե պարզապես գաղափար է կամ չափանիշ, այն Տիրոջ բնավորության մի բաղադրիչն է: Այդ իսկ պատճառով արդարությունը աստ-

վածային հոգատարության առարկա է: Մարգարեն նախազգուշացնում է, որ իսրայելացիների քարե տները, փղոսկրով շրջանակված կահույքը, լավ սնունդն ու խմիչքները, ինչպես նաև մարմնի համար լավագույն պիտույքները՝ ամեն բան կոչնչանան:

Կարդացե՛ք Եսայիա 58-ը: Ի՞նչ կերպ է այդ գլուխն ընդգրկում ներկա ժամանակի ճշմարտությունները: Մյուս կողմից, աշխարհին ուղղված մեր լուրն այսօր ինչո՞ւ է շատ ավելի լայն: _____

_____

_____

Աստվածաշունչը հստակորեն սովորեցնում է, որ սոցիալական արդարությունը Ավետարանի բնական պտուղը պետք է լինի: Որքան Սուրբ Հոգին ավելի ու ավելի է մեզ նմանեցնում Հիսուսին, այնքան ավելի լավ ենք մենք սովորում կիսել Աստծո հոգսերը: Մովսեսի գրքերը պնդում են օտարերկրացիների, այրիների և որբերի հանդեպ արդարացի վերաբերմունքի անհրաժեշտությունը (Ելից 22.21-24): Մարգարեները խոսում են հասարակության պակաս արտոնյալ խավերի հանդեպ արդարացի և զգայուն վերաբերմունքի հարցում Աստծո անհանգստության մասին (Եսայիա 58.6,7): Սաղմոսերգուն Իր սուրբ կացարանում ապրող Աստծուն անվանում է «որբերի Հայր և որբևայրիների դատավոր» (Սաղմոս 68.6): Քրիստոսը հաճախ էր ուշադրություն նվիրում հասարակության կողմից մերժված մարդկանց (Մարկոս 7.24-30, Հովհաննես 4.7-26): Հակոբոսը՝ Տիրոջ եղբայրը, մեզ կոչ է անում հավատ դրսևորել գործերի մեջ՝ օգնելով կարիքավորներին (Հակոբոս 2.14-26): Քրիստոսի ոչ մի հետևորդ չի կարող ավելի պակաս լինել, քան Քրիստոսի իսկական հետևորդ լինելն է:

Երեքշաբթի ***ապրիլի 23***

Արտոնությունների վտանգը

Ամովսի մարգարեական լուրը չպետք է սահմանափակվեր Իսրայելի պատմական իրավիճակով: Այն տարածվում էր Իսրայելի և Հուդայի սահմաններից դուրս: Հին Կտակարանում Իսրայելը ուներ Աստծուն դիմելու եզակի, բայց ոչ բացառիկ հնարավորություն:

Կարդացե՛ք Ամովս 3.1,2-ը: Եբրայերեն «յադա» բայը (իմանալ, ճանաչել), որն օգտագործվում է երկրորդ համարում, առանձնահատուկ մտերմության զգացողություն է հաղորդում: Երեմիա 1.5-ում, օրինակ, Աստված ասում է, որ Ինքը «ճանաչել է» մարգարեին և առանձնացրել

(սրբել) է նրան դեռ նրա ծնունդից առաջ: Նույնը վերաբերում էր Իսրայելին: Նրանք պարզապես ժողովուրդների բազմությունից առանձնացված մեկը չէին: Աստված առանձնացրել էր նրանց սրբազան աստվածային նպատակի համար: Նրանք Նրա հետ առանձնահատուկ փոխհարաբերությունների մեջ էին:

Աստված Ինքն էր ընտրել հրեա ժողովրդին և նրան ազատություն պարգևել՝ դուրս բերելով ստրկությունից: Եգիպտոսից ելքը Իսրայել ժողովրդի վաղ պատմության ամենակարևոր իրադարձություններից մեկն էր: Այն հող նախապատրաստեց Աստծո փրկարար գործողությունների և Քանանի գրավման համար: Բայց ուժն ու բարգավաճումը Իսրայելին բերեցին հպարտության և ինքնագոհության՝ որպես Աստծո ընտրյալ ժողովուրդ իրենց արտոնությունների գիտակցմամբ:

Կարդացե՛ք Քրիստոսի խոսքերը Ղուկաս 12.47,48-ում: Ինչպե՞ս հասկանալ այստեղ տրված սկզբունքը՝ երբ կյանքի մեծագույն արտոնությունները սխալ են օգտագործվում, դրանց փոխարինելու է գալիս պատիժը: _____

_____

_____

Գտնվելով աստվածային ներշնչանքի ազդեցության ներքո՝ մարգարեն զգուշացնում է. քանի որ Իսրայել ժողովուրդն ընտրված է Աստծո կողմից, նրանից իր արարքների համար առանձնահատուկ հաշվետվություն կպահանջվի: Տերն ասում է, որ Աստծո հետ Իսրայելի եզակի փոխհարաբերությունները նախատեսում են նաև պարտավորություններ, և այդ պարտավորությունները չկատարելը կհանգեցնի պատժի: Այլ խոսքերով, Իսրայելը՝ որպես Աստծո ընտրյալ ժողովուրդ, ավելի մեծ չափով է ենթակա Աստծո դատաստանին, որովհետև արտոնությունները պատասխանատվություն են նախատեսում: Իսրայելը չէր ընտրված պարզապես արտոնյալ կարգավիճակ ունենալու համար, նրանք կանչված էին աշխարհին վկայելու Տիրոջ մասին, ով այդպես օրհնել էր իրենց:

«Ժամանակակից քրիստոնեական եկեղեցիներին մեծագույն արտոնություններ են տրված: Տերը մեզ բացվում է ավելի ու ավելի աճող լույսի ներքո: Այսօր մեր առավելությունները շատ անգամ գերազանցում են նրանց, որոնք ուներ Աստծո ժողովուրդը հնում» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 317):

Խորհեցե՛ք այն ամենի մասին, ինչ տրվել է մեզ՝ որպես Յոթերորդ օրվա ադվենտիստներիս: Ինչո՞ւ այդ առավելություններին առնչվող պատասխանատվությունը պետք է մեզ ստիպի

անհանգստանալ: Մենք ինքնագոհ չե՞նք դարձել ստացած բոլոր օրհնությունների արդյունքում: Եթե այո, ապա ինչպե՞ս կարող ենք փոխել այդ վիճակը:

Չորեքշաբթի *ապրիլի 24*

Իսրայելի հանդիպումն Աստծո հետ

«Պատրաստվի՛ր քո Աստծուն դիմավորելու, ո՛վ Իսրայել» (Ամովս 4.12):

Ամովս մարգարեի գրքի չորրորդ գլուխն սկսվում է Իսրայելի մեղքերի նկարագրությամբ և ավարտվում դատաստանի օրը հռչակելով: Աստված Իր ժողովրդի վրա առանձնահատուկ պատասխանատվություն է դնում, թե ինչպես են նրանք ապրում և վերաբերվում մարդկանց:

Ամովսը մի շարք տարերային աղետներ է թվարկում, որոնցից յուրաքանչյուրը լիովին բավական է ժողովրդին դեպի Աստվածուն տանելու համար: Ցանկը բաղկացած է յոթ աղետներից. դա Աստծո ուխտը խախտելու համար լրիվ պատժաչափն է (համաձայն Ղևտացոց 26-ի): Այդ աղետներից մի քանիսը հիշեցնում են այն պատուհասները, որոնցով Աստված զարկեց Եգիպտոսին, բայց վերջին աղետի նկարագրությունը ոչ երկիմաստորեն ցույց է տալիս Սոդոմի և Գոմորի լիակատար ոչնչացումը:

Սովորաբար մարդկանց ինչի՞ պետք է հանգեցնեն տարատեսակ աղետները: Այդ մասին ի՞նչ է ասում Սողոմոնը տաճարի նվիրաբերման ժամանակ աղոթելիս: Գ Թագավորաց 8.37-40: __

_____

_____

_____

Իսրայելի ժողովուրդը խրվել էր անօրենության մեջ՝ ուշադրություն չդարձնելով Աստծո կոչերին: Ավելին, Աստծո դատաստանները հանգեցրել էին նրան, որ մարդիկ է՛լ ավելի էին խստացրել իրենց սրտերը: Քանի որ նրանք չէին դարձել Աստծուն, Ամովսը խոսում է ապաշխարության վերջին հնարավորության մասին:

Մոտենում է վերջին դատաստանը, բայց Ամովսը չի հստակեցնում, թե ինչպիսին կլինի այն: Ամովսի խոսքերի ճնշող անորոշությունը դատաստանի սպառնալիքը դարձնում է է՛լ ավելի ծանր: Իսրայելը չընդգտեց Աստծուն, այդ պատճառով Աստված դուրս է գալիս նրան հանդիպելու: Եթե պատիժը չօգնի, կփրկի՞ Աստծո հետ հանդիպումը:

Ամոս 4.12-ը սկսվում է հետևյալ բառերով. «Սրա համար քեզ այսպես եմ անելու»՝ հիշեցնելով ավանդական երդումը: Այդ հանդիսավոր հայտարարությունը կոչ է անում Իսրայելին՝ արձագանքել և պատրաստվել դիմավորելու իրենց Աստծուն, ինչպես դա մի ժամանակ եղել էր Սինա լեռան մոտ (Ելից 19.11,15):

Ուշադիր կարդացե՛ք Ամոս 4.12,13-ը: Եթե դուք հանկարծ լսեիք նախազգուշացումը՝ «Պատրաստվի՛ր դիմավորելու Աստծուն, [այստեղ ձեր անունը]», ինչպիսի՞ն կլիներ ձեր արձագանքը: Ո՞րն է ձեր միակ հույսը (Տե՛ս Հռոմեացիս 3.19-28):

Հինգշաբթի ***ապրիլի 25***

Դեպի անկում տանող հպարտություն

Կարդացե՛ք Աբդիա մարգարեի գիրքը: Ի՞նչ կարևոր բարոյական ու հոգևոր ճշմարտություններ մենք կարող ենք քաղել այս գրքից: _____

_____

_____

Աբդիա մարգարեի գիրքը Հին Կտակարանի ամենահամառոտ գիրքն է: Այնտեղ պատմվում է Եդոմի հանդեպ Աստծո դատաստանի մասին: Գրքի լուրը կենտրոնացված է երեք հիմնախնդիրների վրա՝ Եդոմի հպարտությունը (համարներ 1-4), Եդոմի վերահաս ոչնչացումը (համարներ 5-9) և Եդոմի դաժանությունը Հուդայի հանդեպ (համարներ 10-14):

Եդոմացիները Եսավի՝ Հակոբի եղբոր ժառանգներն էին: Իսրայելացիների և եդոմացիների միջև թշնամության արմատները գնում են դեպի երկու երկվորյակ եղբայրների հակամարտությունը, ովքեր հետագայում դարձան երկու ժողովուրդների հայրերը: Սակայն, համաձայն Ծննդոց 33-ի՝ երկար ժամանակ անցնելուց հետո եղբայրները հաշտվեցին: Աստված հրամայեց իսրայելացիներին. «Եդոմայեցուն չատես, որովհետև նա քո եղբայրն է» (Երկրորդ Օրինաց 23.7):

Չնայած դրան՝ երկու ժողովուրդների միջև թշնամությունը դարեդար շարունակվում էր: Երբ բաբելոնացիները ավերեցին Երուսաղեմն ու գերեվարեցին նրա բնակիչներին, եդոմացիները ոչ միայն ուրախանում էին դրանից, այլև նույնիսկ հալածում էին փախչող հրեաներին և մասնակցում քաղաքի կողոպուտին (Սաղմոս 137.7): Այդ պատճառով Աբդիա մարգարեն խոսում է այն մասին, որ Եդոմը կդատվի իր իսկ

չափանիշներով՝ «Ինչպես որ դու արիր, քեզ էլ այնպես պիտի անեն» (Աբդիա 15): Եդոմացիները հրեա ժողովրդի հանդեպ նրանց ծանր պահին իրենց իբրև եղբայր չէին պահում, այլ միաբան էին նրանց թշնամիների հետ (Երեմիայի ողբը 4.21,22):

Եդոմի տարածքը գտնվում էր Մեռյալ ծովից դեպի հարավ-արևելք: Դա լեռնային տեղանք է՝ բազմաթիվ սրածայր լեռնագագաթներով, ժայռոտ լանջերով, քարայրներով ու հեղեղատներով, որտեղ ամբողջ բանակներ կարող էին թաքնվել: Որոշ եդոմական քաղաքներ գտնվում էին այդ գործնականում անմատչելի վայրերում: Սելան (որը հայտնի է նաև որպես Պետրա) Եդոմի մայրաքաղաքն էր: Այդ ժողովրդին յուրահատուկ էր հպարտությունն ու ինքնահավանությունը, որը հնչում է «Ո՞վ կիջեցնի ինձ երկիրը» (Աբդիա 3) հարցի մեջ:

Աստված պատասխան կպահանջի նրանցից, ովքեր իրենց համար առավելություններ են գտնում ուրիշների դժբախտության մեջ: Աբդիան Եդոմի գոռոզ ժողովրդին նախազգուշացնում է, որ Աստված կխոնարհեցնի նրանց հպարտությունը: Չկա այնպիսի տեղ, ուր կարելի լինի թաքնվել Աստծուց (Ամովս 9.2,3): Տիրոջ գալիք օրը կբերի ինչպես դատաստան, այնպես էլ՝ փրկություն: Եդոմը կխմի Աստծո ցասման բաժակը, այն ժամանակ, երբ Աստծո ժողովուրդը կվերականգնվի:

Ուրբաթ ***ապրիլի 26***

Հետագա ուսումնասիրության համար

Կարդացե՛ք ստորև բերված մեջբերումները և քննարկե՛ք, թե ինչպես են դրանք օգնում մեզ առավել պարզորոշ հասկանալ Ամովս 1-4-ի և Աբդիայի լուրերը:

«Հրեա ժողովրդի հենց ակունքներից հավատն առ այն, որ Աստված հենց այդ ժողովրդին է ընտրել Իր առաքելությունն իրականացնելու համար, եղել է հրեական հավատի անկյունաքարը և ապաստանը տառապանքների պահերին: Եվ միևնույն ժամանակ մարգարեները գիտակցում էին, որ իրենց շատ ժամանակակիցների համար այդ անկյունաքարը գայթաքար էր, իսկ ապաստանը՝ փախուստ: Նրանք պետք է հիշեցնեին ժողովրդին այն մասին, որ ընտրյալ լինելը պետք չէ հասկանալ որպես Աստծո հավակնորդություն կամ պատժի համար լինել անձեռնամխելի պատժի համար: Ընդհակառակը, դա ենթադրում էր է՛լ ավելի մեծ ենթակայություն աստվածային դատաստանին և պատժին …

Ընտրյալ լինելը նշանակո՞ւմ է, որ Աստված հետաքրքրված է բացառապես Իսրայելով: Եգիպտոսից դուրս գալը ենթադրո՞ւմ է, որ Աստված ներգրավված է միայն Իսրայելի պատմության մեջ և բացարձակապես ուշադրություն չի դարձնում մյուս ժողովուրդների ճակատագրին» (Abraham J. Heschel. The Prophets, 32, 33):

«Հոգին զրկելով ամեն պաշտպանությունից՝ հեթանոսական աստվածների այդ մոլորյալ երկրպագուները կորցրել էին մեղքի բոլոր արգելափակումները և տրվել մարդկային ստոր կրքերի իշխանությանը:

Տիրող անօրենության, աղաղակող անարդարության, չափազանց շքեղության և շռայլության, անբարոյական տոնակատարությունների ու հարբեցողության, աղաղակող ամենաթողության ու այլասերման դեմ իրենց ձայնն էին բարձրացնում մարգարեները, բայց զուր էին նրանց բոլոր բողոքներն ու հանդիմանությունները: «Դռան մեջ ատում են հանդիմանողին, - ասում է Ամովսը, - և զզվում են ուղիղ խոսողից»: «Արդարին նեղողներ, կաշառք վերցնողներ, որ աղքատներին ծռում են դռան մեջ» (Ամովս 5.10,12): (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 282):

Հարցեր քննարկման համար

1. Հե՞շտ է ընկերասեր լինել նրանց համար, ովքեր կարող են օգտակար լինել ձեզ: Իսկ ինչպե՞ս վարվել նրանց հետ, ովքեր գտնվում են ծանր վիճակում, ովքեր մեզ ոչինչ չեն կարող առաջարկել, ովքեր փաստացի մեր օգնության կարիքն ունեն: Մենք ինչպե՞ս պետք է վերաբերվենք այդպիսի մարդկանց: Նրանց ինչպե՞ս եք վերաբերվում դուք:
2. Խորհեցե՛ք, թե ինչ պարգևվեց մեզ՝ Յոթերորդ օրվա ադվենտիստներիս: Քրիստոնյաների մեծ մասը գաղափար չունեն շաբաթ օրվա օրհնությունների մասին (է՛լ ավելի քիչ նրանք գիտեն այն մասին, թե ինչ նշանակություն է ստանում շաբաթը ժամանակի վերջում). մեծամասամբ համարում են, թե մահացածներն իսկույն ուղևորվում են կա՛մ երկինք, կա՛մ դժոխք: Շատերը չեն հավատում Հիսուսի մարմնավոր հարությանը, բառացիորեն չեն հավատում երկրորդ գալստյանը: Էլ ի՞նչ մեծ ճշմարտություններ են պարգևվել մեզ, որոնց մասին ոչ բոլորը գիտեն: Ի՞նչ պատասխանատվություն է կապված այդ ճշմարտություններն իմանալու հետ:

ՏԻՐՈՋԸ ՈՐՈՆԵՑԵՔ, ԵՎ ԿԵՆԴԱՆԻ ԿԼԻՆԵՔ

(ԱՄՈՎՍ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԸ)

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացեք.

Ամովս 5.1-15, Եբրայեցիս 5.14, Եսայիա 5.20, Ամովս 7.10-17, 9.11-15, Գործք առաքելոց 15.13-18:

Հիշելու համարը.

«Բարություն որոնեցեք, ոչ թե չարություն, որ ապրեք, և այսպես Զորաց Տեր Աստվածը ձեզ հետ կլինի, ինչպես որ ասել էր» (Ամովս 5.14):

Հիմնական միտքը.

Ամովսը մեզ հիշեցնում է այն մասին, որ միայն Տիրոջը որոնելով մենք կարող ենք կյանք ստանալ:

«Եթե Իսրայելը հավատարիմ լիներ Աստծուն, ապա Ամենաբարձրյալը կիրականացներ Իր նպատակը՝ մեծացնելով և փառավորելով նրան: Եթե հրեաները կատարեին Աստծո պատվիրանները, Նա նրանց «բոլոր Իր ստեղծած ազգերից գերազանց կաներ»: «Եվ երկրի բոլոր ժողովուրդները կտեսնեն, - ասաց Մովսեսը, - որ Եհովայի անունը կանչված է քեզ վրա, և քեզանից կվախենան»: Ազգերը, «այս բոլոր կանոնները լսելով, պիտի ասեն. Իրավ այս մեծ ազգը մի իմաստուն և հանճարեղ ժողովուրդ է» (Երկրորդ Օրինաց 26.19, 28.10, 4.6): Բայց քանի որ նրանք հավատարիմ չէին, աստվածային նպատակը կարող էր իրականացվել միայն տևական պատուհասների և ստորացումների միջոցով» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 28):

Այս շաբաթ, շարունակելով ուսումնասիրել Ամովս մարգարեի գիրքը, մենք կտեսնենք, թե էլ ի՞նչ ճանապարհներ էր օգտագործում Աստված՝ աղաչելով Իր ժողովրդին թողնել մեղքը և դառնալ Իրեն՝ կյանքի միակ ճշմարիտ Աղբյուրին: Վերջին հաշվով, մենք ամենքս կարող ենք ընտրել միայն մեկ բան՝ կյանքը կամ մահը: Ուրիշ այլընտրանք չկա: Ամովսը կիսաբացում է վարագույրը՝ մեզ ցույց տալով այդ երկու տարբերակների միջև առկա սուր հակադրությունը:

Ատեցե՛ք չարությունը և սիրեցե՛ք բարությունը

Իսրայելում իրավիճակն ավելի ու ավելի էր վատթարանում. ամենուրեք թագավորում էին կաշառակերությունը, հալածանքը, մեղքը: Բանը նրան էր հասել, որ խաղաքարտին էր դրվել հենց իր՝ ազգի գոյությունը: Ամովսն անգամ թաղման երգ էր գրել, որում ողբում էր Իսրայելի վերահաս մահը (Ամովս 5.1-15): Հաճախ մարգարեական գրքերում տարանջատումներ չկան մարգարեի խոսքերի և Տիրոջ խոսքերի միջև: Այդ պատճառով Ամովսի սգերգը նաև Աստծո տառապանքն է Իսրայելի համար:

Այդ թաղման երգի (Ամովս 5.1-15) նպատակն է՝ ցնցել ժողովրդին և ստիպել նրան նայել իրականության աչքերի մեջ: Եթե նրանք համառեն իրենց մեղքի մեջ, ապա անպայման կկործանվեն: Մյուս կողմից, եթե նրանք մերժեն չարը և վերադառնան Աստծուն, ապա կապրեն: Տերը մեզանից սպասում է հնազանդություն աստվածային կամքին:

Կարդացե՛ք Ամովս 5.14-ը,15-ը: Ինչպե՞ս կարող ենք սովորել ատել չարությունը և սիրել բարությունը: (Տե՛ս նաև Եբրայեցիս 5.14, Հռոմեացիս 12.9, Առակաց 8.36): _____

_____

_____

Ամովսը մարդկանց կոչ է անում ոչ թե պարզապես դադարել չարիք գործել, այլև ատել այն և սիրել բարին: Այս բաժնի հրամանները աճող բնույթ ունեն: Աստվածաշնչում «սիրել» բառը (եբր. ահավ) և «ատել» բառը (սանե) հաճախ վերաբերում են որոշումներին ու գործողություններին, այլ ոչ թե պարզապես զգացմունքներին ու փոխհարաբերություններին: Այլ խոսքերով, հարաբերությունների փոփոխությունը հանգեցնում է արարքների փոփոխությանը:

Ելնելով տվյալ համատեքստից՝ ի՞նչ նախազգուշացում ենք մենք գտնում Եսայիա 5.20-ում: _____

_____

_____

«Բոլոր նրանց, ովքեր փորձությունների այդ ժամին անվախորեն կծառայեն Աստծուն՝ ըստ խղճի թելադրանքի, անհրաժեշտ կլինի ունենալ խիզախություն, հաստատակամություն, ինչպես նաև Աստծո և Նրա Խոսքի իմացություն, որովհետև բոլոր հավատարիմները հալածյալ կլինեն, իսկ նրանց արարքները սխալ կմեկնաբանվեն. նրանց հայհո-

յելու են, նրանք ենթարկվելու են հանդիմանության և չարախոսության: Սատանան կդիմի ամեն տեսակ անարդար մոլորությունների, որպեսզի ազդի սրտերի վրա և մթագնի միտքը, որպեսզի չարը բարի թվա, և բարին՝ չար» (Է. Ուայթ, Գործք առաքելոց, 431):

Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել սիրել բարին և ատել չարը, եթե վտանգ կա ընկնել մոլորության մեջ և չարը բարի անվանել, իսկ բարին՝ չար: Ո՞րն է նման խաբեությունից մեր միակ պաշտպանությունը:

Երկուշաբթի *ապրիլի 29*

Կրոնը՝ որպես սովորական մի բան

Կարդացե՛ք Ամովս 5.23,24, Ովսե 6.6, Մատթեոս 9.13, Սաղմոս 50.19: Ինչի՞ մասին են խոսում այս համարները: Մենք ինչպե՞ս կարող ենք այստեղ բերված սկզբունքը կիրառել անմիջականորեն մեր այսօրվա հոգևոր կյանքի մեջ: Այլ խոսքերով, մենք ինչպե՞ս կարող ենք մեղավոր լինել՝ անելով հենց այն, ինչի մասին այստեղ նախազգուշացվում է: (Հիշեք նաև, որ այս ոլորտում շատ հեշտ է խաբվել): _____

_____

_____

_____

Ամովս մարգարեի գիրքը, ավելի, քան մյուս աստվածաշնչյան գրքերի մեծ մասը, շոշափում է անարդարության, դաժանության և անմարդկայնության խնդիրները: Այն նաև բացահայտում է նման արարքների հանդեպ աստվածային վերաբերմունքը: Ամովսը քարոզում էր այն մասին, որ Աստված արհամարհում է անկենդան ձևապաշտությամբ լի դատարկ ծեսերը և ժողովրդին բարենորոգման կոչ է անում: Տերը դժգոհ էր այն մարդկանց երկրպագության արտաքին դատարկ ձևերից, ովքեր միևնույն ժամանակ հալածում էին մյուսներին՝ սեփական շահից ելնելով: Նրանց կյանքը վկայում էր, որ նրանք աչքաթող էին արել կարևորագույն մի բան. ինչ է նշանակում լինել Յահվեի հետևորդներ: Այդ մարդիկ բոլորովին չէին հասկանում Նրա Օրենքի խորը նշանակությունը:

Իսկապես, Աստված մերժում էր նրանց կրոնական ծեսերը, որովհետև դրանք չէին բխում հավատով լի կյանքից: Ամովս 5.14,15-ում գրի առնված եզրափակիչ բառերը կոչ են անում որոնել Տիրոջն ու ապրել: Տիրոջը որոնելը հակադրվում է նշանավոր կրոնական կենտրոններ՝ Բեթել,

Գաղգաղա և Բերսաբե ուխտագնացություններին (Ամովս 5.5)՝ երեք քաղաք, որոնք կործանման էին դատապարտված:

Այն, ինչ Աստված իրականում ցանկանում էր տեսնել Իր ժողովրդի մեջ՝ արդարադատությունը և արդարությունն էին: «Տիրոջը որոնելու» հրամանը նման է «բարություն որոնելու» հրամանին: Տերը մնացորդին կոչ է անում հեռանալ չար գործերից ու կրոնական ձևապաշտությունից և դրա փոխարեն թույլ տալ, որ դատն ընթանա ջրի նման, և արդարությունը՝ ուժեղ հոսանքի նման: Եթե դատաստանն այն բանի պարզաբանումն է, ինչն արդար է Աստծո աչքում, ապա ճշմարտությունը/արդարությունը կյանքի որակ է՝ Աստծո և շրջապատող մարդկանց հետ փոխհարաբերություններում: Այստեղ ներկայացված են կրոնավոր մարդիկ, ում կրոնը հետադիմել է մինչև ձևերի ու ծեսերի մակարդակի, փոխանակ փոխելու սիրտը, ինչը հատուկ է ճշմարիտ հավատին (տե՛ս Երկրորդ Օրինաց 10.16):

Որքա՜ն ուշադիր և զգույշ մենք պետք է լինենք:

Երեքշաբթի ***ապրիլի 30***

Կանչված՝ լինելու մարգարե

Ամովսը ծնունդով Հուդայի Թեկուեից էր, բայց Աստված նրան ուղարկեց Իսրայելում մարգարեանալու: Նա ուղևորվեց Հյուսիսային թագավորություն և քարոզում էր այնպիսի զորությամբ, որ այդ երկիրը չէր կարող «դիմանալ նրա բոլոր խոսքերին» (Ամովս 7.10): Իհարկե, շատ իսրայելացիներ Ամովսին նայում էին կասկածանքով և նրան չէին ընդունում որպես Աստծո լրաբեր: Չնայած այն բրանին, որ իրեն չէին ընդունում, նա հավատարմորեն կատարում էր իր մարգարեական ծառայությունը:

Կարդացե՛ք Ամովս 7.10-17-ը: Վարքի ի՞նչ հաճախակի հանդիպող ցուցանմուշ է ցույց տրված այստեղ: Նման վարքի էլ ի՞նչ օրինակներ դուք կարող եք գտնել Աստվածաշնչում: Մենք ի՞նչ ենք սովորում այս օրինակներով: _____

_____

_____

Բեթելի քահանա Ամասիան այն մարդկանցից էր, ում դուր չէին գալիս Ամովսի քարոզները: Նա Ամովսին մեղադրեց Իսրայելի թագավորի դեմ դավադրության մեջ: Բեթելը թագավորական երկու սրբավայրերից մեկն էր՝ ուրացողական երկրպագության կենտրոնը: Ամովսը հրա-

պարակավ մարգարեացավ, որ եթե իսրայելացիները չապաշխարեն, նրանց թագավորը կմեռնի սրով, իսկ ժողովուրդը գերի կգնա: Ամասիան Ամովսին հրամայեց վերադառնալ Հուդա, որտեղ Իսրայելի դեմ նրա լուրերը առավել ընդունելի կլինեն:

Պատասխանելով քահանային՝ Ամովսը հաստատում է, որ իր մարգարեական կոչումը բխում է Աստծուց: Նա հայտարարում է, որ ինքը մասնագիտությամբ մարգարե չէ, ում կարելի է վարձատրությամբ ծառայության կանչել: Ամովսն իրեն առանձնացրեց այն մարգարեներից, ովքեր մարգարեանում էին փողի դիմաց:

Ճշմարտությունը հռչակելը ամենևին չի երաշխավորում դրա ընդունումը, որովհետև ճշմարտությունը ժամանակ առ ժամանակ կարող է հարմար չլինել, և եթե այն խանգարում է իշխանություն ունեցողներին, կարող է լուրջ դիմադրություն առաջ բերել: Աստծո կոչը Ամովսին ստիպում էր *այնքան* բացահայտորեն և *այնքան* խիզախաբար մերկացնել թագավորի և Հյուսիսային թագավորության ազնվականների մեղքերը, որ նրան մեղադրել են թագավորի դեմ ապստամբության մեջ:

Ինչպե՞ս ենք մենք ընդունում այն հանդիմանությունները, որ մեր արարքները և կամ կենսակերպը մեղսավոր են և մեզ պատժի կարժանացնեն: Մեր պատասխանը մեզ ի՞նչ է ասում հենց մեր և, հնարավոր է, մեր սիրտն ու վարքը փոխելու անհրաժեշտության մասին:

Չորեքշաբթի ***մայիսի 1***

Քաղցի վատթարագույն տեսակը

«Ահա օրեր են գալիս, ասում է Տեր Եհովան, որ սով պիտի ուղարկեմ երկրի վրա, ոչ թե հացի սով և ոչ ջրի ծարավ, այլ Տիրոջ խոսքը լսելու: Եվ պիտի թափառեն ծովից մինչև ծով և հյուսիսից մինչև արևելք, և նրանք պիտի ման գան Տիրոջ խոսքը որոնելու համար, և պիտի չգտնեն» (Ամովս 8.11,12): Մենք ինչպե՞ս պետք է հասկանանք այս համարները: _____

_____

_____

_____

8-րդ գլխում Ամովսը նկարագրում է չապաշխարած Իսրայելի հանդեպ Աստծո դատաստանների ավերիչ հետևանքները: Աստված ժողովրդին կպատժի մեղքերի համար՝ երկրին սով ուղարկելով: Բայց

11-րդ և 12-րդ համարներում մարգարեն խոսում է Աստծո Խոսքի քաղցի և ծարավի մասին: Մնացած ամեն ինչին գերազանցող ողբերգությունը Աստծո Խոսքի քաղցն է, որովհետև Աստված լռելու է, և ոչ մի ուրիշ սով չի կարող առավել սոսկալի լինել:

Հաճախ, երբ Իսրայել ժողովուրդը մեծամեծ աղետների էր ենթարկվում, նրանք մարգարեական խոսքի համար դիմում էին Տիրոջը՝ հուսալով Նրա ղեկավարությանն ու առաջնորդությանը: Այս անգամ Աստված լռելու է: Իր ժողովրդի հանդեպ Աստծո դատաստանի մի մասը կլինի այն, որ Տերը մարգարեներին չի տա Իր Խոսքը:

Իսկ թե Աստծո ժողովուրդը համառի անհնազանդության մեջ, ասում է մարգարեն, ապա կգա ժամանակ, երբ նա ծարավի կլինի լսել լուրը, սակայն դատաստանից խուսափելու հույսով Աստծո Խոսքին դիմելու համար չափազանց ուշ կլինի: Այդպիսին է Ամոս մարգարեի միջոցով ուղարկված Աստծո լուրին անսալուց համառորեն հրաժարվելու արդյունքը: Սավուղի նման՝ իր վերջին ճակատամարտից առաջ (Ա Թագավորաց 28.6), ժողովուրդը մի անգամ կգիտակցի, թե որքան է իրեն անհրաժեշտ Աստծո խոսքը:

Ողջ բնակչությունը հուսահատորեն որոնելու է Աստծո Խոսքը, այն նույն Խոսքը, որն իրենք մերժել էին մարգարեի ժամանակներում: Սա հատկապես կվերաբերի երիտասարդներին: Այն ժամանակ, երբ նախորդ սերունդները լսում էին Աստծո Խոսքը և մերժում այն, երիտասարդները երբեք մարգարեական լուր լսելու հնարավորություն չեն ունենա:

Հետևյալ համարներն ի՞նչ են ասում Աստծո լռության սարսափելի հետևանքների մասին: Ա Թագավորաց 14.37, Սաղմոս 74.9, Առակաց 1.28, Երեմիայի ողբը 2.9, Օվսե 5.6, Միքիա 3.5-7: _____

_____

_____

Մեր կյանքում ինչպե՞ս կարող ենք խլացնել Աստծո ձայնը: Որքան էլ սոսկալի լինի, խորհեցե՛ք այդ լռության հնարավոր հետևանքների մասին: Մենք ինչպե՞ս կարող ենք ապահովագրել մեզ, որպեսզի մեր կյանքում դա տեղի չունենա:

Հինգշաբթի ***մայիսի 2***

Հուդայի ավերակները վերականգնվա՛ծ են

Մարգարեն ժողովրդի մեղսավորության և գալիք պատիժների մռայլ պատկերից անցում է կատարում ապագա վերականգնման փառավոր

խոստումներին (Ամովս 9.11-15): Տիրոջ օրը, որն ավելի վաղ նկարագրված էր որպես պատժի օր (Ամովս 5.18), այժմ դառնում է փրկության օր, որովհետև հենց փրկությունը, այլ ոչ թե պատիժն է Աստծո վերջին խոսքն Իր ժողովրդին: Սակայն փրկությունը կգա պատժից *հետո*, ոչ թե դրա *փոխարեն*:

Չնայելով ողջ խավարին և անելանելիությանը՝ Ամովսն իր գիրքն ավարտում է հույսի լուրով: Գտնվելով անխուսափելի գերության շեմին՝ Դավթի տոհմն այնքան էր ընկել, որ այլևս չէր կարող տուն անվանվել, այլ ընդամենը՝ խրճիթ: Բայց Դավթի թագավորությունը կնորոգվի և կմիավորվի մեկ կառավարիչի իշխանության ներքո: Բացի հրեաներից, այլ ազգեր ևս կկանչեն Աստծո անունը և Իսրայելի հետ մեկտեղ կցնծան Նրա օրհնություններով: Գիրքն ավարտվում է այս երջանիկ, հույս ներշնչող նոտայով:

Աստվածաշնչյան մարգարեները չէին սովորեցնում, թե Աստծո պատիժը կիրառվում է հենց հանուն պատժելու նպատակով: Համարյա բոլոր նախազգուշացումներին հետևում է փրկագնման լուրը: Չնայած գերության սպառնալիքն անխուսափելի էր, Տերը մնացորդին սատարում է երկրի վերականգնման մասին խոստմամբ: Մնացորդը ցնծալու է ուխտի նորոգմամբ: Պատիժներն իրենց վրա կրողները կտեսնեն, թե ինչպես է Աստված փրկում և վերականգնում:

Ինչպիսի՞ն է Աստծո ժողովրդի վերականգնման մասին Ամովսի գրքում գրի առնված խոստումների վերջնական կատարումը: Տե՛ս Ղուկաս 1.32,33, Գործք առաքելոց 15.13-18: _____

_____

_____

Շատ հրեա ուսուցիչներ Ամովս 9.11-ը դիտարկում են որպես Աբրահամին տրված, Դավթի համար կրկին հաստատված և Հին Կտակարանում բազմիցս հիշատակված Փրկչի մասին խոստման կրկնություն: Դավթի տոհմից մի նոր թագավոր է իշխելու շատ ազգերի՝ ի կատարումն Աբրահամին տրված Աստծո խոստման (Ծննդոց 12.1-3): Մեսիան թագավորելու է անգամ թշնամիների վրա, ինչպես, օրինակ, Եդոմն է: Աստծո ժողովրդի վերականգնված ավերակները երբեք այլևս չեն ավերվի:

Հիսուս Քրիստոսի՝ Դավթի մեծագույն Որդու գալստյամբ Աստված հաաստատեց Իր ողորմած խոստումը: Հակոբոսը մեջբերել է Ամովսի այս համարը՝ ցույց տալու, որ փրկության դուռը բաց է հեթանոսների համար, որպեսզի նրանք էլ կարողանան ցնծալ՝ կիսելով այն ուխտի արտոնությունները, որ վստահված էր եկեղեցուն: Աստված փրկագնման

օրհնությունը հրեաներին և հեթանոսներին պարգևել էր խոստացված Փրկչի՝ Աբրահամի և Դավթի հետնորդի միջոցով:

Այս խոստումները ընդունող յուրաքանչյուր հրեայի և հեթանոսի համար դրանք վերջնականապես կիրականանան միայն երկրորդ գալստյան ժամանակ: Մենք ինչպե՞ս կարող ենք պահպանել այդ հույսն ու խոստումը՝ թույլ չտալով, որ կյանքի դժվարությունները մարեն դրանք:

Ուրբաթ ***մայիսի 5***

Հետագա ուսումնասիրության համար

«Մեր հոգևոր վիճակը կախված է ոչ թե մեր ստացած լույսի չափից, այլ նրանից, թե մենք ինչպես ենք վերաբերվում մեր ունեցածին: Այսպես, անգամ այն հեթանոսները, ովքեր ճշմարտությանը հետևում են այնքանով, որքանով իրենք են հասկանում դա, ավելի լավ վիճակում են գտնվում, քան նրանք, որ արժանացել են մեծ լույսի, իրենց համարում են Աստծո ծառաներ, բայց գործնականում անտեսում են լույսը և իրենց առօրյա կյանքով հակասում են իրենց հավատամքին» (է. Ուայթ, Դարերի փափագը, 239):

Հարցեր քննարկման համար

1. Դասի ժամանակ վերադարձե՛ք միաշաբթի օրվա դասի՝ բարու հանդեպ սիրո և չարի հանդեպ ատելության, ինչպես նաև չարը բարի, իսկ բարին չար անվանելու վտանգի վերաբերյալ հարցի պատասխաններին:
2. Ինչո՞ւ այն ժամանակ, երբ մշակույթն ու հասարակությունը սկսում են փոխել իրենց արժեքները՝ ընդունելով վարքի որոշ ձևեր, կենսակերպ և հարաբերություններ, որոնք բացահայտորեն դատապարտվում են Աստվածաշնչում, հասկացությունների փոխարինման վտանգը հատկապես արդիական է դառնում:
3. Որպես անհատներ և անգամ, ընդհանուր առմամբ, որպես եկեղեցի՝ մենք հակաթույն չունենք այն հասարակության մշակութային և սոցիալական միտումների հանդեպ, որում ապրում ենք, այնպես չէ՞: Խորհեցե՛ք այն փոփոխությունների մասին, որոնք վերջին տարիների ընթացքում տեղի են ունեցել ձեր մշակույթի և հասարակության մեջ: Օրինակ, այն, ինչ մի ժամանակ համարվում էր ամոթալի և

ինչի մասին չէր կարելի խոսել, այժմ բացահայտորեն քննարկվում և գործնականում կիրառվում է՝ համարվելով նույնիսկ լավ կամ, գոնե, ոչ վատ: Այս փոփոխություններն ինչպե՞ս են ազդել այդպիսի արարքների հանդեպ եկեղեցու վերաբերմունքի վրա: Մենք ի՞նչ կարող ենք անել՝ մեզ և եկեղեցին պաշտպանելու այն վտանգավոր ծուղակից, երբ չարն սկսում են բարի անվանել: Միևնույն ժամանակ, լավը համարվող ո՞ր մշակութային փոփոխություններն են լավ ազդեցություն գործել եկեղեցու վրա, ինչի արդյունքում այն սկսել է առավել հստակ կերպով արտացոլել սիրո և ընդունման այն սկզբունքները, որոնք հայտնվել էին Հիսուսի կյանքում:

4. Եվս մեկ անգամ խորհեցե՛ք Աստծո Խոսքի «քաղցի ու ծարավի» մասին: Ինչի՞ արդյունքում կարող է վրա հասնել այդ քաղցը: Տերը ճշմարտությունը կանխամտածվա՞ծ է ծածկում մարդկանցից, թե՞ դա տեղի է ունենում այն պատճառով, որ մարդիկ դառնում են Աստծո Խոսքի հանդեպ կատարելապես անընկալունակ: Կարո՞ղ է լինել և՛ մեկը, և՛ մյուսը: Թե՞ պատճառը բացարձակապես այլ բան է: Քննարկե՛ք:
5. Որպես այդքան լույս ստացած և մեզ պարգևված ճշմարտությանը հավատալու համար այդքան շատ պատճառներ ունեցող Յոթերորդ օրվա ադվենտիստներ՝ մենք ենթակա չե՞նք վտանգի՝ մտածելու, թե այդ հրաշալի ճշմարտությունների մեր իմացությունը այն ամենն է, ինչ մեզ հարկավոր է: Ինչպե՞ս պետք է մեզ օրհնություն պարգևած այդ ճշմարտությունները ազդեն մեր կյանքի և շրջապատողների հետ մեր փոխհարաբերությունների վրա ոչ միայն եկեղեցում, այլև հասարակության մեջ: Այլ խոսքերով, մենք ինչպե՞ս կարող ենք ապրել մեզ վստահված ճշմարտություններին համապատասխան: Ինչո՞ւ է դա այդքան կարևոր:

ՆԵՐԵԼՈՒ ՁԳՏՈՂԸ

(ՀՈՎՆԱՆ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԸ)

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հովնան 1-4, Սաղմոս 138.1-12, Եսայիա 42.5, Հայտնություն 10.6, Մատթեոս 12.39-41, Բ Մնացորդաց 36.15-17:

Հիշելու համարը.

«Փուչ ունայնությունների նայողները իրենց լինելու ողորմությունը թողնում են: Բայց ես օրհներգության ձայնով Քեզ զոհ պիտի մատուցեմ, արած խոստումս պիտի կատարեմ. փրկությունը Տիրոջն է» (Հովնան 2.8,9):

Հիմնական միտքը.

Հովնան մարգարեի գիրքը ցույց է տալիս, որ Աստված շատ ավելի հաճույքով է ներում մարդկանց, քան մենք ինքներս:

Հովնանի՝ Աստծո այդ բավականին արտասովոր լրաբերի պատմությունը ամենահայտնի աստվածաշնչյան պատմություններից մեկն է: Մարգարեն Աստծո կողմից ուղարկվել էր՝ Նինվեին նախազգուշացնելու վերահաս կործանման մասին: Նա կասկածում էր, որ հրեա ազգին չպատկանող այդ մարդիկ կարող են ապաշխարել իրենց մեղքերի համար, և Աստված կների նրանց: Ճշմարիտ մարգարե լինելով՝ Հովնանը գիտեր, որ Աստված ցանկանում էր փրկել, և ոչ թե կործանել Նինվեն: Հնարավոր է, որ հենց այդ պատճառով նա սկզբում փորձեց փախչել: Սակայն, իրենից չկախված հանգամանքների ազդեցությամբ Հովնանը միտքը փոխեց և որոշեց ենթարկվել Աստծո հրամանին:

Ի պատասխան Հովնանի քարոզի՝ ողջ քաղաքը հավատաց ուղարկված լուրին և ապաշխարեց այնպես, ինչպես, ցավոք, չէին ապաշխարել Իսրայելն ու Հուդան: Իսկ Հովնանն այդ ժամանակ մի ամբողջ շարք կարևոր ճշմարտություններ հասկացավ: Այս պատմությունը ցույց է տալիս, թե ինչպես էր Աստված Իր սահմանափակ ու կամակոր մարգարեին սովորեցնում բարության, ողորմության ու ներման դասերը:

Անհնազանդ մարգարեն (Հովնան 1)

Մենք այնքան էլ շատ բան չգիտենք Հովնանի ու նրա ընտանիքի մասին: Դ Թագավորաց 14.25-ը պատմում է, որ նա ապրում էր Իսրայելի հյուսիսային մասում և իր ծառայությունը կատարում էր ՔԱ ութերորդ դարում: Նույն համարից հետևում է, որ Հովնանը մարգարեացել է Իսրայելի թագավորության տարածքային ընդարձակումը:

Նինվեն պատմականորեն Ասորեստանի՝ Տիգրիս գետի ափին գտնվող մեծ պետության երեք խոշորագույն քաղաքներից մեկն էր: Քանի որ Աստված բոլոր ազգերի Տերն է, և բոլոր մարդիկ հաշվետու են Նրան (Ամովս 1, 2), Նա Իր ծառա Հովնանին ուղարկեց՝ նինվեացիներին նախազգուշացնելու գալիք կործանման մասին: Հովնան 1.2-ում գրված հրամանը՝ «քարոզիր նրա դեմ», կարելի է թարգմանել նաև «քարոզիր նրան»:

Ասորական դաժանությունը հանրահայտ էր: Մոտավորապես մեկ դար անց Նաում մարգարեն Նինվեի մասին ասել է. «Վա՜յ արյունահեղությունների քաղաքին. բոլորը լիքն է ստությամբ՝ հափշտակությամբ»: Հովնանը Աստծո կողմից լուրով ուղարկվել էր այդ մարդկանց մոտ: Բացի մնացյալից, հնարավոր է, որ Հովնանը վախենում էր ատելի ասորեստանցիներից, և դա նույնպես ազդել էր նրա որոշման վրա: Երբ Աստված ասաց նրան՝ գնալ դեպի արևմուտք՝ Նինվե, մարգարեն հրաժարվեց և փորձեց փախչել արևմուտք՝ նստելով Թարսիս ուղևորվող նավը:

Սկզբում ամեն բան կարծես լավ էր դասավորվում Հովնանի համար, բայց հետո Տերը ծովի վրա ուժեղ քամի բարձրացրեց՝ ցույց տալով Իր ծառային, որ ոչ ոք չի կարող թաքնվել Իրենից:

Հովնանը փախչում էր Աստծուց, որովհետև չէր ուզում կատարել Նրա կամքը: Այսօր էլ մարդիկ շատ պատճառներ ունեն Աստծուց փախչելու համար: Ոմանք դա անում են այն պատճառով, որ անձամբ չեն ճանաչում Աստծուն: Ուրիշները մերժում են Աստծո և Նրա Խոսքի բուն իսկ գոյությունը: Թեև նրանք գործում են տարբեր շարժառիթներից դրդված, ամենից հաճախ դա տեղի է ունենում այն պատճառով, որ նրանք չեն ցանկանում մեղքի զգացում ապրել իրենց վարած կենսակերպի պատճառով: *Ի վերջո, եթե չկա ավելի ուժեղ մեկը, ում առջև անհրաժեշտ է պարտասիան տալ սեփական արարքների համար, ինչո՞ւ չանել այն, ինչ հարմար է:* Որոշ քրիստոնյաներ նույնիսկ խուսափում

են Աստծուց, երբ Նա իրենց կոչ է անում անել ինչ-որ բան, ինչ իրենք չեն ուզում, և ինչը չի համապատասխանում իրենց եսամոլ ու մեղավոր էությանը:

Կարդացե՛ք Սաղմոս 139.1-12-ը: Ո՞րն է այս հատվածի գլխավոր լուրը: Ձեր մեջ ի՞նչ զգացմունքներ է առաջ բերում այդ հիմնարար ճշմարտությունը: Մենք հավատում ենք, որ Աստված ոչ միայն տեսնում է ամենը, ինչ մենք անում ենք, այլև կարդում է անգամ մեր մտքերը: Ապրո՞ւմ ենք մենք, արդյոք, այդ ճշմարտության մշտական գիտակցմամբ, թե՞ փորձում ենք չմտածել այդ մասին: Կամ, միգուցե, մենք այնքան ենք հարմարվել դրան, որ առանձնահատուկ նշանակություն չենք տալիս: Որքանո՞վ կփոխվեր ձեր վարքը, եթե ողջ ժամանակ խորապես գիտակցեիք այն փաստը, որ Աստված իսկապես գիտի ձեր ամեն մի միտքը:

Երկուշաբթի ***մայիսի 6***

Ակամա վկան

Հովնան մարգարեի գրքի առաջին գլխում պատմվում է, որ Տերը ցանկանում է կանգնեցնել Հովնանի փախուստը և այդ պատճառով փոթորիկ է առաջ բերում, ինչը սպառնում է խորտակել նավը: Նավաստիները կանչում են իրենց աստվածներին՝ նրանցից օգնություն խնդրելով: Բայց փոթորկի դաժանությունից նրանք ենթադրում են, որ, հնարավոր է, իրենցից որևէ մեկը հարուցել է աստվածների զայրույթը: Նրանք վիճակ են գցում՝ իմանալու, թե իրենցից ով կարող է առաջինը իր մասին պատմել ինչ-որ բան, ինչը կարող էր սանձազերծված աղետի բացատրություն լինել: Վիճակ գցելու համար յուրաքանչյուրը բերում է ճանաչելի քարե կամ փայտե մի առարկա: Այդ առարկաները լցնում են մի անոթի մեջ և խառնում: Հետո դրանցից մեկը հանում են: Վիճակն ընկնում է Հովնանի վրա, ով արդեն ընդունում է իր մեղքերը և նավաստիներին համոզում ծովը նետել իրեն:

Այս պատմությունը նշանավոր է նրանով, որ այստեղ հեթանոս նավաստիները իրենց դրականապես են դրսևորում, այն դեպքում, երբ Հովնանը հառնում է բացասական լույսի ներքո: Թեև նրանք շատ աստվածների էին երկրպագում, նավաստիները ավելի մեծ հարգանք են դրսևորում Տիրոջ հանդեպ, ում աղերսում ու կանչում են վտանգի պահին: Նրանք բարի են նաև Տիրոջ ծառա Հովնանի հանդեպ և այդ պատճառով փոխում են իրենց երթուղին և փորձում թիավարել դեպի ափը: Բայց, ի

վերջո, համաձայնում են, որ նա պետք է դուրս նետվի նավից: Դրանից հետո փոթորիկը դադարում է, նավաստիները զոհ են մատուցում Տիրոջը և փառաբանում Նրան:

8-րդ համարում ինչպե՞ս է Հովնանը նկարագրում Տիրոջը, ում ինքը, համաձայն իր խոսքերի, պատվում է: Ի՞նչն է հատկապես կարևոր Տիրոջ՝ նրա նկարագրության մեջ: Տե՛ս նաև Հայտնություն 14.7, 10.6, Եսայիա 42.5: _____

_____

_____

_____

Հովնանի՝ Աստծուն որպես ծովի և երկրի Արարիչ դավանելը ընդգծում է Աստծո ներկայությունից թաքնվելու նրա փորձերի անօգուտ լինելը: Փոթորկի անհապաղ դադարումն այն բանից հետո, երբ նավաստիները Հովնանին նավից դուրս նետեցին, ցույց տվեց, որ Տերը՝ որպես Արարիչ, իշխանություն ունի ծովի վրա: Այդ պատճառով հեթանոսները երկրպագեցին Տիրոջը: Մեզ չի ասվում, թե ինչքան երկար ժամանակ պահպանվեցին նրանց երկյուղածությունն ու վախը առ Աստված: Սակայն անկասկած է, որ նրանք այս փորձառությունից որոշ բան իմացան Նրա մասին:

Մենք դժվարությամբ ենք ըմբռնում շրջապատող աշխարհի շատ հրաշքներ: Է՛լ ավելի քիչ գիտենք այն ամենի մասին, ինչ գտնվում է մեր աշխարհի և անգամ մեր երևակայության սահմաններից դուրս: Արարիչն ինչպե՞ս է խոսում Իր արարչագործության միջոցով:

Երեքշաբթի ***Մայիսի 7***

Հովնանի սաղմոսը

Երբ Հովնանին նետեցին ծովը, Աստծո հրամանով մի մեծ ձուկ կուլ տվեց նրան: Հավանաբար, Հովնանը մտածում էր, որ միայն մահը կօգնի իրեն՝ խուսափել Նինվեի առաքելությունից: Բայց մեծ ձուկը (բնագրի տեքստում ասված չէ, թե դա կետ է եղել) միջոց դարձավ մարգարեի փրկության համար: Ի տարբերություն Հովնանի՝ այդ արարածը արագ ու ճշգրտորեն արձագանքեց Աստծո հրամանին (Հովնան 1.17, 2.10):

Այստեղ զարմանալիորեն գործեց Աստծո նախախնամությունը և, չնայած որոշ մարդիկ թերահավատորեն են վերաբերվում այս պատմությանը, Հիսուսը հաստատեց դրա իրական լինելը (Մատթեոս 12.40)

և Իր մահվան և ֆիզիկական հարության մասին խոսելիս անգամ հղում կատարեց դրան:

Կարդացե՛ք Հովնան 2-ը: Այս գլուխը հաճախ անվանում են Հովնանի սաղմոս: Ինչի՞ մասին է նա այստեղ խոսում: Ի՞նչ էր նա սովորել: Մենք ի՞նչ հոգևոր սկզբունքներ կարող ենք քաղել այս գլխից: _____

_____

_____

Հովնանի սաղմոսը փառաբանում է ծովային սոսկալի անդունդից Աստծո պարգևած ազատագրումը: Սա գրքի միակ բանաստեղծական մասն է: Այստեղ Հովնանը հիշում է օգնության մասին իր աղոթքը, երբ սուզվում էր ծովի խորքը, և իրեն անխուսափելի մահ էր սպասվում: Լիովին գիտակցելով իր հրաշալի փրկությունը՝ նա շնորհակալություն հայտնեց Աստծուն: Այդ օրհներգը վկայում է, որ Հովնանը ծանոթ էր փառաբանության և երախտագիտության աստվածաշնչյան սաղմոսներին:

Հովնանի երդումն ավելի շուտ ամփոփվում էր շնորհակալական զոհի մեջ: Նա շնորհակալ էր այն բանի համար, որ, թեև ինքն արժանի էր մահվան, Աստված իր հանդեպ մեծագույն ողորմություն ցուցաբերեց: Չնայած իր անհնազանդությանը՝ Հովնանն իրեն համարում էր Աստծուն առաջվա նման հավատարիմ, որովհետև ինքը չէր մասնակցել կուռքերի երկրպագությանը: Չնայելով իր բնավորության բազում թերություններին՝ նա որոշեց փորձել հավատարիմ լինել իր կոչմանը:

Երբեմն մեր սրտերը Տիրոջ առջև բացելու և գիտակցելու համար, որ Նա մեր միակ հույսն ու միակ փրկությունն է, անհրաժեշտ է անցնել սոսկալի փորձությունների միջով: Խորհեցե՛ք ձեր փորձառության մասին, երբ պարզորոշ տեսել եք Տիրոջ ձեռքը ձեր կյանքում: Ինչո՞ւ Աստծո առաջնորդության և անգամ հրաշքների դրսևորման փորձառությունները այդքան հեշտությամբ մոռացվում են, հատկապես՝ երբ գալիս են նոր փորձություններ:

Չորեքշաբթի ***մայիսի 8***

Հաջողված առաքելություն

Այդպիսի հրաշալի ազատագրումից հետո Հովնանն անհապաղ հնազանդվեց Աստծո կրկնակի հրամանին՝ գնալ ու քարոզել Նինվեում: Իր քարոզում (Հովնան 3.4) նա օգտագործում է Սոդոմի և Գոմորի հան-

դեպ Աստծո դատաստանի լեզուն հիշեցնող լեզու (Ծննդոց 19): Բայց եբրայերեն լեզվում *խաֆակ՝* «պիտի կործանվի» բառը (տե՛ս Ծննդոց 19.21,29), որը հանդիպում է Հովնանի քարոզի մեջ, նաև կարող է ունենալ «կփոխվի», «դարձի կգա» կամ «կվերափոխվի» իմաստը (Ելից 7.17,20, Ա Թագավորաց 10.6): Հովնանի կողմից աստվածային լուրի հռչակումը իզուր չէր:

Հովնանի մարգարեական ծառայության մեծագույն ձեռքբերումը դարձավ քաղաքի ապաշխարությունը: Նինվեացիները նավաստիներից հետո դարձան հեթանոսների երկրորդ խումբը, ովքեր դարձի եկան առ Աստված, և այդ ամենը՝ Աստծո անկատար լրաբերի հետ փոխազդեցության շնորհիվ: Արդյունքները ցնցող էին: Ի նշան Աստծո առջև իր խոնարհության՝ Նինվեի ժողովուրդը քուրձ հագավ, գլխին մոխիր ցանեց և ծոմ պահեց: Այս ամենը խոսում էր նրանց զղջման և ապաշխարության մասին:

Կարդացե՛ք Մատթեոս 12.39-41-ը և Բ Մնացորդաց 36.15-17-ը: Այս համարները մեզ ի՞նչ են ասում ապաշխարության կարևորության մասին: _____

_____

Ասորական հզոր միապետի խոնարհման նշանավոր պատկերը, ով իր գլխին մոխիր ցանեց Աստծո առջև, իբրև հանդիմանություն էր ծառայում իսրայելական շատ կառավարչների ու ժողովրդի համար, ովքեր համառորեն մերժում էին ապաշխարության մարգարեական կոչերը: Քանի որ Հովնան մարգարեի գիրքը շեշտադրում է Աստծո շնորհն ու ներումը, հրեա ժողովուրդն այն կարդում է ամեն օր՝ Քավության օրվա ավարտի ժամանակ՝ տոնելով իրենց մեղքերի ներումը:

«Մեր Աստվածը կարեկցանքի Աստված է: Երկայմանտությամբ և քնքուշ ողորմությամբ է Նա վերաբերվում Իր օրենքը խախտողներին: Սակայն մեր օրերում, երբ մարդիկ սուրբ Գրքում ներկայացված Աստծո օրենքը ճանաչելու այդքա՜ն հնարավորություններ ունեն, տիեզերքի մեծ Տիրակալը չի կարող գոհությամբ նայել այն չար քաղաքներին, որտեղ թագավորում էին բռնությունն ու հանցավորությունը: Եթե այդ քաղաքների մարդիկ ապաշխարեին, ինչպես Նինվեի բնակիչները, անհամեմատ ավելի շատ լուրեր կուղարկվեին՝ նման Հովնանի լուրերին» (Է. Ուայթ, The Adventist Review and Sabbath Herald, 18 հոկտեմբերի, 1906):

Կարդացե՛ք Հովնան 3.5-10-ը: Այս համարներն ի՞նչ են ասում ճշմարիտ ապաշխարության բնույթի մասին: Մենք ինչպե՞ս կարող ենք այդ սկզբունքները կիրառել մեր նկատմամբ:

Ներված, բայց չներող

Կարդացե՛ք Հովնան 4-ը: Հովնանն ի՞նչ կարևոր դասեր պետք է յուրացներ: Այստեղ ինչպե՞ս է ի հայտ գալիս նրա սեփական կեղծավորությունը: _____

_____

Հովնանի գրքի 4-րդ գլխում ի հայտ են գալիս որոշ զարմանալի պահեր, որոնք վերաբերում են մարգարեին: Ըստ երևույթին, նա ավելի շուտ գերադասում է մեռնել, քան Աստծո շնորհի ու ներման վկան դառնալ: Չնայած դեռ վերջերս Հովնանը ցնծում էր մահից իր փրկությամբ (Հովնան 2.7-9), այժմ, երբ Նինվեն ներում է ստացել, նա գերադասում է մեռնել (Հովնան 4.2,3):

Ի տարբերություն Հովնանի, Աստված Սուրբ Գրքում ներկայացված է որպես Մեկը, ով չի ցանկանում մեղավորի մահը (Եզեկիել 33.11): Հովնանը և նրա շատ հայրենակիցներ վայելում էին Աստծո առանձնահատուկ ողորմությունն Իսրայելի հանդեպ, բայց ցանկանում էին, որ Նրա ցասումը լիակատար չափով թափվի իրենց թշնամիների վրա: Այդպիսի խստասրտությունը խստիվ դատապարտվում է այս գրքի լուրով:

Մենք ի՞նչ կարող ենք սովորել Հովնանի սխալներից: Մեր կանխակալ կարծիքներն ինչպե՞ս են այսօր անվանարկում մեր քրիստոնեական վկայությունը: _____

_____

_____

Ճիշտ են նկատել, որ Հովնան մարգարեի գիրքը տեղեկատու է այն հարցի կապակցությամբ, թե ինչպես կարելի է *չլինել* մարգարե: Հովնանը խռովարար հոգով և սխալ նախապատվություններով մարգարե էր: Նա չէր կարողանում վերահսկել վրեժի իր ցանկությունը: Նա մանրախնդիր էր և անզուսպ: Փոխանակ ուրախանալու նինվեացիների հանդեպ դրսևորած Աստծո շնորհով, Հովնանը թույլ տվեց, որ իր եսասեիրական, մեղսավոր հպարտությունը վիրավորվի:

Հովնանի վերջին խոսքը մահվան ցանկությունն էր (Հովնան 4.8,9), այն դեպքում, երբ Աստծո վերջին բառերը վկայում են նրա անսահման շնորհի մասին և իրենց մեջ կյանք ունեն:

Հովնան մարգարեի գիրքը կարծես մնում է անավարտ: Նրա եզրափակիչ համարներն ընթերցողների առջև մի կարևոր հարց են

բարձրացնում, որին հեղինակը պատասխան չի տվել. նինվեացիների սրտում տեղի ունեցած հրաշալի փոփոխությունները վերջնական արդյունքում արդյո՞ք արմատական փոփոխություններ առաջացրին Հովնանի սրտում

Հովնանի մասին պատմության մեջ շատ բան դժվար է հասկանալ, դժվար է հասկանալ հենց իրեն՝ Հովնանին: Հնարավոր է, որ ամենագլխավոր դասն այն է, որ Աստծո շնորհն ու ներումը շատ ավելի հեռու են տարածվում, քան մենք պատկերացնում ենք: Նայելով Հովնանի և նինվեացիների հանդեպ Աստծո վերաբերմունքի օրինակին՝ ինչպե՞ս կարող ենք սովորել առավել գթասիրտ ու ներող լինել նրանց նկատմամբ, ովքեր դրան արժանի չեն:

Ուրբաթ ***մայիսի 10***

Հետագա ուսումնասիրության համար

Կարդացե՛ք առաջարկված մեջբերումներն ու քննարկե՛ք, թե դրանք ինչպես են օգնում մեզ առավել հստակ հասկանալ Հովնան մարգարեի գրքի լուրերը:

«Աստծո զավակները ցանկացած կարիքի մեջ թանկարժեք առավելություն ունեն՝ Նրան դիմել օգնության խնդրանքով: Որքան էլ տեղն անպատեհ լինի, Աստված Իր գթասրտությամբ կլսի նրանց աղաղակը: Որքան էլ միայնակ ու խավար լինի վայրը, այն Աստծո աղոթող զավակի կողմից կարող է իսկական տաճարի վերածվել» (Է. Ուայթ, The SDA Bible Commentary, հտ. 4, 1003):

Շփոթահար, խոնարհված ու չհասկանալով, թե ինչու Աստված ներեց Նինվեին, Հովնանն, այնուամենայնիվ, կատարեց իրեն տրված հանձնարարությունը՝ նախազգուշացնել մեծ քաղաքին: Եվ թեև նրա մարգարեությունները չիրականացան, այս լուրը նրան վստահվել էր Աստծո կողմից, և այն ուներ իր նշանակությունը: Հեթանոսներին հայտնվեց Նրա շնորհի փառքը» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 272, 273):

Հարցեր քննարկման համար

1. Հովնան մարգարեի գիրքը սովորեցնում է, որ Աստված լիովին կառավարում է բնությունը: Պատկերացրե՛ք, որ ձեր ընկերներից մեկը

տարերային աղետի հետևանքով կորցրել է իր ընտանիքի անդամին: Դուք ինչպե՞ս կբացատրեիք նրան, որ ամեն բան առաջվա նման ենթակա է Աստծուն՝ չնայելով տարերայի աղետներին, որոնք ամայացնում են մեր երկրի որոշ տարածքներ և շատ մարդկային կյանք խլում:

2. Կարդացե՛ք Հովնան մարգարեի գրքի վերջին համարը: Այն մեզ ի՞նչ է սովորեցնում աշխարհի բոլոր անկյուններում ավետարանելու՝ մեզ վրա դրված պարտականության վերաբերյալ:
3. Չներող ծառայի մասին առակում (Մատթեոս 18.21-35) Հիսուսը Աստծուն համեմատեց զայրացած թագավորի հետ, ով չեղյալ համարեց իր ներումը և նախկինում ներված ծառային բանտ նետեց: Իսկապե՞ս Աստված չեղյալ համարեց Իր ներումը: Որոշ քրիստոնյաներ կտրականապես պնդում են, որ դա այդպես չէ: Այս հարցով ի՞նչ դիրքորոշում ունենք մենք՝ որպես եկեղեցի, և ինչո՞ւ:
4. Աթեիստ շատ մարդկանց համար այն միտքը, որ «մեծ ձուկը» մարդուն ողջ-ողջ կուլ է տվել, և նա ապրում է «մեծ ձկան» ներսում, հնչում է իբրև հեքիաթային մի բան և լուրջ չի ընդունվում: Սակայն, ինչպես մենք արդեն ասել ենք, Հիսուսը պարզորոշ վկայեց այդ պատմության ճշմարիտ լինելու մասին: Հովնանի պատմությունն ինչպե՞ս է օգնում մեզ գիտակցել, թե իրականում որքան նեղ ու սահմանափակ է այն տեսակետը, որը ժխտում է գերբնականը:

ԱՍՏԾՈ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

(ՄԻՔԻԱ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԸ)

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Միքիա 1.1-9, Բ Կորնթացիս 11.23-27, Միքիա 2.1-11, 5.2, 6.1-8, 7.18-20:

Հիշելու համարը.

«Քեզ հայտնել է, ո՛վ մարդ, թե ինչ է բարին, և Տերը ինչ է ուզում քեզանից. այլ միայն իրավունք անել, ողորմություն սիրել և խոնարհությամբ վարվել քո Աստծո հետ» (Միքիա 6.8):

Հիմնական միտքը.

Անգամ մեծագույն ուրացության ժամանակներում Տերը ցանկանում էր ներել ու բժշկել Իր ժողովրդին:

Միքիա մարգարեն իր ծառայությունն իրականացնում էր Իսրայելի պատմության ամենամռայլ ժամանակահատվածներից մեկում: Երկիրը երկար ժամանակ բաժանված էր երկու թագավորությունների: Ի վերջո Ասորեստանը վերջ դրեց Հյուսիսային թագավորությանը, և Միքիան տեսավ, թե ինչպես չարիքն ու բռնությունն աստիճանաբար տիրում էին Հարավային թագավորությանը՝ Հուդային: Մարգարեն հանդիմանում էր անազնվությունը, անարդարությունը, կաշառակերությունն ու անհավատությունը: Միքիան առաջին աստվածաշնչյան մարգարեն էր, ով մարգարեացել է Երուսաղեմի ավերումը (Միքիա 3.12):

Սակայն աստվածային ներշնչանքը մարգարեին թույլ տվեց այդ խավար ժամանակներում լույս տեսնել: Միքիան ոգևորիչ բառեր է ասում և հռչակում, որ Տիրոջ օծյալ Իշխանը կսերի Բեթղեհեմից: Մեսիան կլինի այն Առաջնորդը, ով կփրկի Իսրայելը և ժողովուրդներին խաղաղություն կհռչակի՝ սովորեցնելով նրանց «սրերը խոփեր դարձնել» (Միքիա 4.3): Աստծո հանդիմանությունը կդառնա վերականգնման և մեծ օրհնությունների ճանապարհ:

Մարգարեի սրտի ցավը

Միքիա 1.1-9-ում մարգարեն հրավիրում է ողջ աշխարհին՝ դառնալու մեղավոր մարդկանց հանդեպ Աստծո դատաստանի վկաները: Սամարիա և Երուսաղեմ մայրաքաղաքները հատկապես առանձնացված են մարգարեության մեջ, որովհետև նրանց առաջնորդները օրինակ չէին ծառայում, թե ինչպես պետք է ողջ սրտով հետևել Աստծուն: Այդ երկու քաղաքներն առաջին հերթին են տուժելու ավերածություններից:

Ավերիչ դատաստանի մասին մտքերը ոչ քիչ լարվածություն են առաջ բերել Միքիայի կյանքում: Քանի որ մարգարեական կոչումը միավորել էր նրան Աստծո մտադրության հետ, նա չուներ այլ ընտրություն,, քան խոսելը այն մասին, թե ինչ պետք է տեղի ունենա մոտ ապագայում: Բայց մարգարեն սիրում էր իր ժողովրդին, և նրա գերության մասին միտքը տրտմեցնում էր նրան: Հաճախ վատ լուրերը ծանր բեռի նման ճնշում էին մարգարեի միտքն ու մարմինը:

Ստորև բերված համարներն ի՞նչ են ասում մարգարեի ծանր վիճակի մասին: Թվոց 11.10-15, Գ Թագավորաց 19.14, Երեմիա 8.21-9.2, Եզեկիել 24.15-18, Բ Կորնթացիս 11.23-27: _____

_____

_____

Աստծո մարգարեները սերտորեն կապված էին իրենց իսկ հռչակած լուրերի հետ: Նրանց բավականություն չէր պատճառում մոտեցող աղետների մասին խոսելը: Նրանք հաճախ հառաչում ու արտասվում էին՝ իրենց արձագանքն արտահայտելով վերահաս աղետներին: Մարգարեներն իսկապես ցավ էին ապրում: Նրանց ունկնդիրների համար լուրը բաղկացած էր ինչպես մարգարեական խոսքերից, այնպես էլ՝ արտաքին նշաններից, որոնք հաճախ սրտի խորքից եկող խորը ցավ էին արտահայտում: Աստծո դատաստանին Միքիայի արձագանքը հիշեցնում է Եսայիայի արձագանքը, ով երեք տարվա ընթացքում կիսամերկ ու բոկոտն շրջում էր՝ ակներևաբար պատկերելով այն ամոթն ու խայտառակությունը, որ իր հետ կբերի գերությունը: Դուք նաև կարող եք կարդալ այն մեծ տառապանքների մասին, որոնց միջով իր ծառայության ընթացքում անցել է Էլեն Ուայթը: Դա կօգնի ավելի լավ հասկանալ, թե ինչի միջով են ստիպված եղել անցնել Աստծո ծառայողները:

Կարդացե՛ք Ա Պետրոս 4.14-16-ը և խորհեցե՛ք ձեր և այն փորձությունների մասին, որոնց միջով դուք անցնում եք: Ձեր ո՞ր

տառապանքների պատճառն է առ Աստված ձեր հավատարմությունը: Եվ որո՞նց պատճառն է անհավատարմությունը:

Երկուշաբթի *Մայիսի 13*

Անօրենություն խորհողները

Կարդացե՛ք Միքիա 2.1-11-ը և Միքիա 3-ը: Ո՞ր մեղքերի համար է այդ մարդկանց դատ սպառնում: _____

_____

Աքազի գահակալությունը Եսայիային և իր գործընկերներին այնպիսի դժվարի դրության մեջ դրեց, որ Հուդայում դեռ չէր եղել: Շատերը, ովքեր նախկինում չէին ենթարկվել հեթանոսական սովորույթների գերող ազդեցությանը, այժմ համաձայնեցին մասնակցել հեթանոսական աստվածների երկրպագությանը: Իսրայել ժողովրդի իշխանները չէին արդարացնում իրենց հանդեպ ցուցաբերված վստահությունը, ի հայտ եկան կեղծ մարգարեներ, ովքեր մարդկանց գցում էին մոլորության մեջ, և անգամ որոշ քահանաներ ժողովրդին հանուն շահի էին սովորեցնում: Եվ դրա հետ մեկտեղ ուրացության նախաձեռնողները ձևականորեն պահում էին Տիրոջ ծառայությունը՝ իրենց Աստծո ժողովրդի մաս համարելով:

Միքիա մարգարեն, ով աշխատում էր այն անհանգիստ ժամանակներում, վկայում էր, որ մեղավորները Սիոնի վրա հավակնում են, որ իրենք «Տիրոջ վրա են կռթնում» և աստվածուրացությամբ հայտարարում են. «Չէ՞ որ Տերը մեր մեջ է. մեզ վրա չարիք չի գա», շարունակում էին «Սիոնը արյունահեղությամբ շինելով և Երուսաղեմը՝ անիրավությամբ» (Միքիա 3.11,10)» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 322):

Խնդիրը, որին մշտապես բախվում էր հրեա ժողովուրդը, ինքնախաբեությունն էր: Նրանք վստահ էին, որ իրենց առանձնահատուկ կարգավիճակը՝ որպես Աստծո ժողովուրդ, և ճշմարիտ Աստծո իրենց ճանաչողությունը՝ ի տարբերություն անիմաստ հեթանոսական կռապաշտության (տե՛ս Սաղմոս 115.12-17), իրենց ինչ-որ կերպ անխոցելի են դարձնում Աստծո պատժի համար: Սակայն ահեղ ճշմարտությունն այն էր, որ *հենց այն պատճառով, որ նրանք առանձնահատուկ կարգավիճակ ունեին Աստծո առջև*, նրանցից շատ ավելի խստորեն էր հաշիվ պահանջվելու իրենց մեղքերի դիմաց: Կրկին ու կրկին, ինչպես, օրինակ, Երկրորդ Օրինաց գրքում, Տերը նախազգուշացնում էր, որ բոլոր օրհնությունները, պաշտպանությունն ու բարգավաճումը նրանց

խոստացված են Իր պատվիրաններին հնազանդվելու պայմանով: «Միայն զգույշ եղիր, և քո հոգուն շատ զգուշություն արա, որ չլինի թե մոռանաս այն բաները, որ քո աչքերը տեսան, և չլինի թե նրանք քո սրտից դուրս գան քո կյանքի բոլոր օրերում, այլ քո որդիներին և որդիներիդ որդիներին սովորեցնես» (Երկրորդ Օրինաց 4.9):

Իսկ մենք չե՞նք փորձում խաբել ինքներս մեզ: Ինչո՞ւ մենք՝ Յոթերորդ օրվա ադվենտիստներս, որ այդքան մեծ լույս ունենք, գտնվում ենք այդ նույն սխալը գործելու վտանգի ներքո:

Երեքշաբթի ***Մայիսի 14***

Նոր իշխանը Բեթղեհեմից

Միքիա մարգարեի գրքում տրամադրությունը հաճախ փոխվում է խավարից դեպի մեծագույն հույս: Այդ հույսը տեսանելի է ամենահանրաճանաչ մեսիական մարգարեություններից մեկում:

Կարդացե՛ք Միքիա 5.2-ը: Ո՞ւմ մասին է այստեղ խոսվում, և մենք ի՞նչ ենք իմանում Նրա մասին: Տե՛ս նաև Հովհաննես 1.13, 8.58, Կողոսացիս 1.16,17: _____

_____

_____

Փոքրիկ հրեական քաղաքից դուրս կգա Մեկը հավիտենությունից, որ դառնա Իսրայելի Իշխանը: Միքիա 5.2-ը ամենաթանկարժեք աստվածաշնչյան համարներից մեկն է, որ՝ գրված է այն մարդկանց մեջ մարգարեների խոստացած կատարյալ առաջնորդին ջերմորեն սպասող մարդկանց հույսն ամրապնդելու համար: Նրա իշխանության հետ միասին պետք է վրա հասներ Տիրոջ զորության, արդարության և անվտանգության ժամանակը (Միքիա 5.4-6):

Դավիթը ծնունդով Բեթղեհեմից էր, այդ քաղաքը կոչվում էր նաև Եփրաթա (Ծննդոց 35.19): Այդ քաղաքի հիշատակումը ցույց է տալիս ինչպես Դավթի, այնպես էլ նրա սերնդի համեստ ծագումը, ով լինելու էր այդ ժողովրդի ճշմարիտ Հովիվը (Միքիա 5.4): Համեստ Բեթղեհեմ ավանում Սամվել մարգարեն Իսրայելի թագավոր օծեց Հեսսեի կրտսեր որդուն՝ Դավթին (Ա Թագավորաց 16.1-13, 17.12): Երբ իմաստունները եկան նորածին «հրեից Թագավորին» երկրպագելու, Հերովդեսը Սուրբ Գրքի գիտակներին հարցրեց, թե որտեղ պետք է որոնել այդ Թագավորին (Մատթեոս 2.4-6): Նրանք ցույց տվեցին նրան այդ տեքստը, որը կանխասում է, որ Մեսիան կգա Բեթղեհեմ փոքրիկ քաղաքից:

Մեր սահմանափակ մեղավոր գիտակցության համար դժվար է ըմբռնել, որ նորածին Մանուկը Հավիտենական Աստված է, երկնքի ու երկրի Արարիչը: «Հավիտենից ի վեր Հիսուս Քրիստոսը և Հայրը մեկ են» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 19): Որքան էլ այս գաղափարն անհավատալի թվա, այն քրիստոնեության հիմնարար ճշմարտություններից մեկն է. Արարիչ Աստված Իր վրա առավ մարդկային մարմինը և, Մարդ դառնալով, Իրեն զոհաբերեց մեր մեղքերի համար: Եթե դուք ժամանակ հատկացնեք՝ մտորելու համար այն մասին, թե սա մեզ ինչ է ասում մարդկային կյանքի արժեքավորության մասին, և թե մենք՝ որպես անձնավորություններ, ինչ ենք նշանակում Աստծո համար, ձեր կյանքը լիովին կփոխվի: Այն ժամանակ, երբ շատ մարդիկ հուսահատության մեջ փորձում են գտնել իրենց գոյության նպատակն ու իմաստը, մենք հաստատուն հիմք ունենք՝ խաչը, որը ոչ միայն մեզ բացահայտում է կյանքի իմաստը, այլ նաև ինչ-որ անհամեմատ ավելի մեծ բանի հույս է տալիս, քան այն, ինչ երբևէ կարող է առաջարկել այս աշխարհը:

Չորեքշաբթի ***մայիսի 15***

Ի՞նչ է բարին

Միքիա մարգարեի գրքի վեցերորդ գլխի սկզբում Աստված զրուցում է Իր ժողովրդի հետ և թվարկում այն ամենը, ինչ Նա արել է ի բարօրություն նրա: Պատասխանելով Նրան՝ երկրպագության համար տաճար եկած մարդը հարցնում է, թե ինչ կարող է ինքը անել Աստծուն ուրախացնելու համար: Ինչի՞ց պետք է բաղկացած լինի ընդունելի զոհաբերությունը՝ միամյա հորթերի՞ց, հազարավոր խոյերի՞ց, յուղի գետերի՞ց, թե՞ անգամ իր առաջնեկից: Այս տեքստում դիտվում է ընծաների մեծության և արժեքավորության աճը:

Կարդացե՛ք Միքիա 6.1-8-ը: Ի՞նչ կարևոր ճշմարտություն են սովորեցնում այս համարները: Ինչո՞ւ է դա հատկապես կարևոր մեզ՝ Յոթերորդ օրվա ադվենտիստներիս համար: Սա ինչպե՞ս է մեզ բացահայտում այն փաստը, որ ճշմարտությունը շատ ավելի մեծ բան է, քան պարզապես ճիշտ դավանաբանությունը և մարգարեության մանրակրկիտ ըմբռնումը: Տե՛ս Մատթեոս 23.23-ը: ___

_____

_____

Մարգարեն հայտարարում է, որ Աստված արդեն բացել է, թե Ինքն ինչ է պահանջում: Մովսեսի հրահանգների շնորհիվ ժողովուրդը գիտեր,

թե Աստված ողորմածաբար ինչ կատարեց իրենց համար (Երկրորդ Օրինաց 10.12,13): Միքիայի պատասխանը Աստծո պահանջների փոփոխությունն արտացոլող նոր հայտնագործություն չէր: Զոհաբերություններն ու քահանաների ծառայությունը չէին Աստծո գլխավոր հոգսը: Ամեն բանից ավելի Աստված ցանկանում էր, որ մարդիկ արդարացիորեն վարվեին միմյանց հետ և կայուն լինեին Տիրոջ հանդեպ իրենց նվիրվածության ու սիրո մեջ: Ամենամեծ բանը, որ մարդիկ կարող են առաջարկել Աստծուն, իրենց հնազանդությունն է:

Միքիա 6.8-ը Իր ժողովրդի վերաբերյալ Աստծո կամքի ամենահակիրճ դրսևորման արտահայտությունն է: Այս համարն իր մեջ ներառում է ողջ մարգարեական ուսմունքը ճշմարիտ կրոնի վերաբերյալ՝ պնդելով, որ ճշմարիտ կրոնը արդարությամբ, գթասրտությամբ և Աստծո հետ սերտ փոխհարաբերություններով լի կյանքն է: Արդարությունը դրսևորվում է մարդկանց արարքների մեջ, երբ նրանք շարժվում են Աստծո Հոգով: Այն իր մեջ ներառում է ազնվություն և հավասարություն բոլորի, հատկապես՝ թույլերի ու անօգնականների, այլ մարդկանց կողմից շահագործվողների համար: Բարին ենթադրում է մերձավորի հանդեպ սիրո, հավատարմության և նվիրվածության կամավոր, հաճույքով դրսևորում: Աստծո հետ ընթանալ՝ նշանակում է առաջին տեղը հատկացնել Նրան և ապրել Նրա կամքի համաձայն:

Ինչո՞ւ է ավելի հեշտ ձևականորեն կատարել օրենքի տառը, քան գործել արդարությամբ, սիրել գթասրտության գործերը և խոնարհաբար քայլել Աստծո առջև:

Հինգշաբթի ***մայիսի 16***

Ծովի խորքերում

Միքիա մարգարեի գիրքն սկսվում է դատաստանների նկարագրությամբ, բայց ավարտվում է հույսի խոսքերով: Այսօր որոշ մարդիկ փորձում են կա՛մ արդարացնել իրենց մեղքերը, կա՛մ էլ հերքել Աստծո դատաստանների իրական լինելը: Այդպես վարվել՝ նշանակում է ընկնել այն նույն ծուղակը, ինչ և Միքիա մարգարեի ժամանակակիցները, ովքեր համարում էին, որ Աստված երբեք Իր դատաստանները չի ուղարկի ընտրյալ ժողովրդի վրա:

Աստծո արդարությունը Նրա սիրո ու հոգատարության մյուս տեսանկյունն է: Միքիա մարգարեի գրքի էջերից հնչող բարի լուրն անփոփվում է նրանում, որ պատիժը Աստծո վերջին խոսքը չէ: Աստծո

գործողությունները Սուրբ Գրքում հետևողականորեն անցնում են՝ դատաստանից՝ ներում, պատժից՝ շնորհ, և տառապանքից դեպի հույս:

Կարդացե՛ք Միքիա 7.18-20-ը: Այս տեքստերում ինչպե՞ս է բացահայտվում Ավետարանը: Այստեղ ի՞նչ հույս է բովանդակվում մեզ ամենքիս համար: Ինչո՞ւ մենք այդքան շատ դրա կարիքն ունենք: _____

_____

_____

Միքիա մարգարեի գրքի եզրափակիչ բառերն արտահայտում են հույսով առլեցուն նրա փառաբանությունը: «Ո՞վ է Աստված քեզ նման» հարցը համահունչ է Միքիայի անվանը, որը նշանակում է «Ո՞վ է Տիրոջ նման»: Այն հիշեցնում է Աստծո եզակիության մասին է և հաստատում է այն ճշմարտությունը, որ չկա Նրա նման ուրիշ մեկը: Ինչո՞ւ: Որովհետև Նա միակ Արարիչն է: Մնացած ամեն ինչը արարչագործություն է: Եվ որ է՛լ ավելի կարևոր է, մեր Արարիչը՝ շնորհի ու ներման Աստված, անցել է ամենաաներևակայելի փորձառության միջով, որպեսզի փրկի մեզ անխուսափելի կործանումից: Նա այդ արել է ինչպես հրեա ժողովրդի, այնպես էլ՝ մեզ բոլորիս համար:

Անցնելով դժվարին իրավիճակների ու ցավոտ փորձառությունների միջով՝ այսօր մենք կարող ենք զարմանալ ու հարցնել, թե ինչու է Աստված այդ ամենը թույլ տալիս: Երբեմն շատ դժվար է լինում որևէ բան բացատրել: Մեր հույսը դնենք միայն Տիրոջ վրա, ով խոստանում է մեր մեղքերը ծովի խորքերը նետել: Հիշելով այն մասին, թե ինչ է կատարել Աստված անցյալում, մենք կարող ենք հույսով նայել ապագային:

Խորհեցե՛ք սեփական կյանքի մասին: Ինչո՞ւ է ձեր միակ հույսն ամփոփվում այն խոստման մեջ, որ Աստված ձեր մեղքերը կնետի «ծովի խորքերը»:

Ուրբաթ ***մայիսի 17***

Հետագա ուսումնասիրության համար

«Եթե միայն Երուսաղեմը ընդուներ իրեն երկնքից ուղարկված գիտելիքն ու երկնային լույսը, ապա կծաղկեր որպես թագավորությունների ազատ ու հզոր թագավորություն՝ փառաբանվելով իր Աստծուց պարգևված իր զորությամբ: Նրա դարպասների մոտ զինված պատերազմներ չէին լինի… Աստծո Որդու առջև փառավոր ճակատագիր կհառներ, որ կիրականանար Երուսաղեմի կյանքում, եթե ընդուներ իր

Փրկչին: Նա տեսնում էր, որ քաղաքը կարող էր Իր միջոցով բժշկվել դաժան հիվանդությունից, ազատվել ստրկական կապանքներից, դառնալ ողջ երկրի մեծազոր մայրաքաղաքը: Երուսաղեմը կլիներ ողջ աշխարհի փառաց պսակը» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 577):

Հարցեր քննարկման համար

1. Եթե դուք ցանկանում եք առավել ժամանակակից համատեքստում ավելի լավ հասկանալ ապրումները, որոնք բաժին են ընկել Աստծո մարգարեներին, կարդացե՛ք «Է. Ուայթի կյանքի ակնարկ» գիրքը: Այս գիրքն ի՞նչ է ասում Աստծո հավատարիմ լրաբերների ծանր աշխատանքի և փորձությունների մասին:
2. Բավականին հեշտ է տարվել կրոնական ձևերով, ավանդույթներով ու ծեսերով, որոնք ինքնին կարող են միանգամայն լավը լինել: Միևնույն ժամանակ, ի՞նչ կարող է տեղի ունենալ, երբ այդ ձևերն ու ծեսերը դառնում են ինքնանպատակ՝ փոխանակ ցույց տալու, թե ինչ է նշանակում լինել Աստծո ճշմարիտ հետևորդ, ում մենք երկրպագում ենք՝ օգտագործելով այդ ձևերը:
3. Խորհեցե՛ք մարմնավորման գաղափարի մասին, այն մասին, որ Արարիչ Աստված «հագել» է մարդկային մարմին: Միջնադարյան մի աստվածաբան գրել է «Պահպանելով այն ամենը, ինչ Ինքն էր, Քրիստոսն Իր վրա վերցրեց այն, ինչ Ինքը չի եղել», այսինքն՝ մեր մարդկային էությունը: Խորհեցե՛ք, թե այդ զարմանահրաշ ճշմարտությունն ինչ է մեզ ասում մեր հանդեպ Աստծո սիրո մասին: Այդ ճշմարտությունն ինչո՞ւ պետք է մեզ լցնի հույսով, շնորհակալությամբ և փառաբանությամբ՝ անկախ հանգամանքներից:

ԱՊԱՎԻՆԵԼՈՎ ԱՍՏԾՈ ԲԱՐՈՒԹՅԱՆԸ

(ԱՄԲԱԿՈՒՄ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԸ)

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ամբակում 1.1-17, 2.2-4, Գաղատացիս 3.11, Եբրայեցիս 11.1-13, Ամբակում 3, Փիլիպեցիս 4.11:

Հիշելու համարը.

«Որովհետև երկիրը պիտի լցվի Տիրոջ փառքի գիտությամբ, ինչպես ջրերը ծածկում են ծովը» (Ամբակում 2.14):

Հիմնական միտքը.

Միշտ չէ, որ մենք հասկանում ենք, թե ինչու են տեղի ունենում ողբերգությունները, բայց կարող ենք վստահել Աստծուն՝ անկախ հանգամանքներից:

Երբ հնչեց քարոզն այն մասին, որ Աստված միշտ ներկա է մեզ հետ մեր կենսական ապրումների ժամանակ, մի կին մոտեցավ հովվին և արցունքն աչքերին հարցրեց. «Հովի՛վ, ո՞ւր էր Աստված այն օրը, երբ մահացավ իմ միակ որդին»: Նրա դեմքին խոր տառապանք տեսնելով՝ հովիվը լռեց, իսկ հետո պատասխանեց. «Աստված այն նույն տեղում էր գտնվում, երբ մահանում էր Իր միակ Որդին՝ փրկելու մեզ հավիտենական մահից»:

Ամբակումն էլ մեզ պես անարդարություն, բռնություն և չարիք էր տեսնում: Անգամ ավելի վատ՝ թվում էր, թե Աստված չի արձագանքում այդ ամենին, թեև Ամբակումին կոչ էր անում վստահել Իր խոստումներին:

Մարգարեն չապրեց մինչև այդ խոստումների իրականացումը, բայց, անկախ ամեն ինչից, սովորեց վստահել: Նրա գիրքն սկսվում է Աստծուն ուղղված բողոքից, բայց ավարտվում է Աստվածաշնչի ամենագեղեցիկ երգերից մեկով: Ամբակումի նման, մենք պետք է հավատով սպասենք, թե երբ կգա ժամանակը, և աշխարհը «կլցվի Տիրոջ փառքի գիտությամբ, ինչպես ջրերը ծածկում են ծովը»:

Վրդովված մարգարեն

Կարդացե՛ք Ամբակում 1-ը: Մարգարեն ի՞նչ հարցեր է տալիս Աստծուն: Թեև նրա իրավիճակն, իհարկե, տարբերվում էր մեր այսօրվա հանգամանքներից, սակայն որքա՞ն հաճախ ենք մենք նման հարցեր տալիս: _____

_____

Ամբակումը եզակի է մարգարեների մեջ, քանի որ նա ժողովրդի հետ չի խոսում Աստծո անունից, այլ ավելի շուտ Աստծուն է ասում ժողովրդի *մասին*: Մարգարեն հուսահատորեն ձգտում է հասկանալ Աստծո մտադրությունները, և չհասկանալով՝ հարցնում է. «Մինչև ե՞րբ, Տե՛ր»: Աստվածաշնչում այդ հարցը սովորաբար փոխանցում է հարցնողի արտասուքն ու հառաչանքը (Սաղմոս 13.1,2, Երեմիա 12.4): Այն ենթադրում է ճգնաժամային իրավիճակ, որից մարդը ելք է որոնում:

Ճգնաժամը, որից Ամբակումը ելք է փնտրում, առաջ էր եկել հասարակությունում տիրող բռնության պատճառով: Եբրայերեն բնօրինակի «համաս» *(բռնություն)* բառը վեց անգամ հանդիպում է Ամբակում մարգարեի գրքում: Այս եզրույթը ենթադրում է ուրիշներին վիրավորել ինչպես ֆիզիկական, այնպես էլ՝ բարոյական իմաստով (Ծննդոց 6.11):

Լինելով մարգարե՝ Ամբակումը գիտի, թե ինչպես է Աստված սիրում արդարությունն ու ատում բռնությունը, այդ պատճառով նա ցանկանում է իմանալ, թե ինչու Աստված չի դադարեցնում անարդարությունը: Ամեն տեղ նա տեսնում է բռնություն և անիրավություն. թվում է, թե ամբարիշտները հաղթանակ են տոնում արդարների նկատմամբ: Արդարությունը ոտնատակ է տրված ուժեղների կողմից. այդպես եղել է Ամովսի ժամանակներում (Ամովս 2.6-8), այդպես հաճախ լինում է նաև այսօր:

Աստծո պատասխանը բացահայտում է Նրա ապագա ծրագրերը: Տերն օգտագործում է բաբելոնյան բանակը՝ ժողովրդին պատժելու համար: Այս լուրը զարմացնում է մարգարեին: Նա չէր սպասում, որ Աստված այդպիսի մի անողորմ զորք կօգտագործի Հուդային պատժելու համար: 8-րդ համարում բաբելոնյան այրուձին համեմատվում է ինձի, գայլի ու արծվի՝ երեք գիշատիչների հետ, որոնց արագությունն ու ուժը կյանքից զրկում է բռնված զոհին:

Բաբելոնի դաժան գոռոզամտությունը ոչ մի պատասխանատվություն չի ճանաչում, ապաշխարություն չի որոնում, փոխհատուցում չի առաջարկում: Այն կկործանի արարված կյանքի բուն հիմունքները: Ամ-

բակումին ասված է, որ բաբելոնյան բանակն օգտագործվելու է որպես «Իմ [Աստծո] բարկության գավազան» (Եսայիա 10.5): Պատիժը վրա կհասնի Ամբակումի կյանքի օրոք (Ամբակում 1.5): Այս ողջ իրադրությունը է՛լ ավելի շատ հարցեր է առաջ բերում Աստծո արդարադատության վերաբերյալ:

Մենք ինչպե՞ս կարող ենք հուսալ Աստծո բարությանը և արդարությանը, երբ աշխարհը բերնեբերան լի է անբարոյականությամբ և անարդարությամբ: Ո՞րն է մեր միակ ապաստանը:

Երկուշաբթի ***մայիսի 20***

Ապրելով հավատով

Ամբակում 1.2-4-ում գրի առնված Ամբակումի հարցերին Աստծո պատասխանն է՛լ ավելի բարդ հարց է առաջ քաշում. կարո՞ղ է արդար Աստված օգտագործել ամբարիշտներին՝ պատժելու համար այնպիսի մարդկանց, ովքեր առավել արդար են, քան հենց իրենք: 17-րդ համարում գրի առնված Ամբակումի հարցը վերաբերում է Աստծո արդարացիությանը:

Ամբակումը մտահոգված էր ոչ միայն սեփական ժողովրդի աստիճանական անկումով, այլ նաև այն փաստի անխուսափելիությամբ, որ իր ժողովուրդը դատվելու է մեկ այլ, է՛լ ավելի վատ ժողովրդի կողմից: Մարգարեն լավ գիտեր Հուդայի մեղքերի մասին, բայց ցանկացած չափանիշով իր ժողովուրդը, հատկապես՝ արդար մարդիկ, այնքան ամբարիշտ չէին, որքան հեթանոս բաբելոնացիները:

Կարդացե՛ք Ամբակում 2.2-4-ը: Այստեղ ի՞նչ հույս է տրված:

Ամբակում 2.2-4-ը ամենակարևոր աստվածաշնչյան տեքստերից մեկն է: 4-րդ համարը առանձնահատուկ կերպով փոխանցում է Ավետարանի էությունը: Հնարավոր է, որ այս համարի գլխավոր միտքն է հիմք ծառայել բողոքական բարենորոգման համար: Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատի միջոցով մենք ստանում ենք Աստծո արդարությունը. մեզ համարվում է Իր՝ Աստծո արդարությունը: Նրա արդարությունը դառնում է մերը: Դա հայտնի է որպես *հավատով արդարացում*:

Չորրորդ համարը փրկության ճանապարհի և հավատով արդարացման մասին աստվածաշնչյան ուսմունքի համառոտ շարադրանք է: Հռոմեացիս 1.17, Գաղատացիս 3.11, Եբրայեցիս 10.38: _____

_____

Այդ ողջ խառնաշփոթության, վրդովմունքի ու չարի, արդարության և

փրկության հարցերի մեջ Ամբակում 2.4 համարը պատկերում է արդարների և գոռոզների կտրուկ հակադրությունը: Խմբերից յուրաքանչյուրի վարքը որոշում է նրա ճակատագիրը. գոռոզները կընկնեն, այն դեպքում, երբ արդարները հավատով կենդանի կլինեն: Եբրայերեն հավատ (եմինա) թարգմանված բառը նշանակում է՝ *հավատարմություն, կայունություն և հուսալիություն*: Թեև հավատով ապրողը չի փրկվելու իր գործերով, նրա գործերը վկայում են, որ նա ապրում է հավատով: Նրա հավատն ի հայտ է գալիս գործերում, և այդպիսի մարդուն հավիտենական կյանք է խոստացված:

Երեքշաբթի ***Մայիսի 21***

Որովհետև երկիրը կլցվի (Ամբակում 2)

Ամբակումի հարցին Աստծո պատասխանը (Ամբակում 1.17) գրի է առնված երկրորդ գլխում և շարունակվում է երգի ձևով, որը ծաղրում է գոռոզ հալածիչին: Տառապանքի մասին առնվազն հինգ հայտարարություններ (Ամբակում 2.6,9,12,15,19) հաստատում են այն միտքը, որ Բաբելոնի ճակատագիրը կանխորոշված է: Թշնամու պատիժը կհամապատասխանի «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» սկզբունքին: Այն, ինչ ամբարիշտներն անում են իրենց զոհերի նկատմամբ, ի վերջո հենց իրենց բաժին կընկնի: Նրանք կհնձեն այն, ինչ ցանել են, որովհետև «Աստված չի ծաղրվի» գոռոզ մարդկանց կողմից (Գաղատացիս 6.7):

Ի տարբերություն հալածիչների, ովքեր ի վերջո դատվելու են Աստծո կողմից, արդարներին հավիտենական կյանք է խոստացված Քրիստոսում՝ անկախ այն բանից, թե ինչ է նրանց հետ տեղի ունենում այս կյանքում: Նկարագրելով վերջին ժամանակի հավատարիմ մնացորդին՝ Հայտնություն գիրքն օգտագործում է «սուրբերի համբերությունը» արտահայտությունը (Հայտնություն 14.12): Իսկապես, արդարները համբերատար կերպով սպասում են Աստծո միջամտությանը, անգամ եթե այն վրա հասնի միայն երկրորդ գալստյան ժամանակ:

Կարդացե՛ք Եբրայեցիս 11.1-13-ը: Այս համարները ինչպե՞ս են օգնում մեր պայքարին այսօր, երբ մեզ տալիս ենք նույն հարցերը, ինչ և Ամբակումը: _____

_____

_____

Ամբակումի հարցերին Աստծո վերջնական պատասխանը Իր Նրա անփոփոխ ներկայության հաստատումն է: Ապավինել Աստծո

ներկայությանը ու վստահել Նրա դատաստանին, անկախ հուսահատեցնող երևութականությունից. այդպիսին է Ամբակում մարգարեի գրքի, ինչպես նաև աստվածաշնչյան ողջ հայտնության լուրը: Մարգարեական հավատը Տիրոջ հանդեպ վստահությունն է ու Նրա անփոփոխ բնավորությանը հուսալը:

«Հավատը, որ սատարում էր Ամբակումին ու բոլոր սրբերին և արդարներին փորձությունների այն ծանր օրերին, այսօր էլ սատարում է Աստծո ժողովրդին: Կյանքի ամենամռայլ ժամերին, ամենասարսափելի հանգամանքներում քրիստոնյան պետք է ողջ սրտով հուսա ամենայն լույսի և ուժի Աղբյուրին: Օրեցօր Աստծո հավատի միջոցով նրա հույսն ու արիությունը կնորոգվեն» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 386, 387):

Հորեքշաբթի ***մայիսի 22***

Հիշելով Աստծո փառքը

Կարդացե՛ք Ամբակում 3-ը: Այստեղ ի՞նչ է անում Ամբակումը, և ինչո՞ւ է դա այդքան կարևոր, հատկապես՝ հաշվի առնելով բարդ հանգամանքները և բարդ խնդիրները, որոնց նրանք բախվում են: _____

_____

Ամբակումը իր կողմից Աստծո ճանապարհներն ընդունելն արտահայտում է երգվող աղոթքի միջոցով (Ամբակում 3.19): Գիտակցելով Աստծո զորությունը՝ նա խնդրում է Տիրոջը հիշել Իր ողորմության մասին, երբ դատաստանները կսկսեն կատարվել: Մարգարեն երկյուղածությամբ է հիշում անցյալում կատարած Աստծո մեծամեծ գործերը, և աղոթում է այն մասին, որ Նա այժմ էլ հանդես գա իր փրկարար զորությամբ: Նա ասես կանգնած է ժամանակների միջև: Իր հայացքը նա ուղղում է և՛ անցյալին՝ Եգիպտոսից դուրս գալու իրադարձություններին, և՛ ապագային՝ Տիրոջ օրվան: Մարգարեն փափագում է, որ Աստված դրսևորի Իր զորությունը ներկա իրավիճակում:

Երրորդ գլխի օրհներգը բանաստեղծորեն նկարագրում է, թե ինչպես Աստված Իսրայելին ազատեց եգիպտական ստրկությունից: Ելքի իրադարձությունները Դատաստանի մեծ օրվա նախապատկերն են: Արդարները չպետք է անհանգստանան Տիրոջ օրվա մասին, այլ պետք է սպասեն, հաստատ պահեն իրենց հավատը և ցնծան իրենց պարգևված հույսով:

Այս օրհներգը գովերգում է Աստծո զորությունը, փառքն ու մեծամեծ գործերը: Տերը նկարագրվում է որպես ողջ երկրի Տիրակալ: Նրա փառքի հայտնությունը համեմատվում է արևի լույսի փայլի հետ (Ամբակում 3.4):

Աստված դատում է դաժան ազգերին, բայց, միևնույն ժամանակ, Նա «փրկության կառքերով» փրկություն է բերում Իր ժողովրդին (Ամբակում 3.8): Աստծո զորությունը միշտ չէ, որ արտաքուստ տեսանելի է, բայց հավատի մարդը գիտի, որ Աստված միշտ կողքին է՝ ինչ էլ պատահի:

Ամբակումը կոչ է անում մեզ՝ հույսով նայել Տիրոջ փրկությանը, երբ Նա երկրի վրա կհաստատի Իր արդարությունը և երկիրը կլցնի Իր փառքով: Տիրոջ փառքը երգելով՝ Աստծո մարդիկ ոգեշնչում են մեկը մյուսին (Եփեսացիս 5.19,20, Կողոսացիս 3.16)՝ մտորելու Աստծո գործերի մասին անցյալում և հուսալ փառավոր ապագայի: Ամբակումը ծառայում է որպես օրինակ նրա թե ինչպես մարդը կարող է աներեր մնալ՝ ապրելով Աստծո տեսիլով:

Հիշեցե՛ք, թե ինչպես էր Աստված մեր կյանքը ղեկավարում անցյալում: Դա ձեզ ինչպե՞ս է օգնում ավելի շատ վստահել Նրան և հուսալ Նրա բարությանը՝ անկախ այն բանից, թե ձեզ համար ինչ է պատրաստում ապագան: Ինչո՞ւ է կարևոր միշտ նայել այն փառավոր հավիտենական ապագային, որ մեզ սպասում է:

Հինգշաբթի ***մայիսի 23***

Աստված մեր զորությունն է

«Թեև թզենին չծաղկի, և որթերի վրա բերք չլինի, ձիթենու արդյունքը ստի, և արտերը կերակուր չտան, կտրվի ոչխարը փարախից, և արջառ չլինի գոմերում, սակայն ես Տերով պիտի ցնծամ, պիտի իմ փրկության Աստծով ուրախանամ: Տեր Եհովան իմ զորությունն է, և իմ ոտքերը եղնիկների նման է դարձնում, և ինձ իմ բարձր տեղերի վրա է ման ածում» (Ամբակում 3.17-19): Ինչո՞վ է լավ մարգարեի գրաված դիրքը: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել նույն կերպ վերաբերվել խնդիրներին: Տե՛ս Փիլիպեցիս 4.11: _____

_____

_____

Ամբակում մարգարեի գրքի եզրափակիչ բառերը (Ամբակում 3.16-19) արտահայտում են մարգարեի արձագանքը Աստծո զորության և բարության հայտնությանը: Աստծո փրկարար գործողությունների վե-

բաբերյալ նոր տեսակետը Ամբակումին արիությամբ է օժտում այն ժամանակ, երբ նա սպասում է թշնամու հարձակմանը: Սպասելով, թե երբ Աստծո դատաստանը փուլ կգա Իր ժողովրդի վրա, նա հոգու խորքում վախ էր ապրում: Չէ՞ որ թշնամու ներխուժումը կարող է հանգեցնել երկրի ամայացմանը, թզենիների ու ձիթենիների բերքի ոչնչացմանը, որոնք այնքան բարձր էին գնահատվում Պաղեստինում, նույնքան անհրաժեշտ խաղողի որթերի, հացահատիկների, ինչպես նաև՝ խոշոր եղջերավոր անասունների հետ մեկտեղ: Բայց մարգարեի հավատը մնում է աներեր, որովհետև նա նայում է կենդանի Տիրոջը:

Հենվելով անցյալի փորձառությունների վրա՝ Ամբակումը գիտի Աստծո բացարձակ հավատարմության մասին: Այդ պատճառով Նա իրեն հանձնում է Աստծո մտադրվածությանը (Ամբակում 3.16-19): Չնայած բոլոր անբարենպաստ հանգամանքներին՝ մարգարեն լի է վճռականությամբ՝ իր հույսը դնել Տիրոջ և Նրա գթասրտության վրա, որքան էլ իրադրությունն անհուսալի թվա:

Ամբակումը հավատարմորեն սպասում է փրկությանը, թեև դրա ոչ մի նշան չի տեսնում: Նա մարգարե է, ով երկխոսության, հանդիմանությունների ու փառաբանության օրհներգի միջոցով բոլոր դարերի հավատարիմներին սովորեցրել է իրենց մեջ Փրկչի հանդեպ առավել խորը, կենդանի հավատ զարգացնել: Իր անձնական օրինակով նա արդարներին ոգեշնչում է զրուցել Աստծո հետ, ստուգել դժվար ժամանակներում իրենց հավատարմությունը Նրան, հույսը դնել Տիրոջ վրա և փառաբանել Նրան:

Ամբակումն իր գիրքն ավարտում է հավատի՝ գեղեցիկ արտահայտված դիրքորոշմամբ. չնայած, որ կյանքը երբեմն շատ ծանր է, մարդը կարող է ցնծություն և զորություն ձեռք բերել Աստծո մեջ: Նրա գրքի հիմքում ընկած լուրը սովորեցնում է համբերատարությամբ Աստծո փրկությանը սպասել հալածանքների ժամանակներում, որոնց վերջը չի երևում (տե՛ս Երեմիայի ողբը 3.26): Տիրոջ սպասման թեման գերակշռում է Ամբակումի գրքում: Որքա՜ն արդիական պետք է այդ թեման լինի մեզ՝ Յոթերորդ օրվա ադվենտիստներիս համար. չէ՞ որ մեր եկեղեցու անունն իսկ արտահայտում է երկրորդ գալստյան Հիսուսի հանդեպ հավատը:

Ուրբաթ ***մայիսի 24***

Հետագա ուսումնասիրության համար

Կարդացե՛ք ստորև բերված մեջբերումները և քննարկե՛ք, թե դրանք

ինչպես են օգնում մեզ՝ ավելի լավ հասկանալ Ամբակում մարգարեի լուրերը:

«Ամբակումի հարցը պատասխան ունի: Այն ատահայտված է ոչ թե բառերի, այլ իրադարձությունների մեջ: Աստծո պատասխանը կգա, այն անպայման կգա. «և եթե ուշանա էլ, սպասի՛ր նրան»: Իսկապես, դժվար է դիմանալ այդ ժամանակին, արդարին սարսափեցնում է այն, ինչ ինքը տեսնում է: Դրան մեծ պատասխան է տրված. «արդարն իր հավատքով պիտի ապրի»: Հենց սա էլ պատասխանն է, բայց կրկին այն տրված է ոչ թե մտածողության, այլ լինելության եզրույթներով: Մարգարեական հավատը վստահությունն է Նրա հանդեպ, ում ներկայության մեջ հանգստությունն ըմբռնման ձև է» (Abraham J. Heschel, The Prothets, 143):

«Մենք պետք է մեր մեջ այնպիսի հավատ աճեցնենք, որի մասին վկայել են մարգարեներն ու առաքյալները, հավատ, որը ձուլվում է Աստծո խոստումներին և սպասվող փրկությանը, որը իրականություն կդառնա Աստծո ցանկությամբ և Նրա որոշած ժամանակին: Մարգարեական ամենահաստատ խոսքը վերջնականապես կկատարվի մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի՝ փառավոր գալստյան ժամանակ՝որպես թագավորների Թագավոր և Տերերի Տեր: Սպասման ժամանակը երկար կթվա. հոգին կարող է տառապել ծանր հանգամանքների ճնշման ներքո, շատերը, ում վրա հույս էին դնում, կարող են ընկնել ճանապարհին, բայց մարգարեի հետ միասին, ով փորձում էր Հուդային գոտեպնդել աննախադեպ ուրացության ժամանակ, մենք պետք է հաստատապես ասենք. «Սակայն Տերը Իր սուրբ տաճարում է. լռի՛ր Նրա առաջ, ով բոլոր երկիր» (Ամբակում 2.20)» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 387, 388):

Հարցեր քննարկման համար

1. Կատարե՛ք Աստծո հետ Ամբակումի երկխոսության հանրագումարը: Ինչո՞ւմն էր ամփոփվում նրա հիմնական բողոքը: Ինչպե՞ս նա արձագանքեց Աստծո պատասխանին:
2. Կարո՞ղ է այնպես լինել, որ Աստծո աչքին ազնիվ հարցերը և անգամ կասկածները առավել ընդունելի կրոնական դիրքորոշում լինեն, քան մակերեսային հավատը: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:
3. Յոթերորդ օրվա ադվենտիստների նախորդ սերունդները հավատում էին, որ Քրիստոսը կվերադառնա իրենց ժամանակ, և իրենք կկարողանան տեսնել այդ հրաշալի խոստումների վերջնական իրականացումը: Մեր սերունդն ինչպե՞ս կարող է սովորել պահպանել հավատը՝ սպասելով Նրա վերադարձին:

ՏԻՐՈՋ ՕՐԸ

(ՍՈՓՈՆԻԱ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԸ)

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Սոփոնիա 1.14-18, Հովել 2.1-11, Սոփոնիա 2.1-3, Եսայիա 11.4, Սոփոնիա 3.1-5, Եսայիա 62.5, Նաում 1-3:

Հիշելու համարը.

«Ահարկու է Տերը նրանց դեմ, որովհետև Նա ոչնչացնելու է երկրի բոլոր աստվածներին, և Նրան երկրպագություն պիտի անեն յուրաքանչյուրն իր տեղից ազգերի բոլոր կղզիները» (Սոփոնիա 2.11):

Հիմնական միտքը.

Դատաստանը գալիս է, բայց շնորհն ու ողորմությունը դեռևս հասանելի են բոլորին, ով անկեղծորեն ծարավ է դրանց:

Եթե մարգարեների գրքերը դասավորված լինեին ժամանակագրական կարգով, ապա Սոփոնիա մարգարեի գիրքը կգտնվեր Եսայիա և Երեմիա մարգարեների գրքերի միջև: Մանասեի՝ Հուդայի ամենաամբարիշտ թագավորի կառավարման ժամանակաշրջանում Սոփոնիայի քարոզը աջակցություն էր Երեմիայի համար, և ավելի ուշ նրանք միասին աշխատում էին՝ ցանկանալով ժողովրդի մեջ վերածննդի կայծ վառել Հովսիայի՝ Մանասեի թոռան թագավորության ժամանակ:

Սոփոնիայի քարոզը դատապարտում էր հրեական հասարակության աղաղակող անբարոյականությունը: Նա ցույց էր տալիս ապաշխարության կարիքը՝ հիմնվելով այն փաստի վրա, որ Աստծո սերը դեռևս մարդկանց հավատամության և խոնարհության կոչ է անում: Նրա լուրը երկակի բնույթ ունի. անխուսափելի և համընդհանուր դատաստանի սպառնալիքը, որ կհասնի անգամ Աստծո ժողովրդին, և դրա հետ մեկտեղ՝ խոստում, որ բոլոր ազգերի փրկվածները կմիանան Իսրայելի մնացորդին՝ ծառայելով Աստծուն և ստանալով Նրա օրհնությունները: Տվյալ շաբաթվա թեման ընդգծում է, որ Սոփոնիայի լուրն արդիական է մնում բոլոր նրանց համար, ովքեր Աստծո հույսի լուրը հռչակում են ընկած աշխարհին:

Խավարի օրը

Սոփոնիա մարգարեի գրքի կենտրոնական լուրն է՝ «մոտ է Տիրոջ օրը» (Սոփոնիա 1.7): Աստվածաշնչյան մարգարեների պատկերացումներով՝ Տիրոջ օրը հատուկ ժամանակահատված է, երբ Աստված միջամտում է մարդկանց գործերին, որպեսզի փրկի և դատի: Հին Իսրայելում մարդկանց մեծամասնությունը հավատում էր, որ այդ օրը Աստված կփրկի և կմեծարի Իսրայելին, այն ժամանակ, երբ թշնամի ժողովուրդները առհավետ կկործանվեն: Ի մեծ զարմանս ունկնդիրների՝ մարգարեն հայտարարեց, որ Տիրոջ օրը կործանման օր է լինելու անգամ Աստծո ժողովրդի համար (Սոփոնիա 1.1-5), որովհետև նրանք մեղանչում են Նրա դեմ (Սոփոնիա 1.17):

Սոփոնիա 1.14-18-ը համեմատե՛ք Հովել 2.1-11-ի և Ամովս 5.18-20-ի հետ: Տիրոջ օրվա ինչպիսի՞ պատկեր են ներկայացնում այդ համարները միասին վերցրած: _____

_____

_____

Սոփոնիան գալիք դատաստանը համեմատում է մեծ ջրհեղեղի օրերին ամեն տեսակի կյանքի ոչնչացման հետ (Ծննդոց 6-8): «Մահվան անվանացանկը» Սոփոնիա 1.2,3-ում կառուցված է կարծես հետադարձ կարգով Աստծո սկզբնական արարման համեմատությամբ՝ մարդիկ, կենդանիները, թռչունները և ծովերի բնակիչները (*հմմտ. Ծննդոց 1.20-27-ի հետ*):

Մարգարեն ժողովրդին զգուշացնում է, որ նրանք չեն կարողանա խուսափել այդ դատաստանից (Սոփոնիա 1.18): Ո՛չ արծաթը, ո՛չ ոսկին չեն կարողանա նրանց պաշտպանել Տիրոջ ցասումից: Երուսաղեմում ինքնաբավ մարդիկ համարում էին, որ «Տերը ո՛չ բարիք է անում, ո՛չ չարիք» (Սոփոնիա 1.12): Նրանք պարզապես չէին սպասում, որ Աստված կգործի: Բայց Աստծո դատաստանները բացահայտում են, թե որքան ակտիվորեն է Աստված գործում հանուն Իր հավատարիմ ժողովրդի ապագայի:

Սոփոնիան պարզորոշ ցույց է տալիս, որ Աստծո դատաստանը ոչ միայն պատժում, այլ նաև ուղղում է: Տերը ապաստանի մասին խոսում է տալիս նրանց համար, ովքեր Իրեն կորոնեն (Սոփոնիա 2.3): Տիրոջ օրը ավելին է, քան աշխարհի վերջը: Դա Աստծո կառավարման սկիզբն է, որը կհարատևի:

Կարդացե՛ք Սոփոնիա 1.18-ը: Ի՞նչ կերպ ենք մենք անգամ հիմա համոզվում այստեղ բովանդակվող սկզբունքի ճշմարիտ լինելու մեջ: Այսինքն՝ ո՞ր կենսական իրադրություններն են ցույց տալիս, որ երբեմն աշխարհի ողջ հարստությունն էլ ի վիճակի չի լինի փրկել մեզ:

Երկուշաբթի *մայիսի 27*

Երկրի խոնարհները

Սոփոնիա 2.1-3-ում մարգարեն ապաշխարության կոչ է անում: Թեև կործանումն անխուսափելի է, սակայն ժամանակ է մնում՝ թաքնվելու համար այդ աղետից, բայց միայն՝ եթե ժողովուրդն ապաշխարի: Ամբարիշտները, ովքեր չեն ցանկանում ապաշխարել, դատաստանի օրը մղեղի պես կլինեն: Սաղմոս 1.4-ում ամբարիշտները նույնպես դառնում են մղեղ, փոշի (Այստեղ օգտագործված է այն նույն եբրայերեն բառը, ինչ և Սոփոնիա 2.2-ում, որը նշանակում է մղեղ:), որ քամին կքշի:

«Տիրոջը որոնեցե՛ք». այս բառերով Սոփոնիան քաջալերում է նրանց, ովքեր խոնարհված են Աստծո առջև՝ ամուր պահելով իրենց հավատը: Մարգարեն սովորեցնում է, որ Տիրոջը որոնելը նույնն է, ինչ և արդարություն և խոնարհություն որոնելը: Առանց ապաշխարության անհնար է խուսափել գալիք դատաստանից:

Սոփոնիան ապաշխարող մարդկանց անվանում է «երկրի խոնարհներ» (Սոփոնիա 2.3): Ստորև բերված համարներն ինչպե՞ս են լույս սփռում այդ արտահայտություն վրա, որը թարգմանվում է նաև որպես «երկրի աղքատները»: Մատթեոս 5.3, Սաղմոս 75.10, Եսայիա 61.1, Ամովս 8.4:

Խոնարհներն այն մարդիկ են, ովքեր հավատարիմ են մնացել Աստծուն, ովքեր առաջնորդվում են Նրա կողմից և սովորում են Նրանից: Սաղմոսերգուն ասում է. «Բարի և արդար է Աստված» (Սաղմոս 25.8,9): Խոնարհները կանչված են նախապատրաստվելու գալիք դատաստանին՝ որոնելով Աստծուն, արդարություն և հեզաբարոյություն:

Դիմանալու, փրկվելու հնարավորությունը խոնարհների, հավատարմություն պահպանող մարդկանց համար արտահայտվում է «կարող է պատահել» բառերով: Փրկությունը կախված է բացառապես Աստծո ողորմությունից, իսկ ողորմությունն այն է, ինչ երբեք չի կարելի ընդունել որպես ինչ-որ ինքնին ենթադրվող բան: Վրա հասնող կործանման դիմաց գթասիրտ Աստված ապագայի հույս է տալիս: Տերը ապաստան

է խոստացել բոլոր Իրեն հուսացողներին (Հովել 3.16, Նաում 1.7): Այդպիսի հույսը բացառում է ինքնավստահությունը, խաբեությունն ու սուտը:

«Ոչ մի բան արտաքուստ այնքան անօգնական, բայց իրականում առավել անհաղթելի չէ, քան իր ոչնչությունը գիտակցող և ամբողջովին Փրկչի արժանիքներին ապավինած հոգին: Աղոթքով, Նրա խոսքի ուսումնասիրությամբ, Նրա մշտական ներկայության հավատով ամենաթույլ մարդիկ կարող են ապրել կենդանի Քրիստոսի հետ սերտ շփման մեջ, և Նա կսատարի նրանց Իր ձեռքով ու երբեք բաց չի թողնի » (Է. Ուայթ, Ապաքինման ծառայություն, 182): Դուք ի՞նչ փորձառություններ եք վերապրել՝ հիմնվելով այդ զարմանահրաշ խոստումների վրա: Դուք ինչպե՞ս կարող եք սովորել Տիրոջ հետ այդպիսի սերտ փոխհարաբերություններ ունենալ:

Երեքշաբթի *Մայիսի 28*

Պղծված քաղաքը

Չինական ասացվածքն ասում է, որ սենյակի ամենախավար տեղը մոմի տակ է: Այդ ասացվածքը կիրառելի է նաև Սոփոնիայի ժամանակներում Երուսաղեմի բարոյական վիճակի առումով: Մարգարեն հենց նոր հռչակել էր Հուդայի հարևան երկրների վրա Աստծո դատաստանների մասին լուրը (տե՛ս Սոփոնիա 2), ինչպես, օրինակ, Փղշտացիների երկիրը՝ արևմուտքում, Մովաբն ու Ամմոնը՝ արևելքում, Եթովպացիների երկիրը՝ հարավում, և Ասորեստանը՝ արևելքում: Բայց Նա դրա վրա կանգ չի առնում: Նա շարունակում է հանդիմանել նրանց մեղքերը, ովքեր ապրում են Աստծո քաղաքում՝ բուն Երուսաղեմում:

Կարդացե՛ք Սոփոնիա 3.1-5-ը: Այստեղ ո՞վ է դատապարտվում և ինչո՞ւ: Հարցրե՛ք ինքներդ ձեզ, թե ինչպես կարող էր Աստծո ժողովուրդը, ում այդքան լույս և ճշմարտություն էր տրված, այդպես հետզարգացում ապրել: Մենք ինչպե՞ս կարող ենք ինքներս մեզ ապահովել նման բաներից: _____

_____

_____

_____

Սոփոնիային հուզում էր հրեական մայրաքաղաքի ճակատագիրը: Նա նրա առաջնորդներին հանդիմանում էր քաղաքի բարոյական

անկման մեջ: Անբարոյությունը այն բանի անմիջական արդյունքն էր, որ առաջնորդները չեն կատարել իրենց վրա դրված պարտականությունները (հմմտ. Երեմիա 18.18, Եզեկիել 22.23-30): Ճախու դատարանը, որը կառավարվում է իշխանություն ունեցողների կողմից, համեմատվում է մռնչացող առյուծների հետ, իսկ դատավորները իրիկնային գայլեր են անվանվում: Տաճարը գնահատվում է ոչ դրական, քանի որ քահանաները չեն սովորեցնում Աստծո Խոսքը, իսկ մարգարեները չեն ասում ճշմարտությունը:

«Հովսիայի թագավորության ժամանակ Տերը խոսում էր Սոփոնիայի շուրթերով, ով նախազգուշացնում էր շարունակվող ուրացողության հետևանքների մասին և ճշմարիտ եկեղեցուն կոչ էր անում մտածել փառավոր ապագայի մասին: Հուդային վրա հասնող դատաստանների վերաբերյալ Նրա մարգարեությունները վերաբերում են նաև Աստծո այն դատաստաններին, որոնք չապաշխարած աշխարհին վրա կհասնեն Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 389):

Նայե՛ք ձեր շուրջը: Որքան էլ հրապուրիչ տեսք ունենա այս աշխարհը, այն դատապարտված է վերջնական կործանման: Մարդ անգամ կարիք չունի հավատալ Աստվածաշնչին՝ տեսնելու համար, թե որքան հեշտությամբ կարող է տեղի ունենալ այդ կործանումը: Ինչո՞ւ է Տերը մեր միակ հույսը, և ինչպե՞ս կարող ենք մենք սովորել ավելի շատ ապավինել Նրան և չհուսալ այս աշխարհի ունայնությանն ու դատարկությանը:

Չորեքշաբթի ***մայիսի 29***

Աստծո մեծագույն ուրախությունը

«Քո Տեր Աստվածը քո մեջ զորավոր է, Նա փրկում է. Նա պիտի ուրախանա քեզ վրա զվարճությամբ, Նա պիտի լռի Իր սիրով, և պիտի ցնծա քեզ վրա՝ խնդալով» (Սոփոնիա 3.17):

Իր գրքի եզրափակիչ մասում (Սոփոնիա 3.9-20) Սոփոնիան ցասման թեմայից անցում է կատարում վերականգնման թեմային: Դատաստանից հետո մենք մոտենում ենք Աստծո վերջնական նպատակներին: Համապատասխան դասերը ստանալով՝ ժողովուրդները միասին կանչելու են Տիրոջը և ամբողջ սրտով ծառայելու են Նրան: Մարդկային շուրթերը կմաքրվեն, որպեսզի բոլորը կարողանան երկրպագել Տիրոջը և Նրան փառաբանել իրենց ծառայությամբ: Փոքրաթիվ, բայց խոնարհ

ու հավատարիմ մնացորդը ողջ կմնա Հուդայում և կզբաղեցնի հպարտ առաջնորդների տեղը:

Ամենագլխավորն այն է, որ Աստված բնակվելու է Իր ժողովրդի հետ և ուղղելու է անցյալի բոլոր սխալները: Նրանք արդեն կարիք չեն ունենա ապրել ահուդողի մեջ, որովհետև Տերը բնակվելու է նրանց մեջ: Նա լինելու է նրանց Փրկիչն ու Ազատարարը: «Իսրայելի մնացորդը անօրենություն չեն անելու, և սուտ չեն խոսելու, և նրանց բերանում խաբեբայության լեզու չի գտնվելու, որովհետև նրանք պիտի արածեն և մակաղեն, և վախեցնող չի լինի» (Սոփոնիա 3.13):

Այդպիսի օրհնությունները Աստծո ժողովրդի մեջ մեծ ցնծություն առաջ կբերեն Տիրոջ հանդեպ, բայց մարգարեն հռչակում է, որ Աստված Ինքը *կուրախանա նրանց ցնծությամբ*: Նրա սերն ու ուրախությունը այնքան մեծ կլինեն, որ Նա *նրանց համար կուրախանա ցնծությամբ*:

Ինչպե՞ս է Եսայիա մարգարեն նկարագրել Աստծո ուրախությունն Իր փրկագնված ժողովրդի համար: Եսայիա 62.5, 65.19: _

Մեծ Արքան, աստվածային Առաջնորդը կպաշտպանի ու կարդարացնի Իր ժողովրդին: Նա նրանց պարգևում է Իր այն հաղթանակի բոլոր առավելությունները, որ մեզ համար տարել է խաչի վրա: Նա կբարձրացնի խոնարհներին և ստորացումը պատվի կվերածի, տառապանքները՝ օրհնության, մերժվածությունը՝ Իր անձնական ներկայության: Տառապողներն ու հանուն արդարության հալածյալները կբարձրացվեն. այս թեման է ընկած այն լուրի կենտրոնում, որ հռչակվում է Հիսուս Քրիստոսի կողմից:

Այդպիսի սոսկալի նախազգուշացումների հետ մեկտեղ Տերն Իր ժողովրդին հույս տրվեց: Մենք՝ երկրորդ գալստյան մասին խոստմանը հավատացող Յոթերորդ օրվա ադվենտիստներս, ինչպե՞ս կարող ենք օր առ օր ապրել այդ հույսով: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել այդ հույսը կենդանի պահել, հատկապես՝ առավել դժվարին ժամանակներում, երբ աշխարհը չի կարող տառապանքից բացի այլ բան առաջարկել մեզ:

Հինգշաբթի ***Մայիսի 30***

Աստծո պատասխանը անարդարությանը:

Կարդացե՛ք Նաում 1-3-ը: Ո՞ր համարներն են առանձնահատուկ կերպով բացահայտում Աստծո բնավորությունը: Մենք

ինչպե՞ս կարող ենք այստեղ բովանդակվող լուրերը կիրառել վերջին ժամանակների իրադարձությունների մեր ըմբռնման առումով: _____

_____

_____

Նաումի մարգարեությունը Աստծո Խոսքն է՝ ուղղված այս աշխարհի թագավորների դեմ, ովքեր ներկայացված են Նինվեի միջոցով: Մարգարեն, նայելով այն աշխարհին, որում ինքն ապրում էր, տեսնում էր Աստծո ձեռքը, որ ուղղված է Ասորեստանի թագավորության դեմ: Նա հայտարարում է, որ նրա մայրաքաղաք Նինվեն շուտով կընկնի, որպեսզի այլևս երբեք չբարձրանա: Նաումը բացարձակ վստահությամբ էր խոսում, քանի որ գիտեր Աստծո բնավորությունը և, ունենալով մարգարեության պարգև, տեսնում էր, թե ինչ պետք է տեղի ունենա (Նաում 1.1): Տերը մեղավորներին անպատիժ չի թողնի (Նաում 1.3, Ելից 34.6,7):

Ասորեստանցիները սնանկացրեցին բազում ժողովուրդների. նրանց իշխանության ծարավը անհագուրդ էր: Նրանց դաժանությունը հայտնի էր բոլորին: Որպես Աստծո «ածելի» (Եսայիա 7.20)՝ նրանք մեծ սիրով «սափրում էին» իրենց հարևաններին: Բայց եկել էր ածելու կոտրվելու ժամանակը: Աստծո դատաստանի գործիքները չեն ազատվում դատապարտումից: Նինվեն այլևս գոյություն չունի, բայց մարգարեական վկայությունը շարունակում է ապրել: Այն հիշեցնում է մեզ. թեև թվում է, թե Աստծո արդարադատությունն ուշանում է, վերջին հաշվով, ոչ մի բան չի կարող կանգնեցնել Աստծո դատաստանը:

Ինչպես տեսանք 6-րդ դասում, Նաում մարգարեի ծառայությունից տարիներ առաջ նինվեացիները լսեցին Հովնանի քարոզը, ապաշխարեցին, և Աստված խնայեց նրանց քաղաքը: Բայց այդ ապաշխարությունը երկար չտևեց. մարդիկ վերադարձան իրենց հին ճանապարհներին: Նրանց լծի տակ տառապող շատ երկրներ մեծ ուրախությամբ ընդունեցին Նինվեի անկման լուրը: Սուրիանդակը բարի լուրեր բերեց այն մասին (Եսայիա 52.7), որ Ասորեստանի ուժը կործանված է նրա աստվածների հետ: Աստծո ժողովուրդը նորից կարող է երկրպագություն կատարել խաղաղ ժամանակներում (Նաում 1.15):

Տիրոջ ողորմությունը գերազանցում է Նրա բարկությանը: Նա պաշտպանում է նրանց, ովքեր սպասում են Իր բարության լիությանը: Նաումը սովորեցնում է, որ Աստված հոգ է տանում Իրեն հուսացողներին, իսկ թշնամիներին Նրա հորդահոս հեղեղը կտանի խավարի մեջ (Նաում 1.8): Այս ամենի հետևում կանգնած էր Աստված, որովհետև Նա որոշել էր, որ Նինվեի համար վրա կհասնի դատաստանի օրը:

Մարգարեն ցույց է տալիս Աստծո հզոր ուժը: Ողջ արարչագործությունը դողում է Նրա առջև: Նա մեղքին հավիտյան չի համբերելու: Միևնույն ժամանակ, Նա բոլոր նրանց Փրկիչն է, ովքեր Իրեն են հուսացած: Այստեղ չեզոք տարածություն չկա: Մենք կա՛մ մի կողմում ենք, կա՛մ մյուս: «Ով ինձ հետ չէ, - ասել է Հիսուսը, - նա Ինձ հակառակ է» (Մատթեոս 12.30):

Ուրբաթ ***Մայիսի 31***

Հետագա ուսումնասիրության համար

«Անսխալ ճշգրտությամբ Անսահմանը պահում է այն ամենի հաշիվը, ինչ կատարվում է յուրաքանչյուր ժողովրդի մեջ: Դա շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ Նա Իր ողորմությամբ ապաշխարության կոչ է անում, բայց երբ Աստծո համբերության բաժակը լցվի, այդ ժամանակ կսկսվի Նրա բարկության ծառայությունը: Հաշիվը փակվում է: Աստծո համբերությունն ավարտվում է: Ողորմությունն այլևս չի բարեխոսում նրանց համար» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 364):

«Չընկած աշխարհների և երկնային զորքի ներկայությամբ աշխարհը ստիպված կլինի հաշիվ տալ ողջ երկրի Դատավորի՝ այն Նույնի առջև, ում իրենք դատապարտեցին ու խաչեցին: Դա Աստծո մեծ վրեժի օրն է: Քրիստոսն արդեն կանգնած չէ Պիղատոսի դատաստանի առջև: Պիղատոսը, Հերովդեսն ու ամենքը, ովքեր ծաղրում, գանահարում, մերժում ու խաչում էին Նրան, կհասկանան, թե ինչ է նշանակում զգալ Դառի ցասումը: Նրանց գործերը իրենց առջև կհայտնվեն ճշմարիտ լույսի ներքո» (Է. Ուայթ, Վկայություններ քարոզիչների համար, 132):

Հարցեր քննարկման համար

1. Որոշ մարդիկ Սոփոնիա մարգարեի օրերում սոսկալի արարքներ էին գործում ինչպես Աստծո, այնպես էլ իրենց մերձավորների դեմ, այն դեպքում, երբ ուրիշները այդ չարագործություններին (երբ դրանց մասին հայտնի էր դառնում) վերաբերվում էին դրականորեն: Այս երկու ուղիներից ո՞րն է, ձեր կարծիքով, առավել մեղսավոր Աստծո աչքերում: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:
2. Վերադարձե՛ք երկուշաբթի օրվա դասի վերջի եզրափակիչ հարցին, որտեղ բերված են հետևյալ բառերը. «Ոչ մի բան արտաքուստ այնքան անօգնական, բայց իրականում առավել անհաղթելի չէ, քան իր ոչնչությունը գիտակցող և Փրկչի արժանիքներին ամբողջովին

հուսացած հոգին»: Ի՞նչ է նշանակում ամբողջովին հուսալ Փրկչի արժանիքներին: Այս բառերն ինչպե՞ս են մեզ բացահայտում միայն Քրիստոսի հանդեպ հավատով փրկության մասին մեծ լուրը, և ինչո՞ւ է այդ ճշմարտությունն ընկած մեր հավատի հիմքում: Եթե մենք չեն հենվում Նրա արժանիքների վրա, այդ դեպքում ո՞ւմ արժանիքներին կարող ենք ապավինել:

3. Ինչո՞ւ է այդքան հեշտ, հատկապես՝ հարստության և հարմարավետության մեջ ապրող մարդկանց համար, մոռանալ Աստծուց լիակատար կախվածության մասին, Նրա, ով մեզ տվել է մեր ողջ ունեցած ամեն ինչը: Մենք ինչպե՞ս կարող ենք մեզ ապահովագրել այդ ճակատագրական մոլորությունից:
4. Խորհեցե՛ք այն գաղափարի մասին, որ Տերն ուրախանում և ցնծում է Իր ժողովրդի համար: Մենք հակված ենք մտածել, որ այդ մենք ենք երգում և ուրախանում Աստծո հանուն մեզ Նրա կատարած սխրանքի համար: Ի՞նչ է նշանակում՝ Նա ուրախանում և ցնծում է մեզ համար: Ինչպե՞ս դա կարող է լինել՝ հաշվի առնելով մեր խղճուկ վիճակը:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹԸ՝ ԱՌԱՋԻՆ ՏԵՂՈՒՄ

(ԱՆԳԵ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԸ)

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Անգե 1, Հովհաննես 2.19, Եզրաս 3.1-6, Մատթեոս 1.23, 12.6, Անգե 2, Ղուկաս 24.13-27:

Հիշելու համարը.

«Իմն է արծաթը, և իմն է ոսկին. ասում է Զորաց Տերը» (Անգե 2.8):

Հիմնական միտքը.

Անգեի լուրը պարզ է. որո՞նք են մեր գերակայությունները, և ինչո՞ւ է այդքան կարևոր դրանք ճիշտ դասակարգելը:

Անգե մարգարեի գիրքը Աստվածաշնչի ամենահամառոտ գրքերից է: Այն գրվել է Հուդայի համար ճգնաժամային ժամանակահատվածում: Գերիները Բաբելոնից վերադարձել էին գրեթե քսան տարի առաջ, բայց նրանք ասես մոռացել էին իրենց վերադարձի պատճառը: Նրանք Աստծո տաճարը թողել էին ավերված և իրենց ողջ եռանդը ծախսում էին իրենց սեփական տները կառուցելու վրա:

Մարգարեն գերությունից վերադարձած մարդկանց դրդում էր ուշադիր մտորել ստեղծված իրավիճակի շուրջ: Նրա լուրը պարզ էր ու տրամաբանական: Մարդիկ ծանր աշխատանք էին կատարում, բայց քիչ էին վաստակում: Դա տեղի էր ունենում այն պատճառով, որ նրանք շփոթել էին առաջնահերթությունները: Նրանք պետք է իրենց բոլոր գործերում առաջին տեղը հատկացնեին Աստծուն: Ինչպես Ինքը՝ Հիսուսն ասաց. «Առաջ Աստծո արքայությունը և Նրա արդարությունը խնդրեցեք, և այդ ամենը կտրվի ձեզ» (Մատթեոս 6.33):

Այսօր մեզ նույնպիսի հեշտությամբ է գրավում գոյության պայքարը, և մենք մոռանում ենք, թե ինչպիսին պետք է լինի մեր գլխավոր գերակայությունը: Իհարկե, այն բովանդակվում է նրանում, որ միշտ հետևենք Տիրոջ կամքին:

Շատ ցանում եք, քիչ՝ հնձում

Կարդացե՛ք Անգե 1.1-11-ը: Ի՞նչ է տեղի ունենում ժողովրդի հետ, և, որ էլ ավելի կարևոր է, այդ նույն սկզբունքն ինչպե՞ս կարող է գործել այսօր մեր կյանքում: Մենք ինչպե՞ս կարող ենք խուսափել նույն բանի մեջ մեղավոր լինելուց: _____

_____

_____

«Ավելի քան մեկ տարի տաճարը մնացել էր անտեսված և գրեթե մոռացվել էր: Մարդիկ ապրում էին իրենց տներում և ջանում էին նյութական բարեկեցության հասնել, բայց նրանց վիճակը խղճալի էր: Նրանք շատ էին աշխատում, բայց՝ ապարդյուն: Թվում էր, թե բնությունն ինքը ապստամբել էր նրանց դեմ: Նրանք ամայի էին թողել տաճարը, և Տերը ամայացնող երաշտ ուղարկեց նրանց դաշտերին: Ավելի վաղ, ի նշան նրանց հանդեպ Իր բարեհաճության, Աստված նրանց դաշտերի ու այգիների պտուղներ էր պարգևում՝ տալով հաց, գինի և յուղ, բայց քանի որ նրանք եսասիրաբար էին օգտագործում այդ շռայլ պարգևները, օրհնությունները խլվեցին նրանցից» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 573):

Անգեն մարդկանց ցույց էր տալիս այն իրադրությունը, որում նրանք հայտնվել էին: Աշխատանքի ունայնությունն անեծք էր, որը նրանց վրա էր հասել Աստծո ուխտը խախտելու արդյունքում (Ղևտացոց 26.16,20): Մինչև որ մարդիկ ուշադրություն չդարձնեն այս գերակայությանը, նրանք հաջողություն չեն ունենա:

Անգեի սիրտը ցավում էր Աստծո տաճարի համար, և նա ցանկանում էր, որ ժողովուրդը հնարավորինս արագ ավարտեր դրա վերականգնումը: Նրա ակտիվությունն արմատապես տարբերվում էր նրանց ինքնահանգստացումից, ովքեր տաճարի համար հոգ չէին տանում այնպես, ինչպես հոգում էին իրենց սեփական հարմարավետության և բարեկեցության մասին: Այն ժամանակ, երբ Անգեն տառապում էր տաճարի համար, մարդիկ գլխավորապես հոգ էին տանում իրենց սեփական տների մասին:

Տերն օգտագործում էր Անգեին՝ ցնցելու համար մարդկանց սրտերը և նրանց ուշադրությունը դարձնելու Աստծո գործի վրա: Հնարավոր չէր պատշաճ կերպով պատվել Աստծուն, քանի դեռ Նրա տունը ավերակ վիճակում էր: Երուսաղեմի տաճարը խորհրդանշում էր Աստծո ներ-

կայությունը ընկած մարդկության մեջ: Դա ողջ աշխարհին տեսանելի հիշեցում էր այն մասին, որ Տերն է երկնքի ու երկրի Աստվածը: Իսրայելի զավակները ինչպե՞ս կարող էին վկայել ճշմարիտ Աստծո մասին, երբ այդ Աստծո և փրկության ողջ ծրագրի խորհրդանիշն ինքը (տե՛ս Հովհաննես 2.19, Մատթեոս 26.61) ավերակ վիճակում էր: Տաճարի հանդեպ նրանց վերաբերմունքը առավել խորը հոգևոր խնդիր էր բացահայտում՝ նրանք կորցրել էին իրենց՝ որպես Աստծո ժողովրդի մնացորդի առաքելության ըմբռնումը:

Դուք այստեղ որևէ նախազգուշացում տեսնո՞ւմ եք մեզ համար:

Երկուշաբթի ***հունիսի 3***

Ասպծո մեծագույն խոսքումը

Կարդացե՛ք Անգե 1.12-14-ը: Ուշադրություն դարձրեք նպատակի միասնության զգացումին: Ինչո՞ւ էր նրանց անհրաժեշտ անել հենց այն, ինչի համար իրենք կոչված էին: _____

_____

_____

Այս անգամ ժողովրդի ղեկավարները ու մնացորդը առանց հապաղելու լսեցին մարգարեի խոսքերը: Նրանք ամեն բան նախապատրաստեցին, հավաքեցին նյութերը և երեք շաբաթ անց վերսկսեցին աշխատանքները տաճարում: Մեկ շաբաթվա ընթացքում նրանք կառուցեցին զոհասեղանը և վերականգնեցին զոհաբերությունների ծառայությունը (Եզրաս 3.1-6): Հինգ տարուց պակաս ժամանակում տաճարի շինարարությունն ավարտվեց:

Թեև Աստծո թագավորությունը չի կարելի նույնականացնել որևէ շենքի հետ, Անգե մարգարեի գիրքը հիշեցնում է մեզ, որ Աստված երբեմն օգտագործում է նյութական իրերը, ինչպես, օրինակ, շենքերը, հոգևոր նպատակների համար:

Եթե մարգարեական հաջողությունը չափվեր մարգարեական լուրի հետ անհապաղ համաձայնությամբ, այդ դեպքում Անգեն կլիներ ամենահաջողակ մարգարեներից մեկը: Նրա քարոզը մարդկանց դրդեց գործելու: Մեկ ամսվա ընթացքում տաճարի վերակառուցման աշխատանքը վերսկսվեց, և Աստծո մարգարեն վստահեցրեց մարդկանց, որ Տերը կօգնի իրենց:

Անգե 1.12-14-ում պատմվում է մարգարեի լուրի նկատմամբ քաղաքի ղեկավարների և ժողովրդի արձագանքի մասին: Ամենքը հնա-

զանդվեցին Տիրոջը, որովհետև գիտակցեցին, որ Նա է ուղարկել Անգեին: «Ժողովուրդը վախեցավ Տիրոջից» (համար 12) և դա ցույց տվեց ծառայության մեջ՝ Նրան պատշաճ ուշադրություն հատկացնելով: Այժմ Անգեն կարող էր նոր խոսք փոխանցել Տիրոջից. «Ես ձեզ հետ եմ» (համար 13): Հենց որ ժողովուրդը որոշեց հնազանդվել Տիրոջը, հանդիմանության լուրը փոխարինվեց քաջալերանքի խոսքերով: Աստծո ներկայության հավաստիացումն իր մեջ կրում էր բոլոր մյուս օրհնությունների խոստումը: «Ես ձեզ հետ եմ» պնդման արմատները գնում են դեպի այն ուխտի խոստումները, որոնք Աստված հռչակեց նահապետների և Մովսեսի ժամանակներում (Ծննդոց 26.3, Ելից 3.12, Թվոց 14.9):

Իհարկե, «մեզ հետ» Աստծո ներկայության մեծագույն դրսևորումը հենց Ինքը՝ Հիսուսն է (տե՛ս Եսայիա 7.14, Մատթեոս 1.23, 28.20): Խորհեցե՛ք այն փաստի մասին, որ Հիսուսը՝ տիեզերքի Արարիչն ու Ամենակալը, ապրել է մեր մեջ: Սա մեզ ի՞նչ է ասում մեր նշանակալիության մասին տիեզերքում, որն այնքան մեծ է, որ մենք հեշտությամբ կարող ենք մեզ պարզապես փոշեհատիկներ համարել: Ձեր պատասխաններով կիսվե՛ք շաբաթօրյա դասի ժամանակ:

Երեքշաբթի ***հունիսի 4***

Մի՛ վախեցեք

Անգե 2.1-5-ում ներկայացված է Աստծո ժողովրդի մեջ մեծ վերածննդի զարգացումը: Տաճարի վերականգնման աշխատանքներն սկսվելուց մոտավորապես մեկ ամիս անց Աստված Անգե մարգարեի միջոցով քաջալերանքի լուր ուղարկեց մնացորդին, որը, չունենալով բավարար միջոցներ, որոշել էր վերականգնել Աստծո տունը, ինչպես հրամայել էր մարգարեն: Անգեն ծերերին հարցնում էր, թե տաճարի ներկա վիճակը որքանով է տարբերվում մինչ գերությունը նրա ունեցած տեսքից: Հասկանալի է, որ այդ տաճարը նշանակալի չափով զիջում էր նախկինին: Մարդիկ կարող էին հիասթափվել, որովհետև հնարավորություն չունեին կրկնել Սողոմոնի տաճարի նախկին հիասքանչությունը:

Մարգարեն ժողովրդին համոզում էր՝ քաջալերվել և շարունակել աշխատել, որովհետև իրենց հետ կլինի Աստծո Հոգին: Նա մնացորդի բոլոր անդամներին կոչ էր անում լինել ուժեղ և ջանասիրաբար աշխատել, որովհետև նրանց մեջ ներկա էր Ամենազոր Աստված: Ղեկավարներին հասցեագրված Անգեի խոսքերը՝ «զորացե՛ք… մի վախեցեք», հնչում են,

ինչպես Հեսուին ուղղված Տիրոջ բառերը Մովսեսի մահից հետո (Հեսու 1.9): Որքան ավելի սակավ ու թույլ էին Իսրայելի պաշարները, այնքան նրանք Աստծո հանդեպ հավատի ավելի շատ կարիք ունեին: Մարգարեն հայտարարեց, որ արդյունքում այդ տաճարի փառքը կգերազանցի նախորդինին: Այդ մարգարեությունն իրականացավ, որովհետև եկավ Նա, ով տաճարից ավելի մեծ էր (տե՛ս Մատթեոս 12.6):

Հոգու ներկայությունը հաստատում էր Իսրայելում Աստծո թագավորության հարատևությունը: Աստծո Հոգին, ով ղեկավարում էր Մովսեսին ու ծերերին, ով ոգեշնչված լուրերով ուղարկում էր մարգարեներին, գտնվում էր ժողովրդի մնացորդի մեջ: Առաջնորդների ու ժողովրդի բարեպաշտ արձագանքը վկայում էր, որ հոգևոր վերածնունդ է տեղի ունեցել: Հոգու ներկայությունը վերածնել էր նրանց և մերձեցրել Աստծո հետ: Հոգու ներկայությունը նաև առատ օրհնություններ էր երաշխավորում: Մարգարեն ժողովրդին ոգևորում էր աշխատելու, որպեսզի Աստծո խոստումներն իրականանային:

Անգեն Աստծո խոսքը տանում էր ժողովրդին, որը կյանքի դժվարություններ և հիասթափություն էր ապրում չիրականացած հույսերից: Նա նրանց ուշադրությունը հրավիրում էր Աստծո վրա, ով միշտ հավատարիմ է և սպասում է, որ մարդիկ կլինեն Իր Թագավորության պատասխանատու քաղաքացիներ, անխոնջ կերպով բարիք կգործեն և դրա միջոցով կգտնեն իրենց կյանքի ճշմարիտ իմաստն ու նպատակը:

Աստծուն հավատալը, նաև Նրան հնազանդվելու ցանկությունը ինչպե՞ս են իմաստ հաղորդում մեր կյանքին:

Հորեքշաբթի *հունիսի 5*

Ցանկալի բոլոր ժողովուրդների համար

Կարդացե՛ք Անգե 2.6-9-ը: Ի՞նչ խոստում է այստեղ տրվում, և մենք ինչպե՞ս պետք է հասկանանք դրա իրականացումը: _____

_____

_____

Անգեի միջոցով Աստված հայտարարեց Տիրոջ օրը ժողովուրդների մեծ ցնցման մասին, երբ տաճարը կլցվի Աստծո ներկայությամբ: Մարգարեն իր ժամանակակիցներին կոչ էր անում ներկայիս ձախորդություններից և աղքատությունից ավելի հեռու նայել, տեսնել Աստծո արքայության ապագա փառքը, որ մատնացույց էր անում տաճարը:

Երուսաղեմի տաճարը հոյակապ շենք դարձնելու ձգտումը հիմնված

էր այն Աստծո ներկայությանն արժանի դարձնելու ցանկության վրա: Բայց, այս համարի համաձայն՝ Տերը պատրաստ էր բնակվել պակաս փառավոր տան մեջ և հետագայում փառք բերել նրան: Մարդիկ կարիք չունեին չափազանց շատ անհանգստանալու, թե իրենք ինչպես պետք է ֆինանսավորեն տաճարի վերականգնումը: Բոլոր գանձերը պատկանում են Աստծուն, ով խոստացել է ներկա լինել այդ նոր տաճարում: Տերն Ինքը կապահովի տաճարի հիասքանչությունը:

Այն ժամանակ, երբ ժողովուրդը շարունակում էր բարեխղճորեն աշխատել և ձգտում էր Աստծո շնորհը վերածնել սրտում և կյանքում, Աստված նրանց Անգեի ու Զաքարիայի միջոցով լուրը լուրի հետևից էր ուղարկում՝ հավաստիացնելով, որ նրանց հավատը առատորեն կպարգևատրվի, և որ նրանց կառուցած տաճարի ապագա փառքի մասին Աստծո խոսքն անտեղի չի անցնի: Այդ նույն տաճարում, երբ ժամանակը իր լրումին կհասնի, կկանգնի բոլոր ժողովուրդների Փափագելին՝ որպես մարդկության Ուսուցիչ և Փրկիչ» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 577):

Աստված խոստացել էր, որ այդ տաճարի փառքը նախորդ տաճարի փառքից ավելին կլինի: Դա մի այլ տեսակի փառք կլինի, որովհետև այդ տաճարը կպատվի իր մեջ Հիսուսի ներկայությունը: Իսկապես, Քրիստոսի ներկայությունը նոր տաճարի փառքը ավելի մեծ դարձրեց, քան Սողոմոնի տաճարի փառքն էր:

Կարդացե՛ք Եբրայեցիս 8.1-5-ը: Ինչպիսին էլ լինի երկրային տաճարի փառքը, մենք երբեք չպետք է մոռանանք, որ դա միայն ստվեր էր, փրկության ծրագրի խորհրդանիշը: Խորհեցե՛ք, թե, ինչ հենց հիմա Հիսուսը հանուն մեզ ինչ է կատարում «ճշմարիտ խորանում, որ Տերն է կանգնեցրել, ոչ թե մարդը»: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել ավելի շատ գնահատել սրբարանի կարևորությունը փրկության ծրագրում:

Հինգշաբթի ***հունիսի 6***

Տիրոջ կնիքը

«Այն օրը, ասում է Զորաց Տերը, ես քեզ կառնեմ, ո՛վ Սաղաթիելյան Զորաբաբել, ասում է Տերը, և քեզ կշինեմ ինչպես մի կնիք. որովհետև ես քեզ հավանել եմ, ասում է Զորաց Տերը» (Անգե 2.23):

Տիրոջ մասին եզրափակիչ լուրն Անգեի կողմից տրվել է այն նույն օրը, ինչ և նախորդը՝ լրացման կարգով (տե՛ս Անգե 2.22,23): Տերը

զգուշացնում էր թագավորությունների գալիք կործանման և Աստծո դատաստանի օրը ժողովուրդների ոչնչացման մասին: Բայց այդ նույն օրը, ասում է մարգարեն, Տիրոջ Ծառան կավարտի Տիրոջ սկսած փրկության գործը: Դա, ինչպես մենք հասկանում ենք, լիովին և վերջնականապես ի կատար կածվի միայն երկրորդ գալստյան ժամանակ և այդ իրադարձությանը հաջորդող ժամանակի ընթացքում:

Ժողովրդի քաղաքական առաջնորդն այստեղ կապակցվում է Իսրայելի Դավիթ թագավորի փառավոր թագավորության հետ, ում սերունդն էր ինքը: Զորաբաբելը Հեքոնիա թագավորի թոռն էր և Դավթի գահի օրինական ժառանգորդը բաբելոնյան գերությունից հետո: Նա Հուդան կառավարում էր պարսից Դարեհ Մեծ թագավորի տիրակալության ընթացքում և Երուսաղեմի տաճարի վերականգնման հետևում կանգնած գլխավոր գործող անձն էր: Հեսուն քահանա էր, ով նույնպես օգնություն էր ցուցաբերում տաճարի կառուցման գործին:

Մարգարեն ասաց, որ Զորաբաբելը Տիրոջ կնիքը կլինի, նա, որ թագավորական իշխանության և տիրակալության վկայությունն է: Իրավական փաստաթղթերի վրա իր կնիքը դնող թագավորի նման՝ Տերը կնիք կդնի ողջ աշխարհի վրա՝ Իր ծառայի աշխատանքի միջոցով: Թեև տաճարի վերականգնման մեջ Զորաբաբելի հիմնարար դերը երբեք չպետք է թերագնահատվի, նա, միևնույնն է, չկատարեց Անգե մարգարեի միջոցով իրեն Աստծո կողմից տրված բոլոր խոստումները: Ավետարանի ոգեշնչված հեղինակները նշում են Հիսուս Քրիստոսի՝ ինչպես Դավթի, այնպես էլ Զորաբաբելի որդու Անձն ու ծառայությունը՝ որպես Աստվածաշնչում բովանդակվող բոլոր մեսիական խոստումների վերջնական իրականացում:

Կարդացե՛ք Ղուկաս 24.13-27-ը՝ կենտրոնանալով հատկապես երկու տղամարդկանց ուղղված Քրիստոսի խոսքերի վրա: Ի՞նչ կարևոր լուր է Նա հաղորդում նրանց, և ինչպե՞ս են Նրա բառերն ընդգծում Հին Կտակարանի մարգարեությունների ըմբռնման կարևորությունը: Ինչո՞ւ անգամ այսօր դա այդքան արդիական է քրիստոնյաների համար: _____

_____

Ուրբաթ *հունիսի 7*

Հետագա ուսումնասիրության համար

«Բայց անգամ այդ մռայլ ժամին նրանք, ովքեր հուսացել են Աստ-

ծուն, չմնացին առանց հույսի: Ժողովրդին ճգնաժամից դուրս բերելու համար կանչվեցին Անգե և Զաքարիա մարգարեները: Այդ լրաբերները խանդավառ կերպով ժողովրդի համար շարադրեցին նրա այդքան աղետալի վիճակի պատճառը: Մարգարեները հայտարարեցին, որ մարդիկ չեն կարող նյութական բարեկեցություն ձեռք բերել, որովհետև առաջին տեղում Աստծո շահերը չեն դնում: Եթե իսրայելացիները պատվեին Աստծուն, եթե նրանք պատշաճ հարգանք և քաղաքավարություն դրսևորեին՝ առաջին հերթին հոգ տանելով Նրա տան վերականգնման մասին. այդ ժամանակ Նա կբնակվեր նրանց մեջ և կօրհներ նրանց» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 573, 574):

«Երկրորդ տաճարը փառավորվեց ոչ թե Եհովայի փառքի ամպով, այլ Նրա կենդանի ներկայությամբ, ով Ինքն Աստված էր՝ հայտնված մարմնով: «Բոլոր ժողովուրդների Ցանկալին» իսկապես եկավ Իր տաճար և որպես Նազովրեցի Այր՝ սովորեցնում ու բժշկում էր նրա սրբազան բակերում: Միայն Քրիստոսի ներկայության շնորհիվ երկրորդ տաճարն իր փառքով գերազանցեց առաջինին» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 24):

Հարցեր քննարկման համար

1. Դասարանում քննարկե՛ք երկուշաբթի օրվա դասում տրված հարցը՝ երկրի վրա Հիսուսի գտնվելու մասին: Խորհեցե՛ք ոչ միայն Նրա՝ այստեղ բնակվելու, այլ նաև Նրա զոհի մասին, որ բերվեց հանուն աշխարհի մեղքերի: Դա ի՞նչ նշանակություն ունի և մեզ ի՞նչ է ասում մեր արժեքավորության վերաբերյալ: Խորհեցե՛ք նաև այն մասին, թե մարդկության վերաբերյալ այդպիսի տեսանկյունը որքանով է տարբերվում աթեիստական էվոլյուցիոնիստական հայացքներից, որոնք այդքան տարածված են մեր աշխարհում:
2. Եսայիան խոսում է Բաբելոնի հպարտ թագավորի մասին, ով, լինելով իր հզորության և իշխանության գագաթնակետին, «սարսեցնում էր երկիրը, դողացնում էր թագավորությունները» (Եսայիա 14.16,17): Նրա գործողություններն ինչո՞վ էին տարբերվում Անգեի կողմից երկրորդ գլխում նկարագրված Աստծո գործողություններից:
3. Հին հրեաները հաճախ անհնազանդ էին Աստծո մարգարեների կողմից հռչակված լուրերին: Պատրաստ եղեք՝ դասարանում կիսվելու այնպիսի օրինակներով, երբ այսօր Աստծո ժողովուրդն ընդդիմանում Տիրոջ կողմից իրեն ուղարկվող լուրերին:
4. Աստվածաշունչը հստակորեն ցույց է տալիս, որ հին տաճարը և զոհաբերությունների նրա համակարգը Հիսուսի մահից հետո մեկընդ-

միշտ կորցրեցին իրենց նշանակությունը: Մեզ համար ի՞նչ է արել և ի՞նչ է անում Քրիստոսը երկնային սրբարանում, որ հնարավոր չէր անել երկրային սրբարանում (տե՛ս Եբրայեցիս 8, 9):

ՀՈՒՅՍԻ ՏԵՍԻԼՔՆԵՐ

(ԶԱՔԱՐԻԱ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԸ)

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացեք.

Զաքարիա 1, 2, Հռոմեացիս 15.9-18, Եփեսացիս 3.1-8, Զաքարիա 3, 4, Ելից 25.31-40, Զաքարիա 7:

Հիշելու համարը.

«Այն օրը, ասում է Զորաց Տերը, դուք միմյանց կկանչեք թզենու տակ, և խաղողի որթի տակ» (Զաքարիա 3.10):

Հիմնական միտքը.

Թեև Իսրայելը պատժվել էր իր մեղքերի համար, եկավ կրկին Աստծո հետ փոխհարաբերությունների մեջ ապրելու ժամանակը՝ համաձայն Նրա խոստումների:

Կենտրոնական Եվրոպայում մի հին ամրոցի պատին կարելի է կարդալ լատիներեն գրված մի սեղմ գրառում. «Dum spiro, spero!»: Դա նշանակում է՝ «Քանի դեռ շնչում եմ՝ հույս ունեմ»: Այս արտահայտությամբ կարելի է ամփոփել Աստծո ժողովրդին ուղղված Զաքարիա մարգարեի լուրը: Բաբելոնյան գերությունից վերադառնալուց քսան տարի հետո խանդավառությանը փոխարինելու եկավ հիսաթափությունը: Մարդիկ նորից սկսեցին կասկածել Իր ժողովրդի մեջ Աստծո ներկայությանը:

Զաքարիան, ում անունը նշանակում է «Տերը հիշում է», իր մարգարեական ծառայությունն սկսել էր Անգեի ծառայության սկզբից մի քանի ամիս անց (Անգե 1.1, Զաքարիա 1.1): Մի շարք մարգարեական տեսիլքներ ստանալով՝ Զաքարիան հասկացավ Աստծո ծրագրերը ներկայի և ապագայի վերաբերյալ: Աստծո հավիտենական թագավորությունը մոտենում է, բայց մարգարեն իր ժամանակակիցներին կոչ էր անում՝ Տիրոջը ծառայել այժմ: Գրքի նշանակալի մասը կենտրոնացած է հենց այն բանի վրա, թե ինչպես նրանք կարող են դա անել: Այս և հաջորդ շաբաթ մենք կդիտարկենք, թե ինչ է Տերը մեզ բացել Զաքարիա մարգարեի միջոցով:

Կյանքի մխիթարիչ խոսքերը

Կարդացե՛ք Զաքարիա 1-ը: Ի՞նչ լուր է հաղորդված այս գլխում: Հատուկ ուշադրություն դարձրեք Զաքարիա 1.3-ի վրա: Տերն ի՞նչ է ասում մարդկանց: _____

_____

Բաբելոնյան գերությունից վերադարձը մնացած ժողովրդի սիրտը լցրեց ուրախությամբ: Բայց այն նաև առանձնահատուկ հուզումներ առաջ բերեց: Կկարողանա՞ն իրենք անվտանգ ապրել իրենց երկրում, թե՞ թշնամիները նորից կգան: Աստված ներե՞լ է իրենց նախկին անհավատարմությունը, թե՞ շարունակելու է պատժել իրենց: Ապագան ի՞նչ է պատրաստում Աստծո ժողովրդի և մյուս ժողովուրդների համար:

Իր տեսիլքում Զաքարիան տեսավ Տիրոջ Հրեշտակին, ով գնում էր Հուդան պաշտպանելու: Հրեշտակն սկսեց այս հարցից. «մինչև ե՞րբ»: Սուրբ Գրքի էջերում այս բառով սկսվող հարցը հաճախ արտահայտում է մարդկային տառապանքները և Աստծուց օգնություն աղերսելը (Սաղմոս 74.10, Եսայիա 6.11, Դանիել 8.13): Այս հարցի պատասխանը եկավ անմիջապես մեկնաբանող Հրեշտակի կողմից, ով այն փոխանցեց մարգարեին: Նրանում կային մխիթարության խոսքեր, որոնք հավաստիացնում էին Աստծո ողորմության և աջակցության մասին:

Զաքարիային հրամայվեց հռչակել այն մասին, որ Տերը նախանձել է Երուսաղեմի համար (Զաքարիա 1.14): Նախանձը կարող է բացասական իմաստ ունենալ, բայց Աստվածաշնչում այն նաև Աստծո սիրո արտահայտություն է: Աստված սիրում էր Իր ժողովրդին և նրանից հավատարմություն էր սպասում: Ի տարբերություն Երուսաղեմի հանդեպ սիրո՝ Տերը վրդովված էր այն ժողովուրդների հանդեպ, որոնք դաժանորեն էին վերաբերվում Իր ժողովրդին (համար 15): Նրանց մեղքը նրանում էր, որ հրեաների Աստծո պատժին նրանք ավելացրել էին գերիների հանդեպ չափազանց դաժան վերաբերմունքը:

Զաքարիա 1.16,17-ում ընդունվում է այն փաստը, որ Աստված զայրանում էր, բայց Նա խոստացել էր մխիթարություն պարգևել: Նրա նպատակը, որի մասին մարգարեն պետք է պատմեր, այն էր, որ Աստված Երուսաղեմին կվերաբերվեր գթասրտությամբ: Տերը կմխիթարի Սիոնին (տե՛ս Եսայիա 40.1), այն ժամանակ, երբ Նրա ցասումն ուղղված կլինի նրա թշնամիների դեմ: Երուսաղեմը կվերականգնվի և կրկին կդառնա Աստծո ներկայության վայր:

Եվս մեկ անգամ կարդացե՛ք Զաքարիա 1.3-ը: Մարդն ինչպե՞ս է դիմում Տիրոջը: Սա Աստծո և Նրա ժողովրդի միջև անձնական փոխհարաբերությունների վերականգնման կո՞չ է: Մենք ինչպե՞ս ենք ամեն օր դիմում Տիրոջը (և դիմո՞ւմ ենք առհասարակ):

Երկուշաբթի *հունիսի 10*

Տերը գալիս է

Կարդացե՛ք Զաքարիա 2-ը: Այստեղ նկարագրված է տեսիլքը, որում մարգարեին ցույց տրվեց վերականգնված Երուսաղեմը՝ մարդկանց այնպիսի թվակազմով որ չէին տեղավորվում նրա սահմաններում: Այս տեսլիքի համաձայն՝ քաղաքը կհրապուրի նաև բազմաթիվ հեթանոսների: Այս միտքը, հավանաբար, շատ տարօրինակ էր հնչում ժողովրդի համար: Տասներորդ համարն սկսվում է ուրախանալու կոչով, և այստեղ էլ հիշատակվում է ցնծության պատճառը՝ Տիրոջ անձնական գալուստը, ով ապրելու է Իր ժողովրդի մեջ:

Վերականգնված տաճարում բնակվելու պատրաստ Տիրոջ դրամատիկ վերադարձը՝ ահա Աստծուն փառաբանելու պատճառը գերությունից վերադարձածների համար: Սիոնը՝ մեծ Թագավորի բնակության վայրը, անվանվել է «Սիոնի դուստր». սա մարգարեական անուն է, որը փոխանցում է մեղմ, քնքուշ վերաբերմունքը: Փառավոր հույսի համատեքստում Սիոնին կոչ է արվում ուրախանալ, որովհետև Տերն Ինքը հոգ կտանի Իր ժողովրդի համար: Ցանկացած մեկը, ով դիպչում է Աստծո ժողովրդին, դիպչում է Նրա աչքի բիբին (Զաքարիա 2.8):

Մարգարեն ասել է, որ Տիրոջ օրը շատ ուրիշ ազգեր կգան և կմիանան Աստծո ուխտին: Աստծո սկզբնական ծրագիրն ամփոփվում էր նրանում, որ շրջապատող ազգերը տեսնեին, թե ճշմարիտ Աստծուն ծառայելը ինչպիսի օրհնություններ և բարգավաճում է բերում: Այդպիսով, նրանք կդրդվեին միանալ Տիրոջը: Արդյունքում Իսրայելի մնացորդը և հավատքի եկած հեթանոսները մեկ ժողովուրդ կկազմեին, որի մեջ կլիներ Ինքը՝ Տերը: Դրանում կկատարվեր Աբրահամին և Սառային տրված Աստծո խոստումն այն մասին, որ նրանց սերնդում կօրհնվեն բոլոր ազգերը (Ծննդոց 12.1-3):

Ինչպե՞ս պետք է կատարվեր այդ մարգարեությունը (Հռոմեացիս 15.9-18, Եփեսացիս 3.1-8): _____

_____

_____

Զաքարիային տրված մարգարեության մեջ Աստված խոստանում է ոչ թե ժողովուրդների կործանումը, այլ նրանց միացումը Աստծո ուխտի ժողովրդին: Խոստացված ապագան Աստծո ձեռնարկած նախաձեռնության արդյունքն է. այդ խոստման կատարմանը շատ աստվածաշնչյան մարգարեներ էին փափագում: Հիսուս Քրիստոսը Իր եկեղեցուն հանձնարարեց ամբողջ աշխարհին քարոզել բարի լուրը Հիսուսում փրկության մասին, որը կարող է ստանալ յուրաքանչյուրը, ով կընդունի այդ լուրը: Պողոս առաքյալն Աստծո այդ ծրագիրը անվանում էր խորհուրդ: «Այն խորհրդի հայտնության համեմատ, որ հավիտենից ի վեր պահված էր» (Հռոմեացիս 16.25):

Բոլոր ժողովուրդների համար նախատեսված Ավետարանի լուրի համընդհանրական լինելու մասին մեր ըմբռնումն ինչպե՞ս է արտացոլվում մեր կյանքում. այսինքն՝ որքանո՞վ են մեր կյանքը, ժամանակն ու մտքերը նվիրված աշխարհին մեզ տրված զարմանահրաշ ճշմարտությունները հասցնելուն:

Երեքշաբթի ***հունիսի 11***

Ներելու՝ Աստծո ցանկությունը

Կարդացե՛ք Զաքարիա 3-ը: Այստեղ ինչպե՞ս է պատկերված Ավետարանը: _____

_____

Հին Կտակարանի ոչ մի ուրիշ հատված, հնարավոր է, բացառությամբ Եսայիա մարգարեի 53-րդ գլխի, այնքան լավ չի բացահայտում միայն հավատի միջոցով փրկության հրաշալի ճշմարտությունը, որքան Զաքարիա 3-ը: Այս տեսիլքում քահանայապետ Հեսուն հանդես է գալիս մեղադրյալի դիրքում, իսկ Նրան մեղադրում է սատանան: Քահանայապետի դեմ մեղադրանքները տարածվում են նաև ժողովրդի վրա, ում նա ներկայացնում է: Հեսու անունը նշանակում է «Տերը փրկում է» (տե՛ս Մատթեոս 1.21):

Աստվածաշնչում աջ կողմում գտնվելը պաշտպանություն է ցույց տալիս: Սաղմոսերգուն ասում է. «Ես Տիրոջը դրեցի իմ առջև ամեն ժամանակ. որովհետև Նա իմ աջ կողմն է, ես չեմ սասանվի» (Սաղմոս 16.8, տե՛ս նաև Սաղմոս 44.3): Իսկ մեղադրողը հակառակն է անում (Սաղմոս 109.6): Այն ժամանակ, երբ Հիսուսը Աստծո առջև բարեխոսում է ժողովրդի համար, սատանան նրանց դեմ մեղադրանքներ է առաջ քաշում՝ հիմնված նրանց մեղավոր լինելու վրա:

Տերը մերժում է մեղադրանքները՝ մեղադրողին հիշեցնելով, որ Իր ողորմությամբ Նա արդեն ընտրել է Հեսուին: Ավելին, Նրա ժողովուրդն արդեն լիովին կրել է Աստծո պատժաչափը: Հեսուն ու մնացորդի ժողովուրդը բաբելոնյան երկարատև գերությունից դուրս են քաշվել, ինչպես տաք խանձողը՝ կործանարար հրդեհից (Ամովս 4.11):

Տիրոջ Հրեշտակի հրամանով Հեսուի՝ ժողովրդի մեղքերը խորհրդանշող հանդերձները հանվում են Նրանից. Նա հիմա մաքրված է: Հետո նրան փրկության և արդարության նոր հանդիսավոր հագուստ է տրվում:

Արդյունքում Հեսուին հանձնարարված է կատարել Աստծո կամքը և գնալ Նրա ճանապարհներով, ինչը կբերի Աստծո բազմաթիվ օրհնությունների:

«Մեծ քահանան ո՛չ իրեն, ո՛չ էլ Աստծո ժողովրդին չի կարող պաշտպանել սատանայի մեղադրանքներից: Նա չի պնդում, թե Իսրայելն անմեղ է: Ժողովրդի մեղքերը խորհրդանշող կեղտոտված հագուստով, մեղքեր, որոնք Նա Իր վրա է վերցնում որպես նրա բարեխոս, Նա կանգնած է Հրեշտակի առջև՝ խոստովանելով իր ազգակիցների մեղքը և ցույց տալով նրանց ապաշխարությունն ու խոնարհումը, ընդ որում, հուսալով միայն մեղքեր ներող Փրկչի ողորմությանը: Նա հավատով հենվում է Աստծո խոստումների վրա» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 583, 584): Այդ խոստումները, իհարկե, իրենց մեջ ներառում են Քրիստոսի արդարության հագուստը:

Պատկերացրե՛ք, թե դուք Աստծո առջև կանգնած եք ձեր սեփական «կեղտոտ հանդերձներով»: Ի՞նչ մեծ հույս է ներկայացված ձեզ, և ինչպե՞ս դուք կարող եք ոչ միայն հենվել այդ հույսի վրա, այլև սուրբ, բարեպաշտ կյանքով բացահայտել նրա իրական լինելը:

Չորեքշաբթի ***հունիսի 12***

Ոչ մարդկային ուժով

Կարդացե՛ք Զաքարիա 4-ը: Մարդկանց ի՞նչ հույս է առաջարկվում:_____

_____

Այս տեսիլքում Զաքարիան տեսնում է ճրագակալ և նրա մոտ՝ երկու ձիթենի, ինչը հիշեցնում է անապատում խորանի Սրբության բաժանմունքում գտնվող ճրագակալը (Ելից 25.31-40): Յոթ ճրագներ կան մեծ բաժակի շուրջը, որում պահվում է յուղը:

Յուղի առատ պաշարով բաժակը խորհրդանշում է Աստծո Հոգու միջոցով հեղվող Նրա զորության լիությունը: Յոթ ճրագները վառ լույս են արձակում՝ ծառայելով որպես ամեն տեսակի խավար ցրող Աստծո ներկայության խորհրդանիշ: Ինչպես առանց մարդկային միջամտության անմիջապես ձիթենիներից ճրագակալի գագաթին գտնվող բաժակի մեջ հոսող յուղը, այնպես էլ Աստծուց բխող զորությունն անփոփոխ է, բավարար, և մարդկային օգնության կարիք չունի:

Մարգարեին տրված տեսիլքի լուրն այն է, որ Երուսաղեմի տաճարը շուտով կվերականգնվի: Հենց Աստծո Հոգին, և ոչ թե պարզապես մարդկային ջանքերն են, որ երաշխավորում է աշխատանքի ավարտը: Այս համարձակ լուրը տրվել էր՝ չնայած այն փաստին, որ հանգամանքները, որոնց բախվել էին շինարարները, նրանց մեծ սարի նման էին թվում (համար 7):

Ինչ վերաբերում է ճրագակալին, ապա նրա խորհրդանիշը, ակներևաբար, փոխառված է սրբարանի ճրագակալից, թեև բովանդակում է իր ժամանակին համապատասխանող դասը: Երկու ձիթենիները (համար 12) կամ «երկու օծյալները» (համար 14) երկնային միջոցներ են, որոնց օգնությամբ Աստծո ծառայությանը լիովին նվիրված մարդիկ օժտվում են Սուրբ Հոգով: «Երկու օծյալների առաքելությունն է՝ լույս և ուժ հաղորդել Աստծո ժողովրդին» (Է. Ուայթ, Վկայություններ քարոզիչների համար, 510, տե՛ս ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հտ. 4, 1095):

Աշխարհիկ չափանիշներով՝ Զորաբաբելի դրությունը ոչ մի կերպ չէր կարող հավասարվել նրա նախնիների՝ Դավթի և Սողոմոնի հզորությանը: Մարդկային տեսակետից շինարարներին մատչելի բոլոր ջանքերն ու ռեսուրսները բավական չէին: Բայց Աստծո Խոսքը պնդում է, որ թագավորը չի փրկվի զորքի բազմությամբ, իսկ հսկան՝ իր մեծ ուժով (Սաղմոս 33.16): Այս խոսքերով առաջնորդներին ասված է, որ միայն այն ժամանակ, երբ ղեկավարում է Հոգին, ծառայության ամեն մի տարրը կարող է փառաբանել Աստծուն:

Այս մարգարեական հատվածում քրիստոնյաների համար մի կարևոր սկզբունք է շարադրված, որ նրանք պետք է հիշեն. Աստված կարող է կանչել մեզ՝ կատարելու դժվարին խնդիրներ, բայց առաջադրված նպատակին կարելի է հասնել միայն Սուրբ Հոգու ազդեցության միջոցով (տե՛ս Փիլիպեցիս 2.13,4.13): Սուրբ Հոգու միջոցով Աստված այսօր, ինչպես և այն ժամանակ, ուժ է տալիս այդ աշխատանքը կատարելու համար: Դա կատարվում է ոչ թե մարդու հզորությամբ կամ ուժով, այլ այն բանի շնորհիվ, որ Տերն աշխատում է Իրեն ծառայելու պատրաստ մարդկանց միջոցով:

Ուշադիր կարդացեք Զաքարիա 4.6-ը: Ինչո՞ւ է այդքան կարևոր Աստծուց մեր կախվածությունը միշտ գիտակցել: Ի՞նչ կարող է տեղի ունենալ, եթե մենք մոռանանք, որ այն ամենը, ինչ ունենք և կարող ենք ունենալ, բխում է միայն Տիրոջից և մեր մեջ գործող Նրա զորությունից:

Հինգշաբթի *հունիսի 13*

Բացի ծոմից

Զաքարիա մարգարեի ծառայության երկրորդ տարում Բեթելից Երուսաղեմ պատվիրակություն ժամանեց, որպեսզի հարց առաջադրի քահանաներին և մարգարեներին (տե՛ս Զաքարիա 7.1-3): Երբ ժողովուրդը գերության մեջ էր Բաբելոնում, նրանք ծոմ էին պահում հինգերորդ ամսում՝ ողբալով տաճարի ավերումը (Դ Թագավորաց 25.8,9): Այդ ծոմը հավելյալ էր այն ծոմերի համեմատությամբ, որոնք պահվում էին չորրորդ, յոթերորդ և տասներորդ ամիսներին (Զաքարիա 8.19): Չորրորդ ամսում հիշատակվում էր Երուսաղեմի պարսպի ավերումը (Երեմիա 39.2): Յոթերորդ ամսվա ծոմը՝ Քավության օրը, միակ ծոմի օրն էր, որ Աստված Մովսեսի միջոցով հրամայել էր պահել (տե՛ս Ղևտացոց 16): Իսկ տասներորդ ամսում ժողովուրդը սգում էր Երուսաղեմի պաշարումը (Երեմիա 39.1): Քանի որ այժմ գերությունն ավարտված էր, իսկ տաճարի վերականգնումը՝ գրեթե վերջացած, մարդիկ ցանկանում էին իմանալ, թե առաջվա նման անհրաժե՞շտ է ծոմ պահել հինգերորդ ամսում:

Կարդացե՛ք, թե նրանց ինչ պատասխանեց Տերը (Զաքարիա 7.8-14): Այդ բառերն ինչպե՞ս կարող են կիրառվել մեր վերաբերյալ: _

_____

_____

_____

_____

Աստված Զաքարիայի միջոցով հետևյալ պատասխանն է տալիս. նախ, անհրաժեշտ է, որ Աստծո ժողովուրդը հիշի անցյալը, որպեսզի չկրկնի այն: Տերը նրանց նախնիներին զգուշացնում էր, որ նրանք պետք է ապրեն Իրեն հնազանդվելով և վստահելով: Գերությունը պատիժ դարձավ նրանց համառ անհնազանդության համար: Այդ պատճառով ժողովրդին կոչ է արվում սովորել անցյալի սխալներից: Երկրորդ, մարդկանց քաղցը Աստծուն բավականություն չի բերի: Երբ նրանք ծոմ են պահում և խոնարհվում Նրա առջև, նրանց գործերում պետք է դրսևորվեն

ապաշխարությունն ու հնազանդությունը: Ծոմ պահել՝ սեփական անձի հանդեպ խղճահարությամբ լցվելու համար՝ ժամանակի և ջանքերի դատարկ վատնում է: Ծոմը, բացի մնացյալից, պետք է իրենից յուրօրինակ մահ ներկայացնի սեփական «ես»-ի համար, որպեսզի, մի կողմ դնելով եսասիրությունը, ծառայենք ուրիշների կարիքներին: «Ճշմարիտ ծոմի և աղոթքի ոգին այն ոգին է, որը բանականությունը, սիրտն ու կամքը ենթարկում է Աստծուն» (Է. Ուայթ, Counsels on Diet and Foods, 189):

Մենք ինչպե՞ս կարող ենք ծոմն ու աղոթքը դարձնել կրոնական կյանքի գործնական բաղադրիչներ: Ձեր պատասխաններով կիսվե՛ք շաբաթ օրը:

Ուրբաթ *հունիսի 14*

Հետագա ուսումնասիրության համար

«Սատանան գիտի, որ բոլոր խնդրողներն Աստծուց ներում և ողորմություն են ստանում և նրանց հիասթափեցնելու համար հիշեցնում է իրենց մեղքերը: Նա մշտապես պատրվակ է որոնում՝ մեղադրելու նրանց, ովքեր ձգտում են հնազանդվել Աստծուն: Անգամ նրանց լավագույն, Աստծո համար ընդունելի ծառայությունը նա ձգտում է ներկայացնել աղավաղված լույսի ներքո: Անհամար, ամենախորամանկ և դաժան որոգայթների միջոցով նա ձգտում է հասնել նրանց դատապարտմանը:

Մարդն ինքը անզոր է դիմակայել այդ թշնամու մեղադրանքներին: Մեղքից կեղտոտված հագուստով, իր մեղքը խոստովանելով՝ նա կանգնում է Աստծո առջև: Բայց Հիսուսը՝ մեր Բարեխոսը, զորավոր բարեխոսությամբ է հանդես գալիս ի պաշտպանություն նրանց, ովքեր, ապաշխարելով ու հավատալով, իրենց հոգիների պահպանությունը հանձնում են նրան: Նա պաշտպանում է նրանց գործը և, օգտագործելով ամենաուժեղ փաստարկը՝ Գողգոթան, հաղթում է մեղադրողին: Աստծո օրենքին Նրա կատարյալ հնազանդությունը Նրան գերագույն իշխանություն է տվել երկնքում ու երկրի վրա, և Նա Իր Հորից ողորմություն և հաշտություն է խնդրում մեղավոր մարդկության համար: Իր ժողովրդի մեղադրողին Նա հայտարարում է. «Թո՛ղ Տերն արգելի քեզ, սատանա: Սա Իմ արյամբ ձեռք բերվածն է, հրդեհից հանված խանձողը»: Եվ հավատով բոլոր Իրեն հուսացածներին՝ Նա տալիս է հավաստիացում. «Տե՛ս, ես քո վրայից վերցրեցի քո անօրենությունը և քեզ պատվական զգեստներ եմ հագցնում» (Զաքարիա 3.4)» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 586, 587):

Հարցեր քննարկման համար

1. Կարդացե՛ք է. Ուայթից վերը բերված մեջբերումը: Նա ինչպե՞ս է օգնում մեզ՝ հասկանալ միայն հավատով արդարացման մասին մեծ ճշմարտությունը: Մենք ինչպե՞ս կարող ենք մխիթարություն և հույս քաղել այդ խոսքերից՝ մեր սխալների և թերությունների պատճառով անձնական ուժեղ հիասթափության պահերին: Մենք ինչպե՞ս կարող ենք այդ հրաշալի ճշմարտությունը դարձնել զորության աղբյուր, որն օգնում է մեզ մեծ հիասթափության պահերին չհեռանալ Տիրոջից՝ սեփական ոչնչության զգացողության պատճառով: Եվ ավելին, մենք ինչպե՞ս կարող ենք այդ հրաշալի ճշմարտությունը դարձնել Աստծուն սիրելու և Նրա բոլոր պատվիրանները պահելու մեր վճռականության աղբյուր:
2. Վերադարձե՛ք հինգշաբթի օրվա դասի վերջին հարցին: Ի՞նչ սկզբունքային վտանգներ կան թաքնված այն բանի մեջ, որ մենք երբեմն մեր կրոնը վերածում ենք «սոցիալական ծառայության» և ոչինչ ավելի: Մենք ինչպե՞ս կարող ենք ճիշտ հավասարակշռություն պահպանել:
3. Որքան էլ բարդ լինեն Զաքարիա մարգարեի գրքի որոշ մասերը (իսկ դրա որոշ մասերն իսկապես բարդ են), քրիստոնեական կյանքի վերաբերյալ ի՞նչ գործնական դասեր կարող եք քաղել այս դասից:

ԵՐԿՆՔԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՊԱՐԳԵՎԸ

(ԶԱՔԱՐԻԱ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԸ)

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Զաքարիա 8, Զաքարիա 9.9, 12.1-10, 13.7-9, 14, Մատթեոս 21.9, Հովհաննես 19.37:

Հիշելու համարը.

«Եվ այն օրը նրանց Տեր Աստվածը պիտի փրկի նրանց Իր ժողովրդի հոտի պես, որովհետև իբր թագի քարեր պիտի պսպղան նրա երկրի վրա» (Զաքարիա 9.16):

Հիմնական միտքը.

Զաքարիա մարգարեն ունի մի քանի հրաշալի մեսիական մարգարեություններ, որոնք մատնացույց են անում Հիսուսին և հաստատում Նրա հանդեպ մեր հավատը:

Աստվածաշնչյան լուրի կենտրոնում է երբևէ մարդկանց պատմված ամենասքանչելի պատմությունը Արարիչ Աստծո մասին, ով ի դեմս Իր որդու թողել էր երկնքի փառքը, որպեսզի մարդկությանը փրկրի մեղքից ու մահից: Զաքարիա մարգարեի գրքի երկրորդ կեսում մենք մի քանի *մեսիական մարգարեություններ*՝ հինկտակարանյան մարգարեական խոստումներ ենք գտնում Հիսուսի՝ Նրա մասին, ով դա կատարեց հանուն մեզ:

Այս առանձնահատուկ խոստումները սկզբում տրվել էին վտանգավոր ժամանակներում ապրող Աստծո ժողովրդին, երբ իր ծառայությունն էր կատարում Զաքարիա մարգարեն: Դրանք օգնում էին ժողովրդին տեսադաշտից չկորցնելու փրկագնման մասին խոստումը: Թեև ոչ մի դեպքում չի կարելի անտեսել այդ մարգարեությունների նախնական համատեքստը,, դրանց կարևորությունը չի սահմանափակվում անցյալում դրանց իրականացմամբ: Այդ պատճառով մենք կդիտարկենք, թե ինչպես դրանք կատարվեցին Հիսուսում, կատարվեցին համընդհանուր, ոչ թե տեղային նշանակությամբ, քանի որ այդ խոստումներն առնչություն ունեն աշխարհի, և ոչ միայն հին Իսրայելի ու Հուդայի վերջնական ճակատագրի հետ:

«Հրեայի քղանցքը» (Զաքարիա 8.23)

Սկսած 8-րդ գլխից՝ Զաքարիա մարգարեի գրքում արմատական շրջադարձ է տեղի ունենում: Տիրոջ ուղարկած լուրերի շարքը խոսում են աշխարհի ապագայի և դրանց մեջ Աստծո ժողովրդի դերի մասին: Այս գլուխներից որոշ հատվածներ հեշտ չէ հասկանալ, բայց վերջնական ապագան, անկասկած, ներկայացված է դրական լույսի ներքո:

Կարդացե՛ք Զաքարիա 8-ը: Ի՞նչ սկզբունքներ կարող եք քաղել այդ գլխից, որոնք կարևոր են մեզ՝ Յոթերորդ օրվա ադվենտիստներիս համար: Աստծո ո՞ր կոչն է այստեղ հնչում մեզ համար: ____

_____

_____

Աստծո ծրագիրն այն էր, որ Երուսաղեմը կրկին դառնար անվտանգ վայր, ուր տարեց մարդիկ նստելու են խաղացող երեխաներով լի փողոցներում (Զաքարիա 8.4,5): Գերությունից առաջ մի ժամանակ քաղաքում բնակվող մարդկանց՝ երիտասարդների ու ծերերի համար անվտանգ փողոցների մասին խոստումը հնչում էր որպես ինչ-որ անիրականանալի մի բան:

Հավերժ փոքր ու ենթակա ազգ մնալու փոխարեն՝ Իսրայելը պետք է մյուս ազգերին իր մոտ քաշող մագնիս դառնար, որպեսզի նրանք էլ կարողանային երկրպագել Տիրոջը՝ ողջ երկրի Թագավորին (Զաքարիա 14.9): «Ամեն լեզուներից» արտահայտության օգտագործումը Զաքարիա 8.23-ում ցույց է տալիս, որ մարգարեության մեջ ցույց է տրված համաշխարհային շարժումը:

Եսայիայի (Եսայիա 2) և նրա ժամանակակից Միքիայի (Միքիա 4) նման Զաքարիային նույնպես ցույց տրվեց, որ վրա կհասնի այն օրը, երբ շատ քաղաքներից բազմաթիվ մարդիկ կգան Երուսաղեմ՝ աղոթելու և Տիրոջը որոնելու համար: Սիոնում Աստծո ներկայությունը կընդունեն բոլորը, այնպես, ինչպես և Իրեն երկրպագողների վրա հեղվող Նրա օրհնությունները:

Ավետարանը պատմում է, որ այդ մեսիական խոստումները կատարվեցին Հիսուս Քրիստոսի ծառայության մեջ: Օրինակ, Հիսուսն ասել է, որ երբ Ինքը համբարձվի երկրից, բոլորին կտանի Իր մոտ (Հովհաննես 12.32):

Քրիստոսի եկեղեցին, որն անվանված է նաև Աստծո Իսրայել (Գաղատացիս 6.16), մեր ժամանակներում արժանացել է այդ առա-

քելությանը մասնակցելուն: Մենք պետք է փրկության լույսը տանենք մինչև երկրի ծայրերը: Այդպես Աստծո ժողովուրդը կարող է մեծ օրհնություն դառնալ ողջ աշխարհի համար:

Առանձնահատուկ ուշադրություն դարձրեք Զաքարիա 8.16,17-ին: Այսօր, երբ մեր եկեղեցին ձգտում է վերածննդի ու բարենորոգման, մենք ինչպե՞ս կարող ենք սովորել խուսափել այն ամենից, ինչ Աստված ատում է:

Երկուշաբթի ***հունիսի 17***

Աշխարհի թագավորը

Կարդացե՛ք Զաքարիա 9.9-ը: Նոր Կտակարանն ինչպե՞ս է այս տեքստը կապում Հիսուսի հետ: Տե՛ս Մատթեոս 21.7-9, Մարկոս 11.7-10, Ղուկաս 19.35-38, Հովհաննես 12.13-15: _____

_____

_____

_____

Երուսաղեմ իր հաղթական մուտքի ժամանակ ապագա Թագավորը նստած էր ավանակի վրա: Աստվածաշնչում ցնծությունն ու ուրախ աղաղակները զուգակցվում են գլխավորապես Աստծուն որպես Թագավոր փառաբանելու հետ (Սաղմոս 47, 96, 98): Այդ խոնարհ Իշխանը կբերի արդարություն, փրկություն և հավիտենական խաղաղություն. Նրա տիրակալությունը կտարածվի մինչև երկրի ծայրերը:

Երբ Իր մահից մի քանի օր առաջ Հիսուսն ավանակի վրա հաղթականորեն մուտք գործեց Երուսաղեմ, բազում մարդիկ փառաբանում և ողջունում էին Նրան: Ոմանք ցնծում էին՝ հուսալով, թե Քրիստոսը կթոթափի Հռոմի իշխանությունն ու Երուսաղեմում կհաստատի Աստծո թագավորությունը: Բայց փոխանակ Իրեն թույլ տար լինելու Իսրայելի թագավոր՝ Հիսուսը մահացավ խաչի վրա, իսկ հետո հարություն առավ մեռելներից: Իհարկե, Նա հիասթափեցրեց Իր հետևորդներից շատերին, ովքեր առավել ռազմաշունչ առաջնորդի էին սպասում: Սակայն նրանք չգիտեին, որ իրենց սպասումները համեմատության ոչ մի եզր չունեին այն բանի հետ, ինչ իրենք ստացան Հիսուսի մահվան շնորհիվ:

«Երուսաղեմ մուտք գործելով՝ Քրիստոսը հետևում էր հրեական թագավորների սովորությանը: Ինչպես և արժանի էր Իսրայելի թագավորին՝ Նա մայրաքաղաք մտավ ավանակի վրա նստած: Մարգարեները կանխասել էին, որ Մեսիան հենց այդպես կգա Իր թագավորություն: Եվ

հենց որ Նա նստեց ավանակին, բարձրաձայն, հանդիսավոր աղաղակը թնդացրեց օդը: Մարդիկ ողջունում էին Հիսուսին՝ որպես Մեսիայի, որպես իրենց Թագավորի: Այժմ Հիսուսն ընդունում էր այն երկրպագությունը, որը նախկինում երբեք թույլ չէր տվել, և աշակերտները դա ընկալեցին որպես ապացույց, որ իրենց հույսերը կիրականանան և իրենք կտեսնեն Հիսուսին արքայական գահի վրա: Ժողովուրդը համոզված էր, որ մոտեցել է իր ազատագրման ժամը» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 570):

Շատ է գրվել այն մասին, թե ինչպես էր ժողովուրդը խանդավառությամբ ողջունում Հիսուսին, երբ ամեն բան լավ էր. սակայն երբ իրադարձությունները դադարեցին համապատասխանել իրենց սպասումներին, այդ նույն ամբոխից շատերը երես թեքեցին Նրանից (ոմանք անգամ բացահայտորեն դեմ դուրս եկան Նրան): Մեզ այդ իրադարձություններն ի՞նչ կարող են սովորեցնել կեղծ սպասումների վտանգի վերաբերյալ: Օրինակ, դուք դիմում եք ապաքինման կամ մեղքի հանդեպ հաղթանակի մասին խոստումներին և չեք տեսնում սպասվող արդյունքը: Մենք ինչպե՞ս կարող ենք այնպիսի հավատ զարգացնել, որը չի սասանվի անգամ այն դեպքում, երբ չեն արդարանում մեր հույսերը, սպասումները կամ աղոթքները:

Երեքշաբթի ***հունիսի 18***

Նա, «ում խոցեցին»

Զաքարիա 12-14-ում ցույց է տրված, թե ինչ տեղի կունենար, եթե Իսրայելը հավատարիմ մնար Աստծուն: Նախ, Տերը կատարյալ հաղթանակ կպարգևեր չարի ուժերի և թշնամական ազգերի նկատմամբ, ովքեր փորձում էին ընդդիմանալ փրկության ծրագրին (Զաքարիա 12.1-9): Թեև Երուսաղեմը պետք է դառնար դեպի այդ հաղթանակը տանող Աստծո գործիքը, բուն հաղթանակը Տիրոջ միջամտության արդյունքում պետք է լիներ: Թշնամին լիովին կպարտվեր:

Զաքարիա 12.10-ում դիտվում է անցում ֆիզիկական ազատագրումից `դեպի Աստծո հավատարիմ ժողովրդի հոգևոր ազատագրումը, ինչը կարող էր տեղի ունենալ, եթե Իսրայելը հավատարիմ լիներ Աստծուն: Հաղթանակին կհաջորդեր Աստծո ժողովրդի կողմից իր Տիրոջն ընդունելը: Աստծո շնորհի և ողորմության Հոգին կհեղվեր առաջնորդների ու ժողովրդի վրա: Հոգու այդ հանդիմանող աշխատանքը կհանգեցներ

խորը ապաշխարության և հոգևոր վերածննդի: Սա հենց այն է, ինչին ձգտում է մեր եկեղեցին:

Երբ Աստված թափում է Իր Հոգին, Նրա ժողովուրդը նայում է Նրան, ում իրենք խոցեցին, և ողբում է Նրա համար այնպես, ինչպես ողբում են միակ որդու համար: Եբրայերեն բնագրի բառը, որը թարգմանված է «խոցել», միշտ փոխանցում է ֆիզիկական բռնության որոշակի ձև, ինչը սովորաբար հանգեցնում է մահվան (Թվոց 25.8, Ա Թագավորաց 31.4): Մարդկային ցավի տանջալի լինելը աճում է այն բանի գիտակցումից, որ հենց իրենց սեփական մեղքերը մահ բերեցին Հիսուս Քրիստոսին:

Կարդացե՛ք Զաքարիա 12.10-ը: Ինչպե՞ս է Հովհաննես առաքյալը այս հատվածը կապում Քրիստոսի խաչելության և Նրա երկրորդ գալստյան հետ: Տե՛ս Հովհաննես 19.37, Հայտնություն 1.7: _____

_____

_____

_____

Հետաքրքիր է նշել, որ անգամ ավանդական հրեական մեկնություններից մեկն է հաստատում այն կարծիքը, որ այս համարը մատնանշում է Մեսիայի փորձառությունը (հմմտ. Եսայիա 53-ի հետ):

«Գողգոթայի վրա տեղի ունեցած իրադարձությունները պետք է ամենախորը զգացմունքներ արթնացնեն: Միանգամայն տեղին և արդարացված կլինի, եթե այս թեման մեր մեջ առաջ բերի վերելք և ոգեշնչում: Մենք երբեք չենք կարող լիովին ըմբռնել և ընկալել այն փաստը, որ Քրիստոսը, ով Իրեն հավասարը չուներ բարոյական տեսանկյունից և բացարձակապես անմեղ էր, պետք է ճաշակեր այդքան տանջալից մահ և Իր վրա կրեր այս աշխարհի մեղքերի ողջ ծանրությունը» (Է. Ուայթ, Վկայություններ եկեղեցու համար, հտ. 2, 213): Դուք ինչպե՞ս կարող եք ավելի ու ավելի բարձր գնահատել Նրա մահն ու գիտակցել, թե ինչ նշանակություն այն ունի ձեզ համար:

Չորեքշաբթի ***հունիսի 19***

Բարի հովիվը

Դարեր շարունակ Աստվածաշնչի ընթերցողները՝ ինչպես հրեաները, այնպես էլ քրիստոնյաները, Զաքարիա մարգարեի գրքում գտնում են մի շարք հղումներ, որոնք մատնանշում են Մեսիային և մեսիական ժամանակը: Իհարկե, քրիստոնյաները հասկանում են, որ

այդ մարգարեությունները վերաբերում են Հիսուս Քրիստոսի կյանքին և ծառայությանը, փրկագնող ու միևնույն ժամանակ հեզ Թագավորին (Զաքարիա 9.9), «Ում խոցեցին» (Զաքարիա 12.10), Հովվին, ով զարկվեց (Զաքարիա 13.7):

Զաքարիա 13.7-9-ում մարգարեին ցույց տրվեց մի տեսարան, որում Տիրոջ դատաստանի սուրը դառնում է Հովվի դեմ: Նախորդ դեպքում մարգարեն տեսնում էր, թե ինչպես էր սուրն ուղղվել «փուչ հովվի» դեմ (Զաքարիա 11.17): Բայց այստեղ, այս հատվածում զարկվում է Բարի Հովիվը, և արդյունքում ոչխարները ցրվում են: Նրա մահը մեծ փորձություն է դառնում Աստծո ժողովրդի համար, որի ժամանակ ոմանք կործանվում են, բայց բոլոր հավատարիմները, ընդ որում մաքրվում են:

Կարդացե՛ք Մատթեոս 26.31-ը և Մարկոս 14.27-ը: Հիսուսն այդ մարգարեությունն ինչպե՞ս կիրառեց այն բանի վերաբերյալ, ինչ պետք է տեղի ունենար այն գիշեր: Ի տարբերություն մարդկային անհավատարմության՝ Աստծո հավատարմության վերաբերյալ ի՞նչ դաս մենք կարող ենք քաղել այն փաստից, որ աշակերտները փախչում էին՝ զգալով վերահաս աղետը (տե՛ս Մատթեոս 26.56, Մարկոս 14.50): _____

_____

_____

Աստծո կերպարը իբրև Հովիվ բազմիցս հանդիպում է Աստվածաշնչում՝ Ծննդոց գրքից (Ծննդոց 48.15) մինչև Հայտնություն գիրքը (Հայտնություն 7.17): Եզեկիելի միջոցով Աստված հանդիմանում էր Իր ժողովրդի անպատասխանատու հովիվներին և խոստանում որոնել կորած ոչխարներին ու հոգ տանել նրանց մասին: Այդ խոսքերն օգտագործելով Իր հանդեպ՝ Հիսուսն ասաց, որ Ինքը «Բարի Հովիվն» է, ով Իր կյանքն է դնում ոչխարների համար (Հովհաննես 10.11):

Խորհեցե՛ք այն ժամանակի մասին, երբ դուք անհավատարիմ եք եղել Տիրոջը: Չնայած դրան՝ Նա շարունակո՞ւմ է դրսևորել Իր ողորմությունն ու շնորհը ձեր հանդեպ: Ինչպիսի՞ն պետք է լինի ձեր պատասխանն այդ ողորմությանն ու շնորհին:

Հինգշաբթի ***հունիսի 20***

Ողջ աշխարհի Թագավորը

Կարդացե՛ք Զաքարիա 14-ը: Մենք ինչպե՞ս պետք է հասկանանք այդ գլխում ասվածը:

Զաքարիա մարգարեն իր գրքի վերջին գլխում նկարագրում է այն օրը, երբ բոլոր չապաշխարած ժողովուրդները կհավաքվեն Երուսաղեմի դեմ: Վերջին պահին Տերը կմիջամտի՝ ազատագրելով Իր ժողովրդին և Իր հավիտենական Թագավորությունը հաստատելով երկրի վրա: Այն բանից հետո, երբ Նրան ընդդիմացողները ոչնչացվեն, բոլոր ժողովուրդները կսկսեն երկրպագել միակ ճշմարիտ Աստծուն: Տերը թագավորելու է ողջ երկրի վրա: Նա կլինի միակ Տերը, և Նրա անունը կբարձրացվի բոլոր անուններից: «ԵՍ ԵՄ» մեծագույն անունն արտահայտում է, թե ով է Աստված: Թեև այդ իրադարձությունները պետք է կատարվեին, եթե Իսրայելը հավատարիմ մնար, դրանք է՛լ ավելի մեծ մասշտաբներով կկատարվեն Աստծո ժողովրդի վերջին և համատարած ազատագրման ժամանակ:

Երբ Զաքարիան հռչակում էր Մեսիայի գալուստը, նա բաժանման գիծ չէր անցկացնում առաջին և երկրորդ գալստյան միջև: Նույն կերպ, ինչպես և մյուս մարգարեները, նա Մեսիայի Թագավորությունը դիտարկում էր որպես ապագայի փառավոր մի իրադարձություն: Մենք այժմ կարող ենք այդ երկու իրադարձությունները տարանջատել միայն Քրիստոսի առաջին գալուստի լույսի ներքո: Մենք երախտագիտություն ենք զգում այն ամենի համար, ինչ Նա Գողգոթայի վրա կատարել է հանուն մեր փրկության: Եվ այսպես, մենք կարող ենք ուրախությամբ նայել ապագային՝ կանխաճաշակելով Աստծո հավիտենական Թագավորությունը (տե՛ս Դանիել 7.14-ը):

Այս մարգարեական գրքի եզրափակիչ հատվածը նկարագրում է Երուսաղեմը իր փառքով՝ մեծարված, ապահով: Բոլոր ժողովուրդներից փրկվածները կմասնակցեն հավիտենական Թագավորի երկրպագությանը: Ողջ Երուսաղեմը պետք լցված կլինի տաճարի սրբությամբ:

Երբ այդ փառավոր խոստումները ուսումնասիրվում են իրենց փոխադարձ կապի մեջ և ողջ աստվածաշնչյան ուսմունքի լույսի ներքո, գալիս ենք այն եզրակացության, որ այդ մարգարեությունների վերջնական կատարումը տեղի է ունենալու *Նոր Երուսաղեմում*, որտեղ Աստծո զավակները երկրի բոլոր ծայրերից կհավաքվեն մեկտեղ և հավիտյան կերկրպագեն Նրան: Այդ ամենը տեղի կունենա միայն Հիսուսի երկրորդ գալուստից հետո: Նրանց անվերջ փառաբանությունների թեման կլինի Աստծո փրկությունը, Նրա բարությունն ու զորությունը՝ ինչպես ավարտվում է նշանավոր Ծովի երգը՝ «Եհովան պիտի թագավորի հավիտյանս հավիտենից» (Ելից 15.18): Հին մարգարեներն ու անցյալի

հավատարիմ մարդիկ միասին անհամբերությամբ սպասում էին այդ մեծագույն եզրափակիչ իրադարձությանը:

Մտորե՛ք մեզ խոստացված վերջնական ազատագրման, նոր երկնքի ու նոր երկրի մասին, որտեղ չեն լինի մեղք, մահ, տառապանքներ ու կորուստներ: Ինչի՞ հիման վրա դուք այդպիսի կուներնաք այդ հույս ունեք և ինչպե՞ս կարող եք պահպանել այն, հատկապես՝ դժվարին ժամանակներում, երբ ցավ ու վախ եք զգում:

Ուրբաթ ***հունիսի 21***

Հեպագա ուսումնասիրության համար

«Չարի ուժերի դեմ Աստծո եկեղեցու երկարատև պայքարի ամենամռայլ օրերին նրան տրվեցին Եհովայի հավիտենական մտադրությունների վերաբերյալ հայտնությունները: Նրա ժողովրդին թույլ տրվեց ներկայի փորձությունների հետևում տեսնել փառավոր ապագան՝ այն ժամանակը, երբ պայքարը կավարտվի և փրկագնվածները կտիրանան ավետյաց երկրին: Ապագա փառքի այդ տեսիլքները, Աստծո ձեռքով նկարված պատկերները պետք է Նրա եկեղեցու համար առանձնապես թանկ լինեն այսօր, երբ արագորեն իր վախճանին է մոտենում դարերի պայքարը, և խոստացված օրհնությունները շուտով կկատարվեն ողջ լիությամբ…

Փրկված ժողովուրդները այլ օրենք չեն ճանաչելու, բացի երկնքի օրենքից: Բոլորը կսկսեն ապրել միասնական երջանիկ ընտանիքով՝ փառաբանության և շնորհակալության հագուստներ հագած: Նայելով այդ պատկերին՝ բոլոր առավոտյան աստղերը երգելու են, Աստծո զավակները ցնծալու են ուրախությունից, այն ժամանակ, երբ Աստված և Քրիստոսը միասին կասեն. «Այնտեղ այլևս մեղք և մահ չի լինի»» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 722, 732, 733):

Հարցեր քննարկման համար

1. Ինչպես էլ մարդիկ ձգտեն բարելավել իրավիճակը աշխարհում, այն միայն ավելի ու ավելի է վատթարանում: Համաձայն Աստվածաշնչի ուսմունքի՝ մենք ապրելու ենք դրախտում, որին այդքան ձգտում էինք, միայն այն ժամանակ, երբ Քրիստոսը կվերադառնա և ամեն բան նորից կանի: Թեև մենք գիտենք այդ ճշմարտությունը, ինչո՞ւ պետք է

առաջվա նման անենք մեզանից կախված ամեն բան՝ այս աշխարհին մխթարություն, ապաքինում և քաջալերություն բերելու համար:

2. Հինգշաբթի օրվա դասում նշվում է, որ Հիսուսի գալստյան մասին խոսելիս շատ հինկտակարանյան մարգարեություններ ասես նկատի ունեն մեկ, և ոչ թե երկու իրադարձություն: Սա մեզ, փրկության ծրագրի եզրույթներով արտահայտած, ի՞նչ է ասում առաջին և երկրորդ գալստյան սերտ կապի մասին: Ինչո՞ւ է դա այդպես: Ինչո՞ւ առանց Առաջին գալստյան չէր լինի երկրորդը, իսկ առանց երկրորդ գալստյան իմաստ չէր ունենա առաջինը:
3. Ձգտելով մեր մեջ վերածննդի ու բարեփոխումների՝ մենք ի՞նչ դասեր կարող ենք քաղել Զաքարիա մարգարեի գրքից, որոնք կօգնեն մեզ՝ յուրաքանչյուրիս առանձին և ողջ եկեղեցուն՝ նախապատրաստվել Սուրբ Հոգու հեղմանը՝ վերածննդի ու բարենորոգման կենսականորեն անհրաժեշտ պայմանին, որի կարիքը մենք այդքան լրջորեն ունենք:

ՈՐ ՄԵՆՔ ՉՄՈՌԱՆԱՆՔ

(ՄԱՂԱՔԻԱ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԸ)

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Մաղաքիա 1, Ղևտացոց 1.1-3, Մաղաքիա 2, Եփեսացիս 5.21-33, Մաղաքիա 3, Ելից 32.32, Մաղաքիա 4:

Հիշելու համարը.

«Որովհետև արեգակի ելքից մինչև նրա մուտքը մեծ է իմ անունը ազգերի մեջ, և ամեն տեղ Իմ անվանը խունկ և սուրբ ընծա է մատուցվում, որովհետև մեծ է Իմ անունը ազգերի մեջ. ասում է Զորաց Տերը» (Մաղաքիա 1.11):

Հիմնական միտքը.

Մաղաքիան մեզ ցույց է տալիս Իր ժողովրդին տրված Աստծո հանձնարարության մասշտաբները, ինչպես նաև մատնանշում է ժողովրդի քահանայական պարտականությունները:

Մաղաքիա անունը նշանակում է «Իմ լրաբեր»: Մենք ոչինչ չգիտենք նրա մասին՝ բացառությամբ նրա, ինչ կարող ենք քաղել նրա համառոտ գրքից, որով ավարտվում է Հին կտակարանի այն մասը, որն անվանվում է Փոքր մարգարեներ կամ Տասներկուսի գիրք: Այս մարգարեական գիրքը Հին կտակարանի վերջին գիրքն է:

Մաղաքիա մագարեի գրքի գլխավոր լուրը կայանում է հետևյալում. սերը, որ Աստված հայտնել էր Իր ժողովրդի հանդեպ՝ նրա ողջ պատմության ընթացքում, մարդկանց վրա Նրա առջև որոշակի պատասխանատվություն է դնում: Տերը ընտրյալ ժողովրդից և նրա առաջնորդներից Իր պատվիրաններին հնազանդություն էր սպասում: Թեև բացահայտ կռապաշտություն Մաղաքիայի ժամանակներում, ակներևաբար, չկար (գիրքն, ըստ երևույթին, գրվել է բաբելոնյան գերությունից վերադարձած հրեաների համար), մարդիկ չէին ապրում ուխտի պահանջներին համապատասխան: Ձևականորեն հետևելով կրոնական հրահանգներին՝ նրանք չունեին անկեղծ հավատ:

Եկե՛ք որպես եկեղեցի ուշադրություն դարձնենք այստեղ տրված դասերին:

Մեծ է Տերը

Կարդացե՛ք Մաղաքիա 1-ը: Ի՞նչ խնդիր է վեր հանում մարգարեն: Մենք այսօր ինչպե՞ս կարող ենք մեղավոր լինել այն մեղքի մեջ, որը հանդիմանում էր մարգարեն: _____

_____

_____

Մաղաքիան Իր ժողովրդի հանդեպ Աստծո սերը հակադրում է քահանաների վերաբերմունքին, ում Նա մեղադրում է այն բանում, որ նրանք պատվազրկում են Իր սուրբ անունը: Տաճարում կատարելով իրենց պարտականությունները՝ Ահարոնի այս սերունդները կաղ, կույր և հիվանդ կենդանիներին ընդունում էին Տիրոջ զոհաբերությունների համար: Այդ պատճառով մարդիկ թյուր կարծիք էին կազմում, թե զոհերը կարևոր չեն: Սակայն Աստված Ահարոնին և նրա որդիներին անապատում պատվիրել էր զոհաբերությունների համար ընդունել միայն ֆիզիկապես առողջ, արատ չունեցող կենդանիներին (տե՛ս Ղևտացոց 1.1-3, 22.19):

Այնուհետև մարգարեն երեք կարևոր պատճառներ է թվարկում, թե ինչու է Աստված արժանի պաշտամունքի և երկյուղածության: Նախ, Նա նրանց Հայրն է: Ճիշտ այնպես, ինչպես երեխաները պետք է հարգեն իրենց ծնողներին, մարդիկ պետք է պատվեն իրենց երկնային Հորը: Երկրորդ, Աստված նրանց Տերն ու Տիրակալն է: Ճիշտ այնպես, ինչպես ծառաները հնազանդվում են իրենց տերերին, Աստծո ժողովուրդը պետք է հնազանդվի Նրան: Երրորդ, Տերը մեծագույն Արքան է, իսկ չէ՞ որ անգամ երկրային թագավորը իր հպատակից վնասված կամ հիվանդ կենդանին չէր ընդունի որպես ընծա: Այդ պատճառով մարգարեն հարց է տալիս, թե ինչու են մարդիկ այդպիսի զոհեր մատուցում Արքաների Արքային, Նրան, ով իշխում է ողջ տիեզերքին:

Այն, որ բոլոր այդ զոհերը մատնացույց էին անում Հիսուսին՝ Աստծո անարատ Որդուն, նրանց արարքներն է՛լ ավելի արգահատելի էին դարձնում Աստծո աչքում (Հովհաննես 1.29, Ա Պետրոս 1.18,19): Կենդանիները պետք է լինեին առանց արատի, որովհետև Հիսուսը՝ մեր մեղքերի համար կատարյալ Զոհը, եղել է անթերի:

«Աստծուն մեծարելու և փառաբանելու համար Նրա սիրելի Որդին՝ Բարեխոսը, Փոխարինող Զոհը, երկիր ուղարկվեց և իջավ գերեզման: Նոր դամբարանը Նրան ամփոփեց իր քարե պատերի մեջ: Եթե նույնիսկ

մեն-միակ մի մեղք արատավորեր նրա անբիծ բնավորությունը, քարը երբեք չէր հեռացվի Նրա քարե դամբարան տանող մուտքից, և մեղքով ծանրաբեռնված աշխարհը կկործանվեր» (Է. Ուայթ, Ձեռագրեր, հտ. 10, 385): Արժե՞ զարմանալ, որ Հիսուսին մատնանշող զոհերը պետք է կատարյալ լինեին:

Երկուշաբթի ***հունիսի 24***

Սիրելով և հարգելով ուրիշներին

Մաղաքիա մարգարեի գրքի էջերից հնչող Աստծո ձայնը Իր զավակներին կանչող սիրող Հոր ձայն է: Երբ ժողովրդի մեջ հարցեր ու բողոքներ են ծագում, Նա պատրաստ է նրանց հետ երկխոսության մեջ մտնել: Այն հարցերի մեծ մասը, որոնց շուրջ Աստված զրուցում է Իր ժողովրդի հետ, վերաբերում են մի քանի հիմնական դրույթների:

Կարդացե՛ք Մաղաքիա 2-ը: Թեև այստեղ խոսվում է մի շարք խնդիրների մասին, ինչի՞ համար է Աստված առանձնապես հանդիմանում ժողովրդին: Տե՛ս Մաղաքիա 2.13-16: _____

_____

_____

Բոլոր հրեաները, երկրպագելով Աստծուն, թեև Նրան ընդունում էին որպես իրենց Հայր և Արարիչ, նրանք բոլորը չէ, որ ապրում էին համաձայն Տիրոջ կամքին: Հավատարմության և միմյանց նվիրվածության պակասը պատկերելու համար Մաղաքիան օրինակ է բերում ամուսնությունը: Համաձայն Աստվածաշնչի՝ ամուսնությունը Աստծո կողմից սահմանված սրբազան հաստատություն է: Հրեա ժողովուրդը նախազգուշացված էր, որ իրենք չպետք է ամուսնություններ կնքեն հեթանոսների հետ, որովհետև արդյունքում նրանք զոհաբերում էին Տիրոջ առջև իրենց ունեցած պարտավորությունները և ընկնում էին կռապաշտության մեջ (տե՛ս Հեսու 23.12,13):

Աստված ամուսնությունը հիմնել է ողջ կյանքի համար: Սակայն Մաղաքիայի ժամանակներում շատ տղամարդիկ խախտում էին ամուսնական երդումը, որ տալիս էին մի ժամանակ, ինչպես ասում է մարգարեն, իրենց «երիտասարդության կնոջը»: Տեսնելով, թե ինչպես են ծերանում իրենց կանայք, ամուսիններն ամուսնալուծվում էին և ամուսնանում երիտասարդ ու հրապուրիչ կանանց հետ: Այդ պատճառով Աստված ասում է, որ Ինքն ատում է ապահարզանը (Մաղաքիա 2.16): Այսպիսի խիստ արտահայտությունը խոսում է այն մասին, թե որքան

է լրջորեն է Աստված նայում ամուսնական պարտականություններին, որոնց մարդիկ հաճախ միանգամայն թեթևամտորեն են վերաբերվում: Ամուսնալուծության վերաբերյալ աստվածաշնչյան խիստ կանոնները ցույց են տալիս, թե որքան սուրբ է ամուսնությունը:

Քանի որ ամուսնալուծությունն Իսրայելում իրավաբանական հիմքեր ուներ (Երկրորդ օրինաց 24.1-4), որոշ կանայք, առանց տատանվելու, խախտում էին իրենց ամուսնական խոստումները: Հինկտակարանյան ժամանակաշրջանի ավարտին մոտենալիս ամուսնալուծությունն, ըստ երևույթին, սովորական բան էր դարձել, որն ինչ-որ չափով հիշեցնում էր այն, ինչ շատ երկրներում տեղի է ունենում այսօր: Բայց Աստվածաշնչում ամուսնությունն անփոփոխ ներկայացված է որպես սուրբ ուխտ՝ կնքված Աստծո առջև (Ծննդոց 2.24, Եփեսացիս 5.21-33):

Կարդացե՛ք Մաղաքիա 2.17-ը: Ի՞նչ նախազգուշացում է հնչում այդ խոսքերում, հատկապես՝ այսօրվա դասի համատեքստում: Իսկ ընդհանուր իմաստո՞վ: Մեզ համար գոյություն ունի՞ վտանգ՝ ունենալ նույնպիսի դիրքորոշում, կարող է պատահել, անգամ ենթագիտակցական մակարդակով:

Երեքշաբթի ***հունիսի 25***

Տասանորդը գանձատանը

Կարդացե՛ք Մաղաքիա 3.1-10-ը: Այստեղ ինչի՞ մասին է ասում Աստված Իր ժողովրդին: Ի՞նչ առանձնահատուկ հարցեր են շոշափվում այս տեքստերում, և ինչո՞ւ են դրանք բոլորը շաղկապված միմյանց հետ: Այսինքն՝ այդ ամենն ինչպե՞ս է հարաբերակցվում իրար հետ: _____

_____

_____

_____

Այս համարներում Աստված կրկին հաստատում է Փոքր մարգարեների հիմնական լուրը. Իր սերը մնում է մշտական և անփոփոխ; 7-րդ համարում կրկին հնչում է Աստծո ձայնը. «Հե՛տ դարձեք դեպի ինձ, և ես էլ կդառնամ դեպի ձեզ»: Հետո ժողովուրդը հարցնում է. «Մենք ո՞ր հարցում հետ դառնանք»: Դա նույն հարցն է, ինչ և Միքիա 6.6-ում՝ Աստծուն զոհեր բերելու վերաբերյալ: Սակայն Մաղաքիա մարգարեի գրքում առանձնահատուկ պատասխան է տրվում և, որ բավական հետաքրքիր է, դա վերաբերում է տասանորդի հարցին:

Ժողովուրդը փաստացի մեղադրվում է Աստծուց գողանալու մեջ, քանի որ մարդիկ անհավատարիմ են գտնվել տասանորդը վերադարձնելու և ընծաների մեջ:

Տասանորդը՝ եկամուտների տասը տոկոսը վերադարձնելու սովորույթն Աստվածաշնչում ներկայացված է որպես հիշեցում այն մասին, որ ամեն բան պատկանում է Աստծուն, և այն ամենը, ինչ մարդիկ ունեն, բխում է Նրանից: Իսրայելում տասանորդն օգտագործվում էր տաճարում ծառայող ղևտացիներին պահելու համար: Համաձայն Մաղաքիայի՝ տասանորդի վերադարձն անտեսելը նույնն է, ինչ և Աստծուց գողանալը:

Մաղաքիա 3.10-ը Սուրբ Գրքի այն հազվադեպ համարներից մեկն է, որում Աստված մարդուն թույլ է տալիս փորձել Իրեն: Մերիբայի ջրերի մոտ հրեաները բազմիցս «փորձում էին» Աստծո համբերությունը, և դա առաջ էր բերում Նրա դժգոհությունը (Սաղմոս 95.8-11): Սակայն այստեղ Աստված Իսրայելին կոչ է անում՝ փորձել Իրեն: Նա ցանկանում է, որ մարդիկ տեսնեն, որ կարող են հիմնվել Նրա վրա այն հարցում, որը, տեքստի համաձայն, հոգևոր մեծ նշանակություն ունի:

Տասանորդ և ընծաներ մատուցելն ինչպե՞ս է հոգևորապես ամրապնդում ձեզ: Այլ խոսքերով, ինչո՞ւ կարելի է ասել, որ, խորամանկություն դրսևորելով տասանորդի վերադարձման հարցում, դուք խաբում եք ոչ միայն Աստծուն, այլև ինքներդ ձեզ:

Չորեքշաբթի ***հունիսի 26***

Հիշատակի գիրքը

Մաղաքիա 3.13-15-ում մարդիկ բողոքում են, որ Տերը չի արձագանքում ժողովրդի մեղքերին: Անօրեն ու անարդարացի վարվողները, ասում են նրանք, ապրում են երջանիկ, և այդ պատճառով շատերը հարցնում են, թե ինչու ծառայել Տիրոջը և ապրել արդար կյանքով, եթե չարիքը մնում է անպատիժ:

Կարդացե՛ք Մաղաքիա 3.14,15-ը: Ինչո՞ւ դժվար չէ հասկանալ այդ գանգատը: _____

_____

_____

Ի՞նչ է պատասխանում Տերը: _____

_____

Այս աշխարհում, որը լի է անարդարությամբ, շատերը հարց են տալիս, թե արդարադատությունը երբևէ կվերականգնվի՞: Սակայն այս

լուրը խոսում է այն մասին, որ Աստված գիտի ամեն բան, ինչ տեղի է ունենում, և կպարգևատրի Իրեն հավատարիմներին:

«Հիշատակի գիրք» արտահայտությունը հանդիպում է Սուրբ Գրքի միայն այս մասում: Հետևյալ համարներն ի՞նչ են ասում Աստծո գրքերի մասին, որոնցում գրի են առնվում մարդկանց անուններն ու արարքները: Ելից 32.32, Սաղմոս 139.16, Եսայիա 4.3, 65.6, Դանիել 7.10, 12.1, Հայտնություն 20.11-15: _____

_____

_____

_____

Էությունն այն է, որ Աստծուն հայտնի է ամեն բան: Նա ճանաչում է նրանց, որ Իրենն են (Բ Տիմոթեոս 2.19) և նրանց, ովքեր Իրենը չեն: Այն ամենը, ինչ մենք՝ որպես մեղավորներ, կարող ենք անել, Նրա արդարությանը, ներման և զորության վերաբերյալ Նրա խոստմանը հուսալն է: Եվ հետո, հուսալով Քրիստոսի արժանիքներին, մահանալ սեփական «ես»-ի համար և ապրել Նրա և շրջապատողների համար՝ իմանալով, որ մեր միակ հույսը Նրա շնորհի մեջ է: Եթե մենք հուսացած ենք ինքներս մեզ, անխուսափելիորեն կհիասթափվենք:

Հինգշաբթի ***հունիսի 27***

Արդարության արեգակը

Նախորդ դեպքում մարդիկ հարցնում էին. «Ո՞ւր է դատաստանի Աստվածը»: 4-րդ գլխի սկզբում հանդիսավոր խոստում է տրվում, որ կգա օրը, երբ Աստված դատաստան կտեսնի աշխարհի նկատմամբ: Արդյունքում հպարտները կոչնչացվեն ամբարիշտների հետ միասին՝ կրակի մեջ այրվող ծղոտի նման: Ինչպես Նոյի օրերում՝ ջուրն էր այդ միջոցը, Տիրոջ օրը կրակը կլինի ոչնչացման միջոցը:

Կարդացե՛ք Մաղաքիա 4-ը: Փրկվածների ու ոչնչացվողների միջև ի՞նչ հսկայական հակադրություն է այստեղ պատկերված: Տե՛ս նաև Երկրորդ օրինաց 30.19, Հովհաննես 3.16: _____

_____

_____

Այն դեպքում, երբ առաջին համարում նկարագրված է ամբարիշտների ճակատագիրը, երկրորդ համարն արդեն կենտրոնացած է ապագա օրհնությունների վրա, որոնք կստանան արդարները: «Ո՞ւր է դատաստանի Աստվածը» հարցին կրկին պատասխան է տրվում,

որը վստահեցնում է, որ կգա օրը, երբ կծագի արդարության արեգակը՝ ապաքինում բերելով իր ճառագայթներով: «Արդարության արեգակը» այլաբանություն է, որը բնորոշում է Քրիստոսին՝ որպես «աշխարհի լույսի» (Հովհաննես 8.12, տե՛ս Հովհաննես 1.4) և մեր արդարության Աղբյուր (տե՛ս Երեմիա 23.6, Ա Կորնթացիս 1.30, Բ Կորնթացիս 5.21): Նրա երկրորդ գալուստը նոր դարաշրջան կբացի փրկության պատմության մեջ, երբ չարիքը կոչնչացվի մեկընդմիշտ և հավիտյան, իսկ փրկվածները կվայելեն այն, ինչ իրենց համար կատարեց Քրիստոսը, և տիեզերքը կապրի անվտանգության մեջ:

Մաղաքիան իր գիրքն ավարտում է երկու խորհրդով, որոնք բնութագրում են աստվածաշնչյան հավատը: Առաջինը Մովսեսի միջոցով տրված Աստծո հայտնությունները՝ Աստվածաշնչի առաջին հինգ գրքերը, հիշելու այն կոչն է, որոնք Հին կտակարանի հիմքն են:

Երկրորդ խորհուրդը խոսում է Սուրբ Հոգով լցված Եղիայի մարգարեական դերի մասին. այս մարգարեն մարդկանց կոչ էր անում ապաշխարել և վերադառնալ Աստծուն: Թեև Հիսուսն Ինքը տեսնում էր այդ մարգարեության կատարումը Հովհաննես Մկրտչի առաքելության մեջ (Մատթեոս 11.13,14), մենք նույնպես հավատում ենք, որ այն ևս մեկ անգամ կկատարվի վերջին ժամանակներում, երբ Աստված կունենա մարդիկ, ովքեր աներկյուղ կերպով Նրա լուրը կհռչակեն աշխարհին: «Նրանք, ովքեր պետք է ճանապարհ պատրաստեն Քրիստոսի երկրորդ գալստյան համար, ներկայացված են հավատարիմ Եղիայի միջոցով՝ Հովհաննեսի նման, ով եկել էր Եղիայի հոգով՝ ճանապարհ նախապատրաստելու Քրիստոսի առաջին գալստյան համար» (Է. Ուայթ, Խորհուրդներ առողջ ապրելակերպի վերաբերյալ, 72, 73):

Մենք ինչպե՞ս ենք կատարում այդ սրբազան հանձնարարությունը: Մենք այն լա՞վ ենք կատարում:

Ուրբաթ ***հունիսի 28***

Հետագա ուսումնասիրության համար

«Աստված օրհնում է մարդկանց աշխատանքը, որպեսզի նրանք կարողանան Աստծուն վերադարձնել Նրան պատկանող մասը: Նա նրանց արևի լույս և անձրև է ուղարկում, Նա հողը բերրի է դարձնում, Նա մարդուն տալիս է առողջություն և գումար վաստակելու ընդունակություն: Յուրաքանչյուր օրհնություն բխում է Նրա շռայլ ձեռքից, և Նա ցանկանում է, որ ի նշան շնորհակալության՝ մարդիկ վերադարձնեն Իր բաժինը՝

տասանորդների և ընծաների՝ շնորհակալական զոհաբերությունների, կամավոր ընծաների և մեղքի համար զոհաբերությունների ձևով: Նրանք պետք է իրենց միջոցները նվիրաբերեն Նրա ծառայությանը, որպեսզի Նրա խաղողի այգին բարձիթողի չարվի՝ որպես անպտուղ անապատ: Նրանք պետք է լրջորեն խորհեն այն մասին, թե ինչ կաներ Տերը՝ իրենց փոխարեն լինելով... Աղոթքի մեջ մարդիկ պետք է պատմեն Նրան իրենց դժվարությունների մասին: Նրանք պետք է անշահախընդիր շահագրգռություն դրսևորեն աշխարհի բոլոր ծայրերում Նրա համար աշխատելիս» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 707, 708):

Հարցեր քննարկման համար

1. Ավելի շատ մտորե՛ք ամուսնության և այն մասին, թե ինչպես է այն ներկայացված Աստվածաշնչում: Քանի որ ամուսնությունն ինքնին սուրբ է, չէ՞ որ այն հիմնվել է Իր՝ Աստծո կողմից, ապա դրա խզումը թույլատրելի է միայն շատ հստակ աստվածաշնչյան ցուցումների դեպքում: Մի՞թե կարելի կլիներ ամուսնությունը սրբազան կամ կարևոր անվանել, եթե այն հնարավոր լիներ հեշտությամբ խզել: Եթե մարդիկ իրավունք ունենային ցանկացած աննշան պատճառով խզել ամուսնությունը, ապա ամուսնությունը միայն չնչին մի բան կլիներ: Ինչպե՞ս են ամուսնալուծությանը խոչընդոտող խիստ կանոնները վկայում դրա կարևորության մասին:
2. Ուշադիր կարդացեք Մաղաքիա 2.17-ը: Մենք՝ քննական դատարանի մասին ճշմարտությունն ընդունողներս, ի՞նչ կարող ենք ասել նրանց, ովքեր նույն կարծիքին են, ինչ և այն մարդիկ, ում մասին այստեղ խոսում է մարգարեն:
3. Մաղաքիա 4-ում խոսվում է ամբարիշտների վերջնական ոչնչացման մասին: Ոչինչ չի մնա: Այս ճշմարտությունն ինչպե՞ս է հակասում հավիտյան վառվող դժոխքի կրակի գաղափարին: Ինչո՞ւ է այս երկու տեսակետների միջև եղած հակասությունը ծառայում որպես լավ օրինակ այն բանի, թե ինչպես կարող է կեղծ ուսմունքը հանգեցնել Աստծո բնավորության թյուր ըմբռնման:

ՀԱՄԱՑԱՆՑԻ ՅՕԱ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՈՐՈՇ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՇԴ դասերի էլեկտրոնային տարբերակը կարող եք գտնել համացանցում (ինտերնետ), այցելելով եկեղեցու կայքը՝ www.adventist.am

ՇԴ դասարաններում քննարկելու հարցերը դուք կարող եք գտնել այցելելով www.christian7habits.blogspot.com հասցեում գտնվող բլոգը:

Ստորև ներկայացվող ռեսուրսներում Դուք կարող եք գտնել այլ նյութեր ևս:

adventist.am - ՅՕԱ եկեղեցու Հայաստանի միության կայք

elpidos.narod.ru - ՀՄ ՇԴԱԾ բաժնի կայք (այս կայքը չի թարմացվում)

christian7habits.blogspot.com - հովիվ Պավել Սարգսյանի բլոգ: Այս բլոգում կարող եք գտնել նաև այլ գործընկերների կայքերի հասցեներ:

studymybible.blogspot.com - Աստվածաշնչյան դպրոց

depihaverzh.blogspot.com - հոգևոր բլոգ «Դեպի Հավերժը»

www.facebook.com/eskristonyaem - Ֆեյսբուքյան էջ «Ես քրիստոնյա եմ»

www.facebook.com/pnevmatos - Ֆեյսբուքյան էջ «Դեպի Հավերժը»

Շաբաթօրյա դպրոցի Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ
2013 թվականի երկրորդ եռամսյակ

ՄԵԾԱՄԵԾ ԴԱՍԵՐ ՓՈՔՐ ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻՑ

Զդրավկո Ստեֆանովիչ

Գլխավոր խմբագիր՝ Պավել Սարգսյան
Թարգմանությունը և համակարգչային շարվածքը՝ Մերինե Աթոյան
Վերստուգող՝ Հովհաննես Մխիթարյան
Գրական խմբագիր՝ Ալվարդ Մաղոյան
Համակարգչային ձևավորող՝ Կորյուն Կակոյան